


2010



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### Հատուցման պահանջը գործնական հունի մէջ տեղադրելու հրամայականը

Հայկական Ցեղասպանութեան 95-ամեակի սեմին, հայ ժողովուրդի բոլոր հաստատածներուն դիմաց այսօր գրուած է համար կը յիշատակեն փրոթոքուներուն գծով «տրամաբանող» մախմբուելու եւ վերակազմակերպուելու հրամայականը: Այս եւ «չտրամաբանող» հայկերու դասակարգերը:

Հայութիւնը պառակտելու թրքական մարտավարութիւնը ջատիրութեան երթը կասեցնելու եւ արգելակելու համար, սորութիւն չէ. սակայն մտահոգութիւն կ'առթէ հայկական թրքական կողմի խարդաւանանքները օրբասորք կը բազմանան: կողմի գիւրահաւանութիւնը նման պառակտումի փորձութիւնը մէջ յայ-թրքական արձանագրութիւններու (փրոթոքուներ) թեանց դիմաց ընկրկելու եւ տեղի տալու: իրողութիւնը այն սկզբանական հանգրուանի դիւանագիտական արարողութենէն է, որ փրոթոքուներու ստորագրութեան յաջորդող ժամանակաբար ներկայ արարը կը յատկանշութէ անել կացութեան առաջական գահատուածին, յատակ դարձաւ, որ փրոթոքուներու գործընկայութեամբ, ուր Անգարայի ճշգած նախապայմանները՝ թացը խոչընդուռ ու պատուհաս պիտի գառնայ հայ ժողովուրանիրագործելի կը գարձնեն հայ-թրքական դիւանագիտական դիմացանջատիրութեան:

Հայ-թրքական արձանագրութիւններու փեանց դիմաց ընկրկելու եւ տեղի տալու: իրողութիւնը այն սկզբանական հանգրուանի դիւանագիտական արարողութենէն է, որ փրոթոքուներու ստորագրութեան յաջորդող ժամանակաբար ներկայ արարը կը յատկանշութէ անել կացութեան առաջական գահատուածին, յատակ դարձաւ, որ փրոթոքուներու գործընկայութեամբ, ուր Անգարայի ճշգած նախապայմանները՝ թացը խոչընդուռ ու պատուհաս պիտի գառնայ հայ ժողովուրանիրագործելի կը գարձնեն հայ-թրքական դիւանագիտական դիմացանջատիրութեան:

բնական յարաբերութիւններ հաստատելու փորձը:

1948 Դեկտեմբեր 9-ին Միացեալ Ազգերու կազմակերպութիւնը մէջ, Հայաստանի վերանկախացումէն ի վեր, թիւնը հաստատեց Ցեղասպանութեանց կանխարգիման, դաժուրքիա միշտ փորձած է պարտագրել քաղաքական իր նաւապարտում եւ պատուածինութեան բանաձեւը: 1968-ի նոյեմբերապայմանները: Իսկ երբ այդ պայմանները կը վերաբերին բեր 21-ին, նոյն այդ բանաձեւին վրայ կատարուած յաւելուայժմու աշխարհագրական սահմաններու ճանաչման, Արցամը մը կը հաստատագրէ, որ ցեղասպանութիւնը որպէս ծանրախի հարցով ուազմաքաղաքական զիշումներու եւ Հայկական գոյն պատիճ՝ վաղնջական ժամկէտ չունի:

Ցեղասպանութեան պատմական հիմքը թէականացնելու հարցուն պարզ կը գառնայ, որ նման պարագաներու տակ, քաղաքակիրթ դիւանագիտական յարաբերութիւններ հաստագար գոյութիւն չունին հոգեբանական, մշակութայի համար գոյութիւն նոր սուրը պիտի գառնայ՝ հատուցումը: յին, իրաւական, քաղաքական եւ տնտեսական յատակ տուրքուն պարագաները կը գրանցան կամաց համար գոյութիւնը: Անցեալին թէ այսօր, հայութեան համար ժողովուրդի ազգային անվասանութիւնը:

Վերոնշեալ միջազգային իրաւական օրինագիծի բովանդացերուն պարզ կը գառնայ, որ նման պարագաներու տակ, քաղաքակիրթ դիւանագիտական յարաբերութիւններ հաստագար գոյութիւն նոր սուրը պիտի գառնայ՝ հատուցումը: յին, իրաւական, քաղաքական եւ տնտեսական յատակ տուրքուն պարագաները կը գրանցան կամաց համար գոյութիւնը: Անցեալին թէ այսօր, հայութեան համար ժողովուրդի ազգային անվասանութիւնը:

1895-1923 երեք տասնամեակներու վրայ երկարու ցեղաջնիւթիւնը հայութեան յանձնաժողութեան տեղահանութեանց եւ տարագրութիւնը հայութեան յանձնաժողութիւնները: Առաջինին պարագային, փորձ կատար կը հանդիսանայ հայութիւնէն բոնագրաւուած հողերու, տառեցաւ Հայկական Ցեղասպանութեան հարցը տեղափոխել բածքներու եւ կալուածներու իրաւատիրոջ վերագրձը, որպէս պատմական ուսումնասիրութիւններու քննարկման հարթակ հետեւ, ի վերջոյ, հայութիւնը ոչ միայն ցեղասպանութեան ենեւ հայութեան եւ միջազգային հանրութեան համոզել, որ թարկուած է, այլեւ՝ պարտադրաբար հայրենազրկուած է:

«պատմութիւնը պէտք է թողու պատմաբաններուն»: Երկրորդ Առ այդ, ի մի բերելով վերոնշեալ բոլոր նախագրեալները, դին պարագային, առաջարուած նախագիծը արդէն իսկ ճեղ-

- այսօր, աւելի քան անհրաժեշտ կը գառնայ հայութեան բոլոր քեր բացած է փրոթոքուներուն «թեր» եւ անոնց «դէմ» հատուածներու վերակազմակերպումը եւ զանոնք Թուրքիայատանեան եւ սիրութեան զանազան հատուածներու միջեւ: յէն հատուցում պահանջելու հասարակաց նպատակին շուրջ Այս առնչութեամբ, թրքական իշխանութեան վերանախաւի համախմբելու հրամայականը:

### Բովանդակութիւն - Contents

- ՊԱՀԱՆՁԱՏԻՐԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ՀԻՄՆԱԴԻՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ, Էջ 2
- Խ. Տէր Ղուկասեան
- Պէտք է փոխել շեշտագրումը, Էջ 6
- Արա Պապեան
- Հայոց Ցեղասպանութեան ժամանակագրութիւն, Էջ 8
- ԹՐՔԱԿԱՆ ԺԵՏՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Էջ 21
- ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ
- Շողիկէն շողիկն հասանք, Էջ 24
- Վերէծ-Արմէն
- ԹՈՒՐՔԻ ԲՃԻՇԿԻՆԵՐՈՒ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ 8ԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ Մէջ, Էջ 25

Տոփքի Կարպատ Հարավոյնան

- 8 Փետրուար, 1915-ին, Երիտրուրքերը որոշեցին գործադրել հայ ժողովուրդի բնաջնջման ցեղասպանական ծրագրելը, Էջ 30
- Ն. Պէրպէրեան
- Սաւանյ Զարգը, Էջ 32
- «ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ» ՆԻՒԹԸ ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԱՂԲԻՒՐՆԵՐ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՎՐԱՅ, Էջ 36

- Diyarbekir (1915-1916): Young Turk Mass Killings, page 41  
Uğur Ümit Üngör

Կողքի լուսանկարը՝ Վազգէն Տէկիրմէնքաշի.  
Վանայ լինի Ախրամար կզիին վրայ բանդուած հնադարեան խաչքար

## ՊԱՀԱՆՁԱՏԻՐԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ՀԻՄՆԱԴՐՈՅՑԵՐԸ

**Հայոց Ցեղասպանութիւնը, առաջինը քսաներորդ դարուն եւ իր պետական ոճիրի բնոյթով, եւ Աղէտին մտածուած, նախատեսուած եւ մանաւանդ ուզուած ծաւալով, յատկանչուեցաւ, ինչպէս ծանօթ է, յիսուն տարիներու «մոռացում»ով։ Անոր միջազգային տեսանելիութիւնը ապահովողը եղաւ Սփիւռքը՝ 1965-ին սկսած իր զօրաշարժով։ Հայրենի հայութիւնը, որ եթէ ոչ ճակատագրական, առնուածով՝ յատկանչական զուգագիպութեամբ նոյն թուականին էր որ Մեծ Եղեռնի յիսունամեակի առիթով հողային արդարահատոյցի պահանջատիրական պոռթիկումով - երեւանի փողոցներուն մէջ հնչած «Մեր հողերը, մեր հողերը» կանչով, հրապարակ ելաւ եւ ունեցաւ անշուշտ իր բաժինը Ցեղասպանութեան միջազգային տեսանելիութիւն տալու այս հողովոյթին մէջ։ Բայց Հայրենի հայութեան այս իմաստով գերակատարութիւնը շատ հասկնալիօրէն իրականացաւ եւ սահմանափակուեցաւ խորհրդային ոլորտին մէջ։ Խորհրդային Հայաստանի դիւանագէտները, քաղաքական անձնաւորութիւնները եւ այն օրերուն հայրենի իրականութեան մէջ այնքան իւրայատուկ տեղ ունեցող մտաւորականները, միջազգային բներէն ազատօչն ելոյթ ունենալու իրաւունք չունէին, բացի եթէ որոշէին բռնել այլախոհութեան ճամբան եւ անոր գինը վճարէին հիմնականօրէն գուրս մնալով իրենց բնական ոլորտին։ Իսկ Մոսկուայի շահերը գեռեւս Լենինին օրերէն այս հարցով շատ աւելի վերապահ, չըսելու համար թէկուզ եւ անուղղակիուչն, թրքական ժիտումի քաղաքականութեան շատ աւելի մօտ էին քան՝ Հայոց Ցեղասպանութեան պաշտօնական ճանաչում տալու նոյնիսկ լոկ բարոյական դրդապատճուղ արդարացուած նախանձախնդրութեան։**

Ի դէպ, փակագիծ մը բանալով, եթէ Մոսկուա օրին պաշտօնապէս ճանչչած ըլլար Հայոց Ցեղասպանութիւնը եւ այն պարտադրած ըլլար բոլոր հանրապետութիւններուն, ներառեալ Աստրականին, պատմութիւնը այսօր անշուշտ տարբեր կ'ըլլար։ Խորհրդային Միութեան օրերուն Հայոց Ցեղասպանութեան պաշտօնական ճանաչման մերժումի հետեւանք է Քրեմլի ներկայ վարքագիծը թուրքիոյ նկատմամբ, որ հակառակ Տումայի կողմէ Ցեղասպանութեան ճանաչման, այնքան ալ չէ փոխուած անցեալէն։ Մոսկուայի համար անընդունելի կրնայ ըլլալ թրքական մասնակցութիւնը արցախեան հիմնահարցի լուծումի հողովոյթին, այնպէս ինչպէս Լավոնով եւ Փութին յստակօրէն հրապարակային կերպով յայտարարեցին եւ պատգամը ուղղակիորէն փոխանցեցին Էրտողանին անցեալ Յունուարին, բայց Քրեմլի համար իսկապէս խնդիր չէ եթէ հայթրքական մերձեցումը ուղղակի կամ անուղղակիորէն լուութիւն պարտադրէ Հայոց Ցեղասպանութեան հարցին։ Աւելի կարեւոր կը թուի այդ մերձեցման անդրադարձը տարածաշըջանին մէջ անտեսական մեկա-ծրագիրներուն ինչպիսին է բնական կազի արտահանումին համար նախատեսուելիք ապագայ կազմատարերու ճանապարհի ապահովումը կամ թուրքիան ներգրաւելու աշխարհագրագական շահը։ Փակագիծը փակենք։

Թէ հայրենի հայութեան իւրայատուկ զօրաշարժը էական եղաւ եւ Ցեղասպանութիւնը հայկական եւ թրքական ազգայնամոլութեան հետեւանք հաշուող սթալինեան պատմագրութիւնն ու անոր տարբերակները սրբագրելու, եւ հայրենի ժողովուրդին ազգային յիշողութեան վերաթարմացման, եւ, ձոն Կիրակոսեաններու օրինակով, խորհրդային պատմաբանութեան, ի մասնաւորի ազերիական մեկնաբանութեան, մէջ դիրք ծշգելու եռեակ իմաստով՝ այդ մասին ոչ մէկ կասկած։ Աւելին, հայրենի հայութեան պահանջարական զօրաշարժի պատմութիւնն ու անոր արժեւորումը գեռեւս լիովին չէ կատարուած, եւ աւելի քան հաւանական է, որ այդ արժեւորման լոյսին տակ Հայոց Ցեղասպանութեան միջազգային տեսանելիութեան հողովոյթը նոր մեկնաբանութեան անհրաժեշտութիւնը յուշէ։

Բայց 1965-1985/87 մօտ քսանամեայ սփիւռքեան զօրաշարժն էր, որ իր տարբեր հանգրուաններով եւ պայքարի միջոցներով, Հայոց Ցեղասպանութիւնը բերաւ միջազգային քաղաքականութեան ուշադրութեան կերպոն։ Այդ զօրաշարժը ունէր բնականաբար առաջին, եւ հիմնականօրէն ներ-սփիւռքեան, սոցիալական գործոն մը, որ երրորդ սերունդի զարթօնքն էր։ Թէ ինչո՞ւ եւ ինչպէս Ցեղասպանութեան յիսունամեակին աշխարհագրականօրէն իրարմէ այնքան հեռու եւ տակաւին Սիջին Արեւելքէն Արեւմուտք մասսայական տեղաշարժի ազգեցութիւնը չապրած համայնքներ բոլորը գրեթէ անխտիր որոշեցին ճանաչումի եւ հատուցման պահանջով փողոց ելլել ինքնին բարացարացական է Սփիւռքի մէջ ազգային ինքնազիտակցութեան մէկ եւ միակ պատումի մը առկայութեան, որ իրարու մօտ բերած էր մշակութային իմաստով արդէն իրարմէ տարբեր հայ հաւաքականութիւններ, որոնց կը միացնէր, ազգային ինքնութիւնն կու տար նախ եւ առաջ Ցեղասպանութեան արդարութեան պահանջատիրութիւնը։ Անշուշտ, կար Սփիւռքով մէկ կազմակերպուած հայ երեք քաղաքական կուսակցութիւններու գործոնը, բայց հոն ալ վերոյիշեալ վարկածը ի զօրու կը մնայ։ Արդարեւ, տակաւին մօտիկ անցեալին, եւ հետեւելով Պաղ Պատերազմէն շատ աւելի առաջ հայութիւնը բաժնած խորհրդային եւ հակա-խորհրդային արտասովորօրէն գաղաքարախօսական պառակտումի տրամաբանութեամբ, այդ երեք կուսակցութիւնները շատ աւելի իրարու գրեթէ կը պայքարէին՝ համայնքներու վրայ իրենց ղեկավարութիւնը հաստատագրելու համար քան կը համագործակցէին համահայկական հարցերով։ Ինչպէս պատահեցաւ, ուրեմն, որ յանկարծ Մեծ Եղեռնի յիսունամեակին մէջտեղ ելաւ իրարու միացնող ազգակը եթէ այն, ի հեծուկս բոլոր պայքարներուն, չէր արմատաւորուած երեք կուսակցութիւններու գոյութեան իմաստին մէջ իսկ։

Բայց սփիւռքեան զօրաշարժը նաեւ արդիւնք էր միջազգային բեմահարթակի օրուայ զարգացումներու ազգեցութեան, ներշնչումին եւ անոնց դասերուն։ Անոնց կարգին՝ Երբորդ Աշխարհի ազատագրական շարժումներու յաջողութիւնները, մարդկային եւ հասարակական իրա-



ւանց պաշտպանութեան սոցիալական շարժումներու յառաջընթացը, ուսանողութեան գօրաշարժը, պետականացուրկ ժողովուրդներու մարտահրաւէրը աշխարհի հզօր պետութիւններուն, հրէական Ողջակիզման պարտադրած միջազգային յանձնառութիւնը եւ Արեւմտեան ժողովրդավարութիւններուն թոյլ տուած քաղաքական դորձունէութեան արդիւնաւէտութեան անդրադարձը:

Հետեւաբար, սիսալ չէ Հայոց Յեղասպանութեան արդարահատոյցի պահանջատիրութեամբ յատկանչուած սփիւռքեան գօրաշարժը մեկնաբանել որպէս՝ համաշխարհայնացման երեւոյթ նոյն այդ հողովոյթի ընթացաւորումէն աւելի քան տասնամեակ մը առաջ: Եւ այնքան ալ զարմանալի պէտք չէ թուի այս եթէ նկատի ունենանք, որ Սփիւռքը ինք առարկայականորէն գլոբալ բնոյթի է, հակառակ որ ամբողջ իր գոյութենական արդարացումը հիմնուած է «վերադարձ»ի միթոսին վրայ: Անշուշտ, այդ միթոսը ինք հետևանք է Յեղասպանութեան եւ պարտազիր աքսորի, եւ որպէս այդպիսին միշտ ալ ունեցած ու պահպանած է իր գօրաշարժային կարողականութիւնը, եղած է ոչալ ուժ եւ ոչ թէ ֆիքցիա: Աւելի՞ն, այդ միթոսին գերակայութիւնը այնքան տիրական եղած է, որ երբ համաշխարհայնացման ոլորտը 1990-ականներուն ստեղծեց Սփիւռքի անդրագույնացման պայմանները, որոնք առիթ պիտի տային աշխարհացրիւ համայնքներէն առաջացնել գլոբալ ցանց մը եւ աշխատիլ այդ տրամաբանութեամբ, գերակշիռ եղաւ Հայաստան/Սփիւռքի կամ տունդարձ թէ Սփիւռքի ինքնահաստատում բանավէ-

ճերը: Պարզ է, որ նորանկախ հայրենիքի օրուայ պայմանները եւ առաջին ղեկավարները չօգնեցին Սփիւռքի նորացման, բայց ոչ միայն կամ առաւելաբար այդ պատճառով է, որ այսօր պէտք է գիտակցիլ այդ բոլոր բանավէճերու ապարդիւնութեան: Իրողութիւնն այն է, որ համաշխարհայնացման պայմաններուն մէջ հայ քաղաքական մտածողութիւնը չկրցաւ որակական սստում մը տալ եւ վերամտածել Սփիւռքը որպէս անդրագույն քաղաքացիական հասարակարդ, որուն տրամաբանութեամբ ալ պիտի վերասահմանուէր եւ Յեղասպանութեան պահանջատիրութիւնը, եւ Հայաստանի հետ յարաբերութիւնները, եւ մինչեւ իսկ հայրենագարձութիւնը: Ճիշդ է, որ վարչապետ Տիգրան Սարգսեան այսօր կը փորձէ Հայաստանի պետական քաղաքականութիւնը մտածել յետ-ճարտարարութական հասարակաբերութիւնը: Ճիշդ է, որ մտածութեամբ եւ կը խօսի «Հայաշխարհ»ի մասին, սակայն այդ մտածողութեան արմատները շատ աւելի ազատ-շուկայական տնտեսութեան արամաբանութեան մէջ կը ձգուին եւ շատ հաւանաբար ան աւելի կը մտածէ Հայաստանէն արտագաղթի հետեւանքով կազմաւորուած «Հայաշխարհ»ին մասին: Մինչդեռ հայ քաղաքական մտածողութիւնը Սփիւռքի գոյավիճակի մեկնակէտէն պիտի ընթացք առնէր իրականացնելու համար անհրաժեշտ նորացումը, որով եւ թերեւս առաջքը առնուէր աշխարհացրիւ համայնքներու ներկայի տեղայնացման, եթէ ոչ ինքնամփոփման ու մեկուսացման:

Սփիւռքի մէջ հայ քաղաքական մտածողութեան



նորացման բացակայութիւնն է հաւանաբար պատճառը անոր, որ հակառակ անցնող տասնամեակին Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման հսկայ յառաջխաղացքին, նախագահ Սերժ Սարգսեանի «Փութպոլային դիւանագիտութիւնը» ինքնին բաւարար եղաւ, որ Հայ Դատի ամբողջ ձեռքբերումները յանկարծ դէմ յանդիման գտնուէին մեծ կորոստի, գրեթէ իրենց մեկնակէտին վերադառնալու վտանգին: Ճիշդ է, Սփիւռքի պոռթկումը փրոթոքուներուն դէմ եւ Նախագահին ուղղուած «Ռէ, հազար անգամ ո՛չ»ը շատ հաւանաբար իրենց գերը ունեցան գոնէ Հայաստանի պետական այրերուն ուշադրութիւնը հրաւրելու իրենց տուած քայլի ներազային մեծ վնասին վրայ: Բայց նոյն այդ «Փութպոլային դիւանագիտութեան» իրողութիւնը եկաւ ցոյց տալու աւելի քան ինչ Սփիւռքի մէջ ծաւալած Հայ Դատի պայքարը արդէն հասկցած էր. Յեղասպանութեան հարցը միջազգային օրակարգի կու գայ միայն երբ անոր ետին կանգնած ըլլայ պետութիւն մը, որովհետեւ միջազգային բեմահարթակին վրայ ոչ-պետական դերակատարութիւնը, հակառակ համաշխարհայնացման պայմաններուն մէջ արձանագրուած մեծ յառաջընթացին, ունի լուրջ սահմանափակումներ: Տակալի՛ն, որքան ալ որ Յեղասպանութեան ճշմարտութեան մասին տարբերութիւն չի կրնար ըլլալ հայ պետական այրին, թէկուզ եւ այդ հարցը պատմաբաններուն ձգել ուղող Լեւոն Տէր Պետրոսեան ըլլայ ան, շարքային քաղաքացիի կամ սփիւռքահայու միջեւ, անխուսափելիօրէն կայ պետական տրամաբանութիւն մը, որուն անհրաժեշտ է դիւանագիտական ճկունութիւն, որ չունենալու պերճանքն ու մարտափարական առաւելութիւնը կրնայ ունենալ Սփիւռքի նման ոչ-պետական դերակատար մը: Այս իմաստով, Սփիւռքի մէջ հայ քաղաքական մտածողութեան նորացումը, ենթահողը արդէն պատրաստած պէտք է ըլլար Հայաստանի անկախացումով Յեղասպանութեան արդարահատոյի պահանջատիրութեամբ այսպէս կոչուած «Թրաք 2» դիւանագիտութիւն մը ծաւալելու, համաձայնաբար Հայաստանի պաշտօնական դիւանագիտութեան հետ:

Այս հեռանկարը ցոնորք չէ: Սփիւռքի մէջ հայ քաղաքական մտածողութիւնը կրնայ՝ այդ որակական քայլը տալ, ունի անհրաժեշտ կարողականութիւնը: Բայց նման նախանձախնդրութիւն կրնայ իմաստաւորութիւն միայն եթէ համապատասխան պահանջատիրական դիւանագիտու-

թիւն մը ձեւ առնէ եւ գործնականացուի պետական մակարդակով:

«Պահանջատիրական դիւանագիտութիւն» յղացքն ինքնին կրնայ հակասական կամ անհեթեթ թուլի: Մասնաւորաբար երբ Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը նման տեսական ձեւալորում եւ գործնական ընթացք ոչ միայն չէ առած, այլ ուղղակի թէ անուղղակիօրէն այն մերժած է եւ նոյնիսկ համարած է արկածախնդրութիւն: Արդարեւ, Հայաստանի անկախացման առաջին տարիներուն, ինչպէս ծանօթ է, Լեւոն Տէր Պետրոսեանի արտաքին քաղաքականութիւնը բացառեց իր օրակարգին առնել Յեղասպանութիւն հարցը: Այն ժամանակ «Գնացքէն գուրս թռչելու ժամանակն է», «Երրորդ ուժի բացառման», «Մեզ միայն պղակմատիզմ է պէտք», «պետական մասածողութիւն» ընդգէմ «Հայ դատականութիւն» եւ նման կարգախոսերով ու պետական քաղաքականութեան տեսութիւններու փորձերով յատկանշուած ՀՀ-ական կառավարութիւնը հասաւ մինչեւ իսկ Յեղասպանութեան արդարահատոյիցի հարցով թէր կամ դէմ ըլլալուն մէջ, Սփիւռքի եւ Հայաստանի երկու տարբեր ազգային ինքնութիւններու սահմանելու փորձութեան: Առանց այս երեւոյթի վերլուծման մանրամասնութեանց մէջ մտնելու կարելի է ըսել, որ Տէր Պետրոսեանական իշխանակարգի ամենամեծ յաջորդութիւնը՝ թուրքիոյ հետ առանց նախապայմաններու յարաբերութեան սկզբունքը Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգին հաստատագրելը եղաւ: Եւ իրողութիւնն այն է, որ հակառակ 1998-էն ետք Յեղասպանութիւնը Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգին անցաւ «առանց նախապայմաններու յարաբերութեան» սկզբունքին թակարգը մնաց հոն: Աւելի՛ն, հակառակ որ Քոչարեանի նախագահութեան տասնամեակին այրելու իրենց տուած քայլի ներազային մեծ վնասին վրայ: Բայց նոյն այդ «Փութպոլային դիւանագիտութեան» իրողութիւնը եկաւ ցոյց տալու աւելի քան ինչ Սփիւռքի մէջ ծաւալած Հայ Դատի պայքարը արդէն հասկցած էր. Յեղասպանութիւնը երբ անոր ետին կանգնած ըլլայ պետութիւն մը, որովհետեւ միջազգային բեմահարթակին վրայ ոչ-պետական դերակատարութիւնը, հակառակ համաշխարհայնացման պայմաններուն մէջ արձանագրուած մեծ յառաջընթացին, ունի լուրջ սահմանափակումներ: Տակալի՛ն, որքան ալ որ Յեղասպանութեան ճշմարտութեան մասին տարբերութիւն չի կրնար ըլլալ հայ պետական այրին, թէկուզ եւ այդ հարցը պատմաբաններուն ձգել ուղող Լեւոն Տէր Պետրոսեան ըլլայ ան, շարքային քաղաքացիի կու գայ միայն երբ իմաստով, նոյնի լուրջ սահմանափակումները: Տակալի՛ն, որքան ալ որ Յեղասպանութեան ճշմարտութեան մասին տարբերութիւնը այսպէս կոչուած է՝ թէկուզ եւ տարբեր սահմանումով եւ արդարացումով, վերադարձ կատարէ դէպի Տէր Պետրոսեանական արտաքին քաղաքականութիւնն:

Անցնող տարուան ընթացքին Փրոթոքուներու արկածախնդրութիւնը եկաւ ցոյց տալու, թէ թուրքիա պատրաստ չէ առանց նախապայմանի Հայաստանի հետ յարաբերութիւնները բնականոնացնել: Պէտք է ըսել որ մանաւանդ ընթացիկ տարուայ Յունուարէն ի վեր միջազգային հանրային կարծիքին համար քիչ կասկած մնաց որ իրականութեան մէջ թուրքիան է որ պատրաստ չէ ընդառաջ երթալու «առանց նախապայմաններու» որովհետեւ ունի, ինչպէս միշտ ունեցած է, երեք ծանօթ նախապայմաններ. Յեղասպանութեան հարցի պահանջատիրութեամբ այսպէս կոչուած «Թրաք 2» դիւանագիտութիւնը ստուգելու կոչուած յանձնաժողովներու առաջացումն է: Այս պայմաններուն մէջ, ճիշդ է, հայկական դիւանագիտութիւնը առաւելութիւն կրնայ ունենալ եթէ պահէ առանց նախապայմաններու յարաբերութիւններ»ու սկզբունքը, որուն վրայ կը պնդեն նաեւ հայ-թրաքական մերձեցումը հովանաւորութիւն մէծ պետութիւնները: Մակայն յստակ պէտք է ըլլայ նման կեց-



ուածքի գուտ մարտավարական բնոյթը, որովհետեւ Հայստանի համար, ընդհակառակը, անհրաժեշտ է ծաւալել պահանջատիրական դիւանագիտութիւն, ինչ որ կը նշանակէ գործնական իմաստ տալ Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգին գտնուող Ցեղասպանութեան հիմնախնդրին:

Նման յղացք հակասութիւն չ'ենթագրեր ինքնիր մէջ, եթէ հիմնաւորուած ըլլայ համապատասխան տեսութեամբ եւ ծնունդ տայ դիւանագիտական ե՛ւ վարքագծի, ե՛ւ ակտիւիզմի: Պահանջատիրական դիւանագիտութեան տեսութիւնը ունի երեք հիմնադրոյթ. ազգային անվտանգութիւն, միջազգային յանձնառութիւն եւ ներազգային միասնութիւն: Երեք հիմնադրոյթներն ալ կ'ենթագրեն քաղաքական տարբեր ծրագիրներ ու գործընթացներ, որոնք իրարու հետ ունենան անհրաժեշտ փոխ-ազգեցութիւն: Առաջին հիմնադրոյթը արդէն արձանագրուած է Հայաստանի ազգային անվտանգութեան դոկտրինային մէջ, եւ նոյնինքն նախազահ Սարգսեան, երբ տակաւին վարչապետ էր, այդ մասին քանի մը առիթով արտայատուած է: Դիւանագիտութեան համար այս հիմնադրոյթը կը նշանակէ դէմ յանդիման օտար պետութիւններու ճնշումին արծարծել ազգային անվտանգութեան խնդիրը, որուն դէմ երաշխիք կրնայ ըլլալ Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը: Երկրորդ հիմնադրոյթը կը վերաբերի ցե-

ղասպանութեան կանխարգիման միջազգային գործընթացներուն մէջ Հայաստանի նախաձեռնող ներկայութեան անհրաժեշտութեան: Նման ակտիւ դիւանագիտութիւն, որ, ի մէջ այլոց, պիտի նշանակէ Հայաստանի դեսպանատուներու ակտիւ միջամտութիւնը՝ կասեցնելու համար թրքական մխտումի քաղաքականութիւնը, ոչ միայն Հայաստանի բարոյական ինքնութիւնն մը կու տայ, այլ թերեւս միակ խաղաքարտն է, որով երեւան կրնայ իր տեղը գրաւել գլուխ քաղաքականութեան մէջ: Եղրորդ հիմնադրոյթը՝ վերջապէս, Վարդան Օսկանեանի կոմպլեմենտար արտաքին քաղաքականութիւնը կը վերասահմանէ Հայաստան-Սփիւռք հարթակին վրայ: Նման կոմպլեմենտարութիւն, ահաւասիկ, որ երբեք ծրագրուած եւ շարունակական բնոյթ չէ ունեցած, կեանք եւ իմաստ կրնայ տալ սփիւռքեան պահանջատիրութեան «Թրաք 2» դիւանագիտութեան երկու իմաստով: Նախ իր ընթացիկ հասկացողութեամբ՝ որպէս ոչ-կառավարական կազմակերպութեան նախաձեռնութիւն, ապա որպէս համահայկական ու պետականօրէն ծրագրուած պահանջատիրական դիւանագիտութեան գուգահեռուղի:

Խ. ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

## Պետք է փոխել շեշտադրումը

**Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը նպատա՞կ է, թէ միջոց:**

Վստահաբար մեծամասնութիւնն անվարան կը պատասխանի՝ միջոց։ Հետեւաբար, քանի որ ցեղասպանութեան ճանաչումն ինքնանպատակ չէ, ուստի ցանկացած ցեղասպանութեան ժխտման հակառակը ցեղասպանութեան պարզ ճանաչումը չէ, այլ՝ ճանաչման միջոցով յանցագործի պատիքը (մեր դէպքում թէկուգեւ բարոյական) եւ զոհի իրաւունքների (այդ թուում նաեւ գոյքային) հնարաւորինս վերականգնումը։ Կարող է արդեօ՞ք ցեղասպանութեան ճանաչումը վերահաստատել արդարութիւնը, քանի դեռ յանցագործը կամ նրա սերունդները շարունակելու են վայելել յանցագործութեան պտուղները։ Ընդ որում, յանցագործութեան պտուղները վայելող սերունդները ոչ թէ յանցագործների պարզ յետնորդներ են, այլեւ յանցակիցները։ Այսու, անհրաժեշտութիւն է առաջանում անդրադառնալ որոշ հարցերի։

1.- Արդեօ՞ք Հայաստանի Հանրապետութեան տարածքային եւ Հայերի գոյքային իրաւունքները, ինչպէս նաեւ բարոյական կորուստները, կարող են վերականգնուել միայն Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ճանապարհով, թէ՞ կայ այլ ուղի եւս։

2.- Ի՞նչ ձաւալի իրաւունքների եւ գոյքի մասին է խօսքը։

1.- Ցեղասպանութիւնը մարդկայնութեան դէմուղղուած յանցագործութեան տարատեսակն է։ Թերեւս ամենածանր տարատեսակն է, բայց եւայնպէս, պատասխանատուութեան առումով այն համարժէք է նմանաբնոյթ միւս յանցագործութիւններին։ Միջազգային իրաւունքը յստակօրէն ամրագրել է, որ «բնաշնչումը, ստրկացումը, աքսորը, եւ որեւէ քաղաքացիական բնակչութեան դէմ իրականացուած այլ անմարդկային արարքները պատերազմից առաջ կամ ընթացքում» հանդիսանում են յանցագործութիւններ մարդկայնութեան դէմ։ Անվիճելի իրողութիւն է. թուրքերը ժխտելով Հայոց Ցեղասպանութիւնը, ընդունում են, որ իրենց նախնիներն Օսմանեան կայսրութեան հայազգի քաղաքցիական բնակչութեան աքսորել են։

Պահպանուել է Օսմանեան կայսրութեան այն օրէնքը (Tehcir Law), որի հիման վրայ իրականացուել է Հայերի աքսորը։ Օրէնքն ընդունուել է Օսմանեան խորհրդարանի կողմից 1915թ. Մայիսի 27-ին եւ ուժի մէջ է մտել Թաքվիմ-ի վեքայի պաշտօնաթերթում 1915թ. Յունիսի 1-ին տպագրուելուց յետոյ։ Օրէնքի ամբողջական անուանում է. «պատերազմական իրավիճակի եւ հրատապ քաղաքական անհրաժեշտութեան պատճառով այլ վայրեր աքսուուղուող հայերի տարաբնակեցման կարգ»։

Այսաեղ անհրաժեշտ է ընդգծել, որ որեւէ պատճառաբանութիւն կամ պատրուակ աքսորն իրականացրած պետութեանը, որը գործել է յանցագործ իշխանութեան միջոցով, չի պատառմ պատասխանատուութիւնից եւ տուժողներին համարժէք հատուցում տալու պարտաւորութիւնից։ Հայերի պարագային, թրքական պետութեան յանցանքը բարդանում է նաեւ նրանով, որ աքսորի ժամանակ պե-

տութիւնը յստակ քաղաքականութիւն է իրականացրել աքսորեալների մէջ մահացու ելքերը շատացնելու համար։

2.- Հայութեան իրաւունքների եւ սեփականութեան հարցն ունի երեք մակարդակ. ազգային կամ պետական, համայնքային կամ կազմակերպուած խմբերի, անհատական կամ մասնաւոր։ Առաջին դէպքում ամէն ինչ յստակ՝ կայ կատարման համար պարտազիր միջազգային վճիռ, որով յստակեցուած է Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի սահմանը։ Հայաստանի Հանրապետութեան հողային իրաւունքների մասին, որոնք խարսխուած են առաջին հերթին ԱՄՆ նախագահ Վիլսոնի 1920թ. նոյեմբերի 22-ի իրաւարար վճոփ վրայ, առիթներ ունեցել եմ հանդէս գալու, ուստի դրան այսօր չեմ անդրադառնայ։

Առանց ժխտելու Հայոց Ցեղասպանութեան հնարաւորինս լայն ճանաչման քաղաքական անհրաժեշտութիւնը, հարկ է նշել, որ իրաւական տեսանկիւնից Հայաստանի Հանրապետութեան տիտղոսի, այն է հողային իրաւունքների վերականգնման, տեսանկիւնից Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցը բնաւ նախապայման չէ։ Հայաստանի Հանրապետութեան տարածքային իրաւունքները ճանաչուած են ցեղասպանութեան իրողութիւնից անկախաբար։ Հայութեան համայնքային եւ անհատական գոյքային իրաւունքների վերականգնման համար ցեղասպանութեան ճանաչման հարցը նոյնպէս բնաւ նախապայման չէ։ Այս հարցի կապակցութեամբ անհրաժեշտ է անել մի յստակեցում։ Հայերից ապօրինի բոնագրաւուած գոյքի հարցում չի գործում որեւէ ժամանակային սահմանափակում, քանի որ օրինախախտումն ունի շարունակական բնոյթ։ Բոլոր այն դէպքերում, երբ գոյքը բոնագրաւուել է առանց համարժէք հատուցման, այսինքն՝ օրինախախտմամբ, ապա ներկայ տնօրինումը չի կարող օրինական իրաւատիրութեան հիմք հանդիսանալ։

Հայերից ապօրինի բոնագրաւուած գոյքի գնահատման հարցը բարդ ինդիք է։ Զնայած կատարուած որոշակի աշխատանքին, մեր պատկերացումները տուեալ հարցի վերաբերեալ գեռեւս խիստ հատուածական են։ Օրինակ, միայն 1916թ. Պերլինի Ռեյխսխապանքին (ReichsBank) Օսմանեան կայսրութիւնից փոխանցած 33 տոննա ոսկու (ներկայ գներով աւելի քան մէկ միլիարդ ԱՄՆ դոլար) մեծ մասը, թերեւս ամբողջութեամբ, ապօրինի բոնագրաւուել էր հայերից։ Առ այսօր Թուրքիան չի բացայացել Օսմանեան կայսրութեան զանազան պանքերում, ինչպէս նաեւ օտարերկրեայ պանքերի թրքական մասնաճիւղերում, պահուող հայկական հաշիւների անուանացանկերը եւ գումաների չափը։

Որքան այսօր դժուար է փաստել սեփականութեան իրաւունքը, յստակեցնել անհատական գոյքի գինը եւ հետամտել կորուստը, նոյնքան էլ դիւրին է դա անել համայնքային սեփականութեան հարցում։ Քանի որ Օսմանեան կայսրութիւնը կառուցուած էր ազգային/կրօնական սկզբունքով եւ լուսաւորչական հայերը ներառուած էին մէկ էրմենի մլիերի մէջ, ապա նրանց եկեղեցիները, վանքերն ու դպրոցները հաշուառուած էին Կ.Պոլսոյ հայոց



**պատրիարքարանում:** Մինչ այժմ կան տարբեր հաշուարկ-ներ, ներառեալ 1919թ. Փարիզի գեհաժողովին հայկական պատուիրակութիւնների ներկայացրած տեղեկանքները: Թերեւս ամենաամբողջականը Ռայմոն Գէորգեանի եւ Փոլ Փափուճեանի հաշուարկներն են, քանի որ դրանք հիմնուած են պատրիարքարի չհրատարակուած արխիւների վրայ: Ըստ այդ հաշուարկների՝ 1913-14թթ. առաքելական հայերն ունէին 2538 գործող եկեղեցի, 451 վանք եւ գրեթէ 2000 դպրոց: Այս հաշուարկի մէջ չեն մտնում Օսմանեան կայսրութեան հայ կաթողիկէ համայնքի եւ հայ աւետարանականների հոգեւոր հաստատութիւններն ու դպրոցները, ինչպէս նաև Ռուսական կայսրութեան Կարսի, Սուլըմալուի եւ Պաթումի վարչական միաւորների հայապատկան գոյքը:

Ամփոփելով վերոշարադրեալը կարելի է անել հետեւեալ եզրակացութիւնները.

Հայոց իրաւունքներին տէր կանգնելու համար բնաւ պարտադիր չէ, որ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը լինի համընդհանուր: Հայազդի քաղաքացիական բնակչութեան աքսորը նոյնքան պատասխանատուութիւն է դնում թրքական պետութեան վրայ եւ պարտաւորեցնում հատուցել աքսորեալների կամ նրանց ժառանգների կորուստները, որքան ցեղասպանութեան փաստը:

Օսմանեան կայսրութեան հայ համայքի իրաւունքները ամրագրուած են եղել ըստ երկրի գործող օրէնսդրութեան, եւ թրքական պետութեան կողմից յետա-

դայ բոլոր անօրինական զաւթումները չեն զրկում նրան իր իրաւունքից: Անօրինական բոնագրաւումները սեփականութեան իրաւունքի փոխանցման օրինական հիմք չեն կարող հանդիսանալ: Թուրքիայի Հանրապետութեան 1926-27 թթ. օրէնքներն ու Հրամմանագրերը՝ ուղղուած կրօնական փոքրամասնութիւնների գոյքի բռնագրաւմանը, չեն կարող օրինական հիմք հանդիսանալ, քանի որ հակասում են Թուրքիայի Հանրապետութեան ստանձնած միջազգային պարատաւորութիւններին՝ Լոգանի պայմանագրի 38-45 յօդուածներին: Նշեալ պարտաւորութիւնները ենթակայ չէին եւ ենթակայ չեն փոփոխութեան կամ անտեսման, քանի որ նրանց, ըստ նոյն պայմանագրի 37-րդ յօդուածի, տրուած է հիմնական օրէնքի (սահմանադրութեան) կարգավիճակ:

Եթէ Թուրքիան իր ապագան տեսնում է Եւրոպիութեան կազմում, ինչպէս բազմիցս է յայտարարել, ապա պիտի ընդունի Եւրոպիութեան արժէքները: Ի շարս այլ բաների, պիտի պատրաստ լինի պատասխանատուութիւն կրել սեփական պետութեան եւ նրա իրաւանախորդի արարքների համար: Պիտի օրինական տէրերին վերադարձնի ապօրինի բռնագրաւուած գոյքը, պիտի դադարեցնի այլ պետութիւնների տարածքների բռնագրաւումը, պիտի դադարի խօսել ուժի դիրքերից եւ սպառնալիքի լեզուով:

ԱՐԱ. ՊԱՊԵԱՆ

# Հայոց Յեղասպանութեան Ժամանակագրութիւն

1878

**Ռուս-թրքական պատերազմը, Սան Սթեֆանոյի պայմանագիրը եւ Պելլինի վեհաժողովը**

1877-1878 ռուս-թրքական պատերազմին թուրքերը պարտութիւն կրեցին: Ռուսական զօրքերը յաղթանակ տարին եւ Պալքանեան, եւ Կովկասեան ուազմաճակատներուն վրայ: Պալքանեան ճակատի վրայ ռուսական զօրքերը գրաւեցին Պուլկարիան եւ մօտեցան Սթեֆանովին, իսկ Կովկասեան ուազմաճակատին վրայ անոնք գրաւեցին Արտահանը, Պայագէտը, Ալաշկերտը, Կարսը եւ Էրզրումը, ինչպէս նաև՝ Պաթումը: Թուրքերը ստիպուած էին դադրեցնել պատերազմական գործողութիւնները եւ հաշտութիւն ինդրել: Հաշտութեան պայմանագիրը Ռուսաստանի եւ Օսմանեան կայսրութեան միջեւ ստորագրուեցաւ 1878 Մարտ 3-ին Սան Սթեֆանոյի մէջ: Սան Սթեֆանոյի պայմանագիրն մէջ տեղ գտաւ 16-րդ յօդուածը, որ կը վերաբերէր Արեւմտեան Հայաստանի մէջ բարեփոխումներ իրականացնելու մասին: Պայմանագիրին մէջ մասնաւորապէս նշուած էր. «Նկատի ունենալով, որ ռուսական զօրքերու գուրս բերում անոնց կողմէ գրաւուած՝ Հայաստանի՝ Թուրքիոյ վերաբարձուելիք վայրերէն կրնայ այնտեղ առիթ ստեղծել բախումներու եւ բարդութիւններու, որոնք երկու պետութիւններու բարի յարաբերութիւններու վրայ կ'ունենան վնասակար ազգեցութիւն, Բարձր գուրը կը պարտաւորուի անյապաղ կենսագործել Հայաբնակ մարզերու տեղական կարիքներէն յարուցուող բարելաւումներ եւ բարենորոգումներ, եւ ապահովել Հայերու անվտանգութիւնը քիւրտերէն եւ չերքէզներէն»:

Սան Սթեֆանոյի պայմանագիրը ռուսական դիւանագիտութեան յաղթանակն էր: Ան խստօրէն անհանգըստացուց Եւրոպայի մրցակից պետութիւնները, որոնք կը վախնային, որ Օսմանեան կայսրութիւնը ամբողջովին կամեալ կ'ըլլայ Ռուսաստանէն, եւ Արեւելեան հարցի պարագային գոյութիւն ունեցող ուազմավարական հաւասարակշռութեանը կը փոխուի յօդուած Ռուսական կայսրութեան, որ կը հակասէ եւրոպական պետութիւններու շահերուն: Անոնք ամէն միջոցի պիտի գիմէին, որ այդ մէկը չպատահէր: Այդ հարցի պարագային յատկապէս գործօն ներդրում ունէին Անգլիան եւ Աւստրօ-Հունգարիան, որոնք կը վայելէին Գերմանիոյ եւ անոր վարչապետ Պիզմարքի աջակցութիւնը: Այդ ուժերը յաջողեցան հասնիլ այն եղանակացութեան, որ Սան Սթեֆանոյի պայմանագիրը վերանայելու համար հրաւիրուի յատուկ վեհաժողով մը:

1878 Յունիս 13-ին մինչեւ Յուլիս 13-ը Պելլինի մէջ կայացաւ վեհաժողով մը, որուն նախագահը Պիզմարքն էր: Վեհաժողովին Անգլիոյ, Աւստրօ-Հունգարիոյ, Գերմանիոյ, Ֆրանսայի եւ Իտալիոյ աջակցութեամբ կարելի եղաւ վերանայիլ Սան Սթեֆանոյի որոշումներուն, թուլցընել Ռուսաստանի գիրքերը եւ զօրացնել իրենց գիրքերը եւ ազգեցութիւնը Օսմանեան կայսրութեան վրայ: Վեհաժողովի որոշմամբ Ռուսաստանը Թուրքիոյ վերաբարձուց

Ալաշկերտը իր հովիտով եւ Պայագէտը (Էրզրումը մինչ այդ արդէն վերադարձուած էր): Անոր ձգեցին միայն Արտահանը, Կարսը, ինչպէս նաև Պաթումը: Պելլինի համաձայնագրին Հայկական հարցին նուիրուած 61-րդ յօդուածը, սկզբունքային շարք մը հարցերու մէջ կը տարբերէր Սան Սթեֆանոյի 16-րդ յօդուածն, ի վնաս հայերուն: Այսպէս, եթէ Սան Սթեֆանոյի պայմանագրով Արեւմտեան Հայաստանի բարեփոխումները պէտք է իրագործուէին ոռւսական զօրքերու ներկայութեան ընթացքին, որ յստակ երաշխիք կու տար անոնց իրագործման, ապա ըստ Պելլինի համաձայնագրին՝ ոռւսական զօրքերը դուրս կը բերուէին, եւ այդ խնդրին կարգաւորումը կը ձգէին Թուրքիոյ հայեցողութեան: Ան միայն կը պարտազուէր պարբերաբար եւրոպական պետութիւններուն հաղորդել իր ձեռնարկած քայլերուն մասին: Վերջիններս պէտք է իրականացնէին լոկ հսկողական գործառոյթներ. այսինքն՝ Պելլինի համաձայնագրով չեղեալ համարուեցան Արեւմտեան Հայաստանի բարեփոխումներու իրականացման համար Սան Սթեֆանոյի ստեղծած նախագրեալները:

Պելլինի վեհաժողովին ետք, Սուլթանը եւ Օսմանցի կառավարող վերնախաւը ամրապնդեցին իրենց այն համոզումը, որ Հայկական հարցի լաւագոյն լուծումը հայերուն ոչնչացնելն է: Անոնք այժմ անոր մէջ կը տեսնէին կայսրութեան ներքին գործերը՝ եւրոպական պետութիւններու միջամտութենէն ազատելու իրական ուղին, քանզի այդ տէրութիւնները Հայկական հարցը եւ հայկական շրջաններուն մէջ բարեփոխումներու հարցը կ'օգտագործէին որպէս պատրուակ՝ Թուրքիոյ ներքին գործերուն միջամտելու համար: Ուստի անհրաժեշտ էր վերացնել այդ պատրուակը եւ տէրութիւնները զրկել կայսրութենէն զիջումներ կորզելու հարաւորութենէն:

1891

**Ապտուկ Համիտը կը ստեղծէ «Համիտիէ» յատուկ զօրաշոկատները**

Պելլինի վեհաժողովին տէրութիւնները յանձնարարեցին Սուլթան Ապտուկ Համիտին «ապահովել հայերու անվտանգութիւնը չերքէզներէն ու քիւրտերէն», սակայն իրականութեան մէջ սուլթանն էր քիւրտերու եւ չերքէզներու հակահայկական բոլոր գործողութիւններու գլխաւոր հրահրողը: Անոր լաւագոյն վկայութիւնը, Պելլինի վեհաժողովին ետք՝ 1891-ին, անոր հրամանով ստեղծըւած բացառապէս քիւրտերէ կազմուած եւ օսմանեան կառավարութեան հաշուին պահուող հեծելազօրքն էր, որ կոչւցաւ «Համիտիէ»: Ան կազմուած էր 30 գունդերէ եւ չէր մտնէր օսմանեան բանակի համակարգին մէջ, այլ գոյութիւն ունէր որպէս ինքնուրոյն ուազմական միաւոր՝ հաստատուած հայկական երգնկա քաղաքին մէջ: «Համիտիէ»ի գլխաւոր նպատակը, փաստօրէն, կայսրութեան ամբողջ տարածքին հայկական շարդեր իրականացնելն էր:

## ԿԵՎԱՔԸ ԵՂԵՇՈՒԵՆ ԱՌԱՋ



Յեղասպանութեան զոհ գրադէտ Թլկասինցի Կեղբոնական վարժարանի աշակերտները՝ Խուլավանքի հնօրեայ խաչքարերուն մօտ դասապահի ընթացքին

**1894-189**

**Հայերու զանգուածային կոտորածները ամբողջ Թուրքիոյ տարածքին եւ Սասնոյ հերոսամարտը**

19-րդ դարուն օսմանեան իշխանութիւններու կազմակերպած հայկական ջարդերու գագաթնակէտը հանդիսացան 1894-1896 կոտորածները: Առաջին հարուածը հասաւ Սասունին՝ Պիթլիսի վիլայէթի գաւառներէն մէկուն, որ մշտապէս աչքի կը զարնէր թղթական կամայականութիւններուն դիմագրելու իր անկոտրում կամքով: 1894 Օգոստոսին Սասունի վրայ կը յարձակի թղթական չորրորդ բանակը: Ուժերը անհաւասար էին, եւ թղթական կանոնաւր բանակը ի վերջոյ կը յաղթէ: Սասունը կ'աւերուի, կը կործանին 40 գիւղեր, կը սպանուի 10 հազար մարդ: 1895 Սեպտեմբերին նախ մայրաքաղաքին մէջ եւ ապա Տրավեզնի, Երզնկայի, Մարաշի, Սեբաստիոյ, Էրզրումի, Տիարպերի, Պայազտի, Խարբերդի մէջ կը սկսին ջարդերը: Սուլթանական իշխանութիւնները կը փորձեն ջարդեր կազմակերպել նաեւ Զէյթունի մէջ, սակայն այդ մէկը կը ձախողի անեղի բնակչութիւնը նախօրօք անհրաժեշտ կազմակերպչական քայլեր ձեռնարկած էր թղթական զօրքերուն դիմագրելու համար: Կոտորածները նոր թափով կը վերսկան 1896-ին:

Նոր զանգուածային ջարդեր տեղի կ'ունենան Կ.

Պոլսոյ, Ուրֆայի, Շապին-Գարահիսարի, Ամասիոյ, Մուշի, Մարգուանի եւ կայսրութեան այլ շրջաններուն մէջ: 1894-1986 կոտորածներու ժամանակ կը զոհուին 300 հազար հայ: Սակայն հայերու կորուստները միայն անով չէին սահմանափակուած: Ստեղծուած անասելի յուսալքիչ պայմաններուն ներքեւ մօտ 100 հազար հայեր բռնի կ'իւլամանան, եւ մօտաւորապէս նոյնքան հայեր հարկադրւած կը հեռանան իրենց հայրենիքն:

**1908 10 Յուլիս  
Երիտթուրքերու յեղաշրջումը**

Օսմանեան կայսրութեան մէջ աւելի ու աւելի կը հասուննար արիւնարբու Սուլթանէն ազատելու գաղափարը: Կը ստեղծուէին խմբաւորումներ, որոնց նպատակը սուլթանական կարգերը խորտակելն էր: Հետզհետէ միաւորուելով՝ այդ խմբաւորումները կը վերածուին շարժման, որ կը ստանայ «Երիտասարդ Թուրքեր» անուանումը: Շուտով երիտթուրքերը կը ստեղծեն իրենց կուսակցութիւնը՝ իթթիհատ վէ թերաքիի («Միութիւն եւ յառաջդիմութիւն»):

1908 Յուլիսին երիտասարդ թուրքերու յեղաշրջման հետեւանքով Սուլթան Ապտուլ Համիտ Բ-ը կը զրկուի իշխանութենէն, իսկ 1909-ին գահընկեց կըլլայ:

**Երիտթուրքերը ասպարէզ կ՚իջնեն ֆրանսական յեղափոխութեան հոչակած «Ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն» կարգախօսով:** Կայսրութեան բոլոր ժողովուրդները, իսլամ թէ քրիստոնեայ, ցնծութեամբ կ՚ընդունին «Կարմիր Սուլթան»ին տապալումը: Մարդկի կը կարծէին, թէ Օսմանեան կայսրութեան պատմութեան մէջ նոր դարաշընան մը սկսած է: Ինչպէս կը վկայէ Մուսա Բրենսը, «... հայերը, թուրքերը, յոյները կը դրկնդախառն բրւէին փողոցներուն մէջ»: Բայց, շուտով երեւան եկաւ, որ երիտթուրքերը դիմակաւորուած ազգայնամոլներ էին, որոնք կը շարունակէին իրենց նախորդ սուլթաններուն՝ հալածանքներու եւ ջարդերու քաղաքականութիւնը: Անոնք կայսրութեան բոլոր ազգերը ձուլելու եւ «մաքուր» թրքական ազգ ստեղծելու գաղափարակիրներ էին, որ յանուն այդ գաղափարի իրագործման կը հաւատային որ պէտք չէ կանգ առնել զանդուածային կոտորածներու առջեւ անգամ:

#### 1909 Ապրիլ Ատանայի կոտորածը

**Երիտթուրքերու յեղաշրջումէն ընդամէնը մէկ տարի անց՝ 1909-ի Ապրիլին, թուրք ազգայնամոլ տարրերը կիլիկիոյ Ատանա քաղաքին մէջ ամբոխը կը դրգուն հայերուն դէմ: Մի քանի օր անց թրքական բանակը կը միջամտէ: Կոտորածը Ատանային կը տարածուի նաեւ կիլիկիոյ հայաբնակ այլ վայրեր՝ Մարաշէն մինչեւ Քեսապ: Որոշ բնակավայրերու մէջ հայերը կը դիմեն ինքնապատշաճնութեան եւ կրնան փրկութիւն: Կոտորածը կը դադրի միայն մէկ ամիս ետք, երբ հայերը շուրջ 30.000 զոհ տուած էին: Երիտթուրքերու յեղաշրջումը ոգեւորութեամբ ընդունած հայերուն մէջ, առաջին անգամ ըլլալով կը յառաջանայ լուրջ կասկած եւ յուսախաբութիւն:**

#### 1910 Պելլին-Պաղտատ երկաթուղիի կառուցման եւ հայերը դէպի Միջագետք տեղահանելու գերմանական ծրագիրը

**Ստանձնելով 19-րդ դարու վերջին եւ 20-րդ դարու սկիզբին Օսմանեան կայսրութեան տարածքէն անցնող այս երկաթուղիի շինարարութիւնը եւ շահագործումը՝ Գերմանիան կը ձգտի սահմանել իր վերահսկողութիւնը Օսմանեան կայսրութեան նկատմամբ, հարուածի տակ դնել Անգլիոյ դիրքերը Հնդկաստանի եւ Եգիպտոսի մէջ, ինչպէս նաեւ՝ թուլցնել Ռուսաստանի դիրքերը Կովկասի մէջ: Գերմանիան Պաղտատ երկաթուղիի կառուցման հարցը կը կապէր նաեւ Արեւմտեան Հայաստանի իր տնտեսական եւ ուազմաքաղաքական ծրագրերուն հետ:**

Գերմանիոյ քաղաքական շրջանակները կը հաւատային, որ Հիւսիսարեւելեան Անսատոլիոյ թրքական միաստարրութիւն ստեղծելու նպատակով անհրաժեշտ է հայերը օգտագործել Պաղտատ երկաթուղիի շինարարութեան համար, որ հնարաւոր կը դարձնէր լուծել երկու կարեւոր հարց: Երկաթուղիի կառուցման համար կ՚ապահովուէր ձեռներէց ու որակաւոր բանուորական ուժ, միւս կողմէն՝ կը թուլնար ուռւսական ազդեցութիւնը Արեւմտեան Հայաստանի վրայ: Մասնաւորապէս, ծանօթ գերմանացի քաղաքագէտ Պառլ Ռորբախը կը հաւատար, որ «...պէտք է Արեւմտեան Հայաստանէն դուրս հանել բնիկ հայերը եւ անոնց տեղը վերաբնակեցնել Թրակիային եւ Ռուսաստա-

նէն բերուած մահմետականներով, որ կը նպաստէ Հայաստանը մէկ հարուածով Ռուսաստանէն անջատելու քաղաքականութեան»: Ռորբախը կ՚առաջարկէր արեւմտահայերը գաղթեցնել Միջագետք, որ անոր կարծիքով կը նպաստէր «...ճանապարհի տնտեսական զարգացման»: Գերմանացիներու այս տեսակէտը հիմք դարձաւ երիտթուրքերու հայաջննջ քաղաքականութեան:

1911

#### Սալոնիկի երիտթուրքերու համագումարը

**Հայկական հարցը Ցեղասպանութեան ճանապարհով լուծելու վերաբերեալ երիտթուրքերու որոշումը վերջնականապէս ընդունուեցաւ 1910-ական թուականներու սկիզբները՝ «Միութիւն եւ յառաջդիմութիւն» կուսակցութեան կերպուական կոմիտէի շարք մը գաղտնի նիստերու եւ խորհրդակցութիւններու ժամանակ: Այդ առումով յատկանշական էր 1911 Սալոնիկի մէջ գումարուած՝ կուսակցութեան հերթական համագումարը, ուր յստակօրէն գրուեցաւ կայսրութեան ոչ թուրք ժողովուրդներու բոնի թրքացման խնդիրը, որ հաւասարապէս կը տարածուէր նաեւ կայսրութեան տարածքին վրայ բնակող հայութեան վրայ: Այդ համագումարի ընթացքին ընդունուած որոշումները երիտթուրքերու ծրագրած քաղաքականութեան պաշտօնական փաստաթուղթ դարձան, որմէ որոշ ժամանակ անց Թուրքիոյ ներքին գործերու նախարար Թալեաթի ստորագրութեամբ յատուկ գաղտնի հրահանգներ ուղարկեցան կայսրութեան տեղական իշխանութեան մարմիններուն՝ հայերու ոչնչացման նախապատրաստական յատուկ միջոցառումներուն վերաբերեալ:**

1912-1913

#### Պալքանեան պատերազմները

**Պալքանեան պատերազմները (առաջինը՝ 1912-ի Հոկտեմբերէն մինչեւ 1913-ի Մայիսը, երկրորդը՝ 1913-ի Յունիսէն մինչեւ Օգոստոս), որոնք կը մղուէին պալքանեան դաշնակի ընթացքին միջիեւ, հանգեցան Պալքաներու եւ ողջ Եւրոպայի միջազգային յարաբերութիւններու սրման ու արագացուցին Հաշխարհային Առաջին պատերազմի ասնձագերծումը: Առաջին պալքանեան պատերազմի ընթացքին Օսմանեան Թուրքիոյ կրած պարտութիւնը հող նախապատրաստեց Հայկական հարցի նոր արծարծման համար, որուն որպէս արդիւնք, Արեւմտեան Հայաստանի բարեփոխումներու հարցը հայ հասարակական շրջանակներու եւ ուռւսական կառավարութեան գործոն մասնակցութեան շնորհիւ՝ դարձաւ միջազգային դիւանագիտութեան քննարկման առարկայ:**

1914 Յուլիս

#### Հ. Յ. Պաշնակցութեան ժողովը Երգրումի մէջ

**1914 Յուլիսին Երգրումի մէջ կայացաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան համագումարը: Այդ ժամանակ արդէն կը զգացուէր մօտալուա պատերազմի շունչը, եւ դաշնակցութեան կազմակերպած համագումարը կուգար քննարկելու՝ պատերազմի ընթացքին հայերու գրաւելիք դիրքորոշման մասին: Տեղեկանալով այդ համագումարի մասին, երիտթուրքերու զեկավարութիւնը համագումարին կուղարկէի իր երկու ներկայացներուն կայսերական գործոն մասնակցութեան շնորհիւ՝ դարձաւ միջազգային դիւանագիտութեան քննարկման առարկայ:**

## ԿԵԱՆՔԸ ԵՂԵՇՈՒԵՆ ԱՌԱՋ



Մշակը եւ իր հունձքը. Ցեղասպանութեան զոհ գրագէտ Թղկատինցիի 1910-ի շրջանաւարտները



Խարբերդ-Մէզիրէի Ազգ. կենդր. վարժարանի առաջին ցրչանաւարտնիներ՝ Յ. Ս. Սիմոնեան, Ռուբէն Զարդարեան եւ Գարեգին քինը.

գրաւէին իրենց կուսակցութեան ղեկավարութեան մէջ: Համագումարի ընթացքին հանդէս գալով, անոնք «Միասնութիւն եւ յառաջդիմութիւն» կուսակցութեան անունով, հայերուն ներկայացուցին հետեւեալ պահանջները. առաջին՝ համագումարը պէտք է ողջ հայութեան անունով յայտարարէ, որ թէ՞ Թուրքիոյ եւ թէ՞ Ռուսաստանի հայերը հաւատարիմ պիտի մնան Թուրքիոյ պատերազմի ընթացքին, երկրորդ՝ պիտի կազմակերպեն ջոկատներ ոռուսերուն դէմ կոռւելու համար, եւ երրորդ՝ խոռովութիւն պիտի բարձրացնեն Կովկասի եւ ոռուսական բանակի թիկունքին վրայ: Անոնք միաժամանակ յայտարարեցին, որ «...եթէ հայերը նման դիրք գրաւեն, ապա պատերազմէն յետոյ հայերուն իրաւունք պիտի տրուի ստեղծելու իրենց անկախ պիտութիւնը Թուրքիոյ եւ Ռուսաստանի հայկական որոշ տարածքներու վրայ»:

Համագումարը, ի պատասխան երիտթրքական ղեկավարութեան ներկայացուցած պահանջներուն, յայտարարեց, որ պատերազմի պարագային Օսմանեան կայսրութեան եւ ոռուսական կայսրութեան հայերը կը յայտնուին տարբեր ճամբարներու մէջ, քանի որ անոնք տարբեր պետութիւններու հպատակներ են եւ հաւատարիմ են անոնց: Իսկ ինչ կը վերաբերի Կովկասի մէջ խոռովութիւն բարձրացնելուն, համագումարի ընդունած որոշման մէջ ընդգծուեցաւ, որ «...համագումարը չի կրնար խօսիլ Ռուսաստանի հայերուն անունով, որոնք մէկ այլ պետութեան հպատակներ են»: Անոր հետ մէկտեղ, համագումարը յստակ կերպով յայտարարեց. «...եթէ թրքական կառավարութիւնը որոշչ պատերազմի մէջ մտնել, ապա հայերը Թուրքիոյ մէջ կը կատարեն այն պարտականութիւնները, որոնք կը դրուին իրենց վրայ՝ որպէս թրքական հպատակներ՝ ծառայելու հայրենիքին եւ բանակին, պաշտպանելու երկիրը, ինչպէս կայսրութեան միւս հպատակները»: Դիւրին չէր նման որոշում կայացնելը, քանի որ այս մէկը հայերուն համար կը նշանակէր եղբայրասպան պատերազմ՝ նկատի ունենալով, որ Ռուսաստանի հայերը նոյնպէս կը կատարէին իրենց վրայ

դրուած պարտականութիւնները: Սակայն երիտթուրքերու ներկայացուցիչները դժգոհ մնացին համագումարի ընդունած որոշումներէն, քանի որ անոնք կը մերժէին ոռուսահայերը Ռուսաստանի դէմ հանելու, Կովկասի եւ ոռուսական բանակի մէջ խոռովութիւններ կազմակերպելու՝ երիտթուրքերու պահանջը: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ Պէհակատին Շաքիրը՝ Հայոց Ցեղասպանութեան ամենագործօն կազմակերպիչներէն եւ դահիճներէն մէկը, համագումարի ընթացքին զայրացած բացականչեց. «Այդ դաւաճանութիւն է»:

### 1914 Օգոստոս - Հոկտեմբեր

Համաշխարհային Առաջին պատերազմի սկիզբը եւ Օսմանեան կայսրութեան ներգրաւումը պատերազմին մէջ

1914 Օգոստոս 1-ին սկսաւ Համաշխարհային Առաջին պատերազմը, որ տեւեց չորս տարի: Անոր հիմնական գերակատարները 19-րդ գարու վերջին եւ 20-րդ գարասկիզբը ձեւաւորուած երկու միմեանց թշնամի ուազմաքաղաքական խմբաւորումներն էին՝ դաշնակիցները, որուն կորիզը կը կազմէին Անդլիան, Ֆրանսան ու Ռուսաստանը, եւ Կեղեցունական պետութիւնները՝ Գերմանիան, Աւստրօ-Հունգարիան ու Իտալիան, որոնց կը միանար նաեւ Թուրքիան: Պատերազմի մէջ կը ներքաշուի նաեւ երկրագունդի բնակչութեան 75%-ը՝ 1,5 միլիոն մարդ, կը զօրակոչուի 74 միլիոն մարդ: Ռազմական տարբեր գործողութիւններու ընթացքին կը զոհուի 10 միլիոն մարդ եւ կը վիրաւորուի 20 միլիոն մարդ: 1914 Հոկտեմբեր 29-ին, Օսմանեան կայսրութիւնը, որ կը ղեկավարէր երիտթրքական կառավարութիւնը՝ բաղկացած ներքին գործերու նախարար Թալեբաթէն, զինուորական նախարար Էնվերէն եւ ուազմածովային նախարար ծովակալ ձեմալէն, պաշտօնապէս պատերազմի մէջ մտաւ: Ամիսներ անց ամերիկեան մամուլին տուած իր հարցազրոյցի ընթացքին էնվեր փաշան հետեւեալ ձեւով կը մեկնաբանէ Թուրքիոյ մասնակ-

2010

ցութեան պատճառները. «Անկասկած, աշխարհը դժուար բութեամբ կ'ըմբռնէ, որ Թուրքիան այլեւս նոյնը չէ, ինչ որ նախապէս էր: Այսօր պատերազմ կը մղէ ոչ թէ թրքական կառավարութիւնը, այլ թուրք ժողովուրդը:»

Ֆրանսայի, Մեծ Բրիտանիոյ եւ Ռուսաստանի թերթերը շատ կը գրեն այն մասին, որ Թուրքիան պատերազմի մէջ մտաւ Գերմանիոյ օգնելու համար: Այդ մէկը ճիշդ է այս պարագային, բայց ոչ այն պարագային, երբ մենք կը հաւաքագրէինք մէր ուժերը: Այսօր Աւստրօ-Հունգարիան եւ Գերմանիան կ'օգնեն մեզ, մենք ալ՝ իրենց: Մենք զինուորագրուեցանք, որովհետեւ այլ ուղի չկար: Ռուսաստանը, նուածելով մէր տարածքները, կը սպառնար Սեւ ծովու եւ Կովկասի տարածաշրջանին մէջ, իսկ Անդլիան գործողութիւններ կը ծաւալէր Մթջագետքի դէմ եւ նաւատորմ տեղադրած էր Տարտանելի առջեւ: Մենք սպասեցինք եւս մէկ շաբաթ եւ պատերազմ յայտարարեցինք: Թուրքիան այժմ ունի լաւ պատրաստուած եւ զինուած 2.000.000-ոց բանակ: Մեզ այնքան զրաբարտած են, որ այժմ մենք կը կամենանք աշխարհին զէնքով համոզել, որ մենք ազգովին մեռած չենք, ինչպէս ումանք կը պնդեն:» («Ասոշիէյթը փրէս»-ին տուած հարցազրոյցէն, 20 Ապրիլ, 1915):

### 1914 Նոյեմբեր

Հայերու զօրակոչը թրքական բանակ

Թուրքիան մտաւ պատերազմին մէջ, եւ զօրահաւաք յայտարարուեցաւ: Արեւմտահայերը, ինչպէս կայսրութեան միւս ժողովուրդները, զօրակոչուեցան բանակ:

### 1915

1915, 2 Յունուար

Ռուսական բանակին հեռանալէն ետք՝ Ռեմիայէն, Սալմաստէն եւ շրջակայ այլ վայրերէն դէպի նոր Զուղաճամբայ ելած հայ եւ ասորի գաղթականներու մեծ մասը կոտորուեցաւ թուրք եւ քիւրտ զինեալ ուժերու յարձակումներէն: Յունուարը 12-ին Ավղարիկ գիւղին մէջ տեղի ունեցաւ 107 հայերու ջարդը:

### 1915 Փետրուար

«Երեքի կոմիտէի» ստեղծումը

Հայոց Ցեղասպանութիւնը կազմակերպուած եւ անողոք կերպով վարելու համար «Միութիւն եւ յառաջդիմութիւն» կուսակցութեան կեդրոնական կոմիտէի որոշմամբ 1914 Փետրուարին ստեղծուեցաւ երեքի գործադիր կոմիտէն՝ կազմուած գոկտոր Նազըմէն, Շաքիր Պեհաչատինէն եւ Միտհաթ Շիւքքիէն: Երիտթրքական եռապետութիւնը՝ Թալեաթը, էնվերը եւ ձեմալը, կը գործէր այս կոմիտէի միջոցով, որուն վրայ դրուած էր Օսմաննեան կայսրութեան ամբողջ հայութեան տեղահանման եւ ջարդերու կազմակերպման ու իրագործման ողջ պատասխանատուութիւնը: Կոմիտէն, որ օժտուած էր ամենալայն լիազօրութիւններով, մանրամասնօրէն մշակած էր հայերու տեղահանութեան եւ ոչնչացման բոլոր հարցերը՝ անոնց տեղահանման ժամկէտները ըստ շրջաններու, տեղահանման ուղիները եւ վայրերը, ոչնչացման նպատակով անոնց կեդրոնացման վայրերը եւայն:

Երբ վերջնականապէս կ'որոշուի հայերու Ցեղասպանութեան մասին, Դոկտոր Նազըմը ելոյթ ունենալով կուսակցութեան գաղտնի նիստերէն մէկուն ընթացքին, կը նշէ. «Հայ ժողովուրդին պէտք է ոչնչացնել հիմնովին, որ

պէսզի ոչ մէկ հայ մնայ մեր երկրին մէջ, եւ մոռցուի այդ անունն իսկ: Այժմ պատերազմ է, այսպիսի յարմար առիթ այլեւս չ'ըլլար: Մեծ տէրութիւններու միջամտութիւնը եւ համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները աննկատ կը մնան, իսկ եթէ անոնք իմանան, ապա կը դրուին կատարուած վիաստի առջեւ, եւ այլպիսով հարցը կը վերանայ: Այս անգամ մէր գործողութիւնները պէտք է հայերու ամբողջական ոչնչացման բնոյթ կրեն, անհրաժեշտ է ոչնչացնել բոլորը, մինչեւ վերջին մարդք: Ես կ'ուզեմ, որ այս հողին վրայ թուրքը եւ միայն թուրքը ապրի եւ անբաժանելիօրէն տիրապետէ: Թող կորչին բոլոր ոչ թրքական տարրերը, ինչ ազգութեան եւ կրօնի ալ որ անոնք պատկանին»:

Երեքի կոմիտէի արամագրութեան տակ գրուեցաւ այսպէս կոչուած «Յատուկ կազմակերպութիւնը», որ ստեղծուած էր երիտթուրքերու կուսակցութեան որոշումով, եւ որուն վրայ դրուած էր հայերու Ցեղասպանութեան իրագործման պարտականութիւնը: Անոր անմիջական դեկավարն էր Շաքիր Պեհաչատինը: «Յատուկ կազմակերպութիւնը» կազմուեցաւ բանտերէն յատուկ այդ նպատակով արձակուած քրէսական յանցագործներէ, չեթէներէ՝ աւազակախումբերէ, որոնք ընդունակ էին ամենադաժան ոճրագործութեան:

### 12 Փետրուար

Սկսան հայ պաշտօնեաներու պաշտօնազրկումները, Օմաննեան բանակի հայ սպաններու ձերբակալութիւնները, զինաթափուած հայ զինուորներէ բանուորական վաշտերու կազմուեցաւ կազմուումը:

### 18 Փետրուար

Երիտթուրքերու Կեդրոնական մարմնի լիազօր Պեհաչատին Շաքիրի ստորագրութեանմբ՝ կուսակցութեան շրջանային պատուիրակներուն յղուած նամակներով հազորդուեցաւ հայերու բնաջնջման որոշումն ու ծրագիրը:

### 19 Փետրուար

Բանտերէն ազատ արձակուած մարդասպաններէն եւ ոճրագործներէն կազմուեցաւ ջարդարար այն ուժը, որ Մայիսի կէսերուն պէտք է կոտորէր Կարինի ուազմական գիծին վրայ աշխատող զինաթափ հայ զինուորները:

### Փետրուար

Թրբական բանակի հայ զինուորներու զինաթափումն ու կոտորածի սկիզբը

Երիտթրքական դեկավարութիւնը հայերու Ցեղասպանութիւնը հայութեան ծրագրի գործնական կիրառումը սկսաւ՝ առաջին հարուածը հասցնելով բանակ զօրակոչուած հայ զինուորներուն: Այդ մէկը պատահական չէր, անոնք կը ձգտէին հայերը զրկել իրենց զինուորական ներուժէն: Թուրքիոյ ուազմական նախարար Էնվերի՝ 1915 Փետրուարին արձակած հրամանով բոլոր հայ զինուորները զինաթափուեցան եւ, բաժանուելով 50-100-ական խումբերու, սպանուեցան: Որպէս հետեւանք հայութիւնը սկիզբէն մնաց առանց զինուորական ուժի, որ կրնար պաշտպանել հայերը, անոնց տունը, ունեցուածքը եւ բնակավայրերուն, քանզի հայկական բնակավայրերուն մէջ մնացած էին միայն ծերունիներ, հիւանդներ, կիներ, երեխաներ եւ պատանիներ:

### 8 Ապրիլ

Արեւմտահայութեան տեղահանութիւններու եւ

**Կոտորածներու սկիզբը:**

**Ապրիլ-Յունիս**

Բանակ գօրակոչուած հայ զինուորներուն ոչընչացնելէ ետք երկրորդ ծանր հարուածը հայերուն հասաւ 1915 Ապրիլ 24-ին: Այդ օրը Կոստանդնուպոլսոյ մէջ ձերբակալուեցաւ եւ առանց որեւէ պաշտօնական մեղադրանքի աքսորուեցաւ արեւմտահայ մտաւորականութեան ընտրանին, ինչպէս նաեւ թրքական խորհրդարանի հայ անդամներ, գրողներ, փաստաբաններ, ուսուցիչներ, լրագրողներ, բժիշկներ, հասարակական գործիչներ, հոգեւորականներ, արուեստի գործիչներ. մօտաւորապէս 800 մարդ: Անոնք բոլորը սպանուեցան աքսորի ճամբուն կամ աքսորավայրերու մէջ: Ծրագրուած կերպով կը ձերբակալուէին եւ կը սպանուէին հայ կուսակցական եւ քաղաքական գործիչները: Այդ ճակատագրին արժանացան Զէյթունի ծանօթ ղեկավար նազարէթ Զաւուշը, Վանի ականաւոր ազգային գործիչ հշխանը, Ռուֆայի հայութեան ողջ ղեկավարութիւնը՝ մօտ 100 մարդ: Յունիս 15-ին Կ. Պոլսոյ Սուլթան Պայազտ հրապարակին վրայ կախաղան բարձրացան Սոցիալ-դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան 20 անդամները՝ քաղաքական գործիչ Փարամազի գլխաւորութեամբ:

Օսմանեան կառավարութեան նպատակն էր անմիջապէս գլխատել արեւմտահայութիւնը, զինաթափել քաղաքական ու մտաւորական ղեկավարութիւնը, կազմալուծել եւ բարոյալքութեան մատնել հայութիւնը եւ անով իսկ կանխել հայութեան կողմէ դիմագրութիւն կազմակերպելու որեւէ հնարաւորութիւն:

Կարելի է ըսել, որ մօտ 60 հազար հայ զինուորներու ոչնչացումը եւ հայ մտաւորականութեան ղիխատումը ճակատագրական եղան արեւմտահայութիւնը համար: Ան կորսնցուց իր կազմակերպչական եւ դիմագրողական ուժը, որ պատճող դարձաւ Ցեղասպանութեան հետ իրականացման եւ մեծ ծաւալներուն: Ասկէ ետք ջարդարարները անցան հայութեան հիմնական մասի բռնի տեղահանման եւ ոչնչացման՝ բռն Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ, ինչպէս նաեւ Արեւմտեան Անատոլիոյ տարբեր շրջաններուն ու քաղաքներուն մէջ: Հայկական կոտորածները եւ տեղահանումը ընդգրկեցին ողջ Օսմանեան կայսրութիւնը:

**15 Ապրիլ - 16 Մայիս**

Վանի կոտորածները եւ հերոսամարտը

Ապրիլ 15-ին Վանի մերձակայ Ականց գիւղաքաղաքին շուրջ 500 հայեր գնդակահարուեցան թրքական իշխանութիւններուն կողմէ: Կոտորածներ աեղի ունեցան նաեւ Վանի շրջակայքի 80 այլ գիւղերուն մէջ. 3 օրուայ ընթացքին սպանուեցան 24 000 հայ: Ապրիլ 20-ին, Վանի մերձակայ գիւղերու բնակիչները կոտորելով, թուրքերը հասան քաղաք, եւ սկսաւ Վանի հերոսամարտը, որ տեսեց մինչեւ 1915 Մայիս 16:

**Մայիս-Յունիս**

Զանգուածային տեղահանութիւններ տեղի ունեցան ողջ Թուրքիոյ տարածքին:

**9 Մայիս**

Տեղահանութիւններ եղան Թուրքատի մէջ:

**14 Մայիս**

Տեղահանութիւններ եղան Բաքերդի մէջ:



Սուլթանի հրամանով տեղահանութեան մասին ընդունուեցաւ օրէնք մը, որուն կիրառումը յանձնուեցաւ ուազմական նախարար էնվերին: Օրէնքը զինուորական հրամանատարութեան կը թոյլատրէր գիւղերու եւ քաղաքներու բնակչութեան, անհատապէս կամ հաւաքականորէն, տեղափոխել եւ բնակեցնել այլ վայրեր: Այս ձեւով օրինականացուեցաւ հայ բնակչութեան բռնի տեղահանումը հայրենիքն եւ աքսորը արաբական անապատներ:

**15-18 Մայիս**

Տեղի ունեցան Կարմոյ դաշտի հայերու տարագրութիւնը եւ 25 000 հայերու կոտորածը

**19 Մայիս**

Կոտորուեցաւ Խնուսի հայութիւնը:

**Մայիսի 22-25**

Կ.Պոլսոյ նուրը Օսմանիէ կեղունին մէջ տեղի ունեցաւ երիտթուրքերու «Յատուկ կազմակերպութեան» ժողովը, որու ընթացքին Թալեաթը ներկայացուց հայերու տեղահանութեան ձեւին եւ ընթացքին, հայերու կողմէն լքուելիք գոյքի տնօրինման, հայերու գիւղերուն, տուներու վերաբնակեցման մասին ընդարձակ ծրագիրը: Ժողովը, աւարտելով իր նիստերը, որոշում կայացուց ամբողջապէս իրագործել հայերու տեղահանութեան եւ ջարդերու երիտթուրքական ծրագիրը:

Դաշնակից պետութիւնները չէին կրնար անտարբեր մնալ այս բոլորին նկատմամբ, ուստի բողոքագիր յղեցին թրքական կառավարութեան՝ մեղադրելով զանոնք հայերու զանգուածային կոտորածները իրականացնելու մէջ: 1915 Մայիս 24-ին Լոնտոնի, Փարիզի եւ Փեթրոկրատի մէջ միաժամանակ հրապարակուեցաւ Անդիխոյ, Ֆրանսայի եւ Ռուսաստանի կառավարութիւններու համատեղ

2010

պաշտօնական յայտարարութիւնը՝ Օսմանեան կայսրութեան հայերու կոտորածներու եւ թրքական կառավարութեան անդամներու անձնական պատասխանատուութեան մասին: Հոն, մասնաւորապէս, կ'ըսուի. «Այս ամբողջ ամսուայ ընթացքին Հայաստանի մէջ թուրքերու եւ քիւրտերու կողմէ տեղի կ'ունենայ հայերու կոտորածը Օսմանեան իշխանութիւններու ակնյայտ թոյլառութեամբ, իսկ երեմն ալ՝ ուղղակի աջակցութեամբ:

Ապրիլի կէսին հայկական ջարդեր տեղի ունեցած են էրզրումի, Պիֆլիսի, Մուչի, Սասունի, Զէյֆունի եւ ամբողջ Կիլիկիոյ մէջ: Վանի շրջակայքը գտնուող գիւղերու հարիւրաւոր բնակիչները կոտորուած են, իսկ Վանի հայկական թաղամասը պաշարած են քիւրտերը: Միենայն ժամանակ Կոստանդնուպոլսոյ թրքական կառավարութիւնը ձերբակած եւ անասելի հալածանքներու ենթարկած է հայկական խաղաղ բնակչութիւնը»: Անգլիական-ֆրանսական-ռուսական համատեղ յայտարարութիւնը վերին աստիճանի կարեւոր, 20-րդ գարուն ընդունուած առաջին պաշտօնական փաստաթուղթն էր, որ մէկ այլ կառավարութեան եւ անոր անդամներուն հաւաքականօրէն եւ անձնապէս պատասխանատու կը համարէր անոնց կատարած յանցանքներուն եւ ոճրագործութիւններուն համար:

Մայիս 27

Երիտթրքական կառավարութիւնը վաւերացուց թալեաթի Մայիս 22-ի տեղեկագիրը եւ ներքին գործերու ու զինուորական նախարարութիւններուն հրահանգեց անոնց գործադրութիւնը: Նոյն օրը Թալեաթը տուաւ հայերու տեղահանութեան եւ ջարդի հրամանագիրը:

1 Յունիս

Տիգրանակերտ-Խարբերդ ճամբուն վրայ խողխող-ւեցան 1914 նոյեմբերէն ի վեր շինարարական ճամբարներուն մէջ աշխատող 12 000 հայ զինուորներ:

3 Յունիս

Տեղահանուեցաւ Հաճընի հայութիւնը:

6 Յունիս - Յուլիսի վերջ

Տեղի ունեցաւ Արաբկիրի հայերու տեղահանութիւնն ու կոտորածը: Արաբկիրէն գուրս եկած հայերու քարաւանները հերթականութեամբ գնդակահարուեցան եփրատի ափին, եւ այսպիսով մինչեւ Յուլիսի վերջը Արաբկիրի մէջ այլեւս հայ չմնաց:

7 Յունիս

Տեղահանութիւններ եղան երգնկայի եւ Ակնի մէջ:

10 Յունիս

Տեղահանուեցան Մարտինի եւ Սեւերէկի հայութիւնը:

11 Յունիս

Տեղահանուեցաւ Խոտորջուրի հայութիւնը:

11 Յունիս

Տեղի ունեցաւ Խնուսի 1700 հայ ընտանիքներու տեղահանութիւնն ու կոտորածը:

14 Յունիս - 26 Յուլիս

Տեղահանուեցաւ Կարին քաղաքի հայութիւնը:

22 Յունիս - 5 Յուլիս

Տեղահանուեցաւ Մեբաստիոյ հայութիւնը:

24 Յունիս

Ակսաւ Ծապին Գարահիսարի հայութեան տեղահանումը:

25 Յունիս

Տեղի ունեցան Բաղէչի կոտորածները:

26 - 27 Յունիս

Ակսան տեղահանուիլ Խարբերդի, Տրապիզոնի, Մարզուանի եւ Սամսոնի հայութիւնը:

1 Յուլիս

Ակսան Խարբերդ - Մեղրէի, Տրապիզոնի եւ Պայտի հայերու կոտորածները:

2 Յուլիս

Ակսան Եոզկատի շրջակայ գիւղերու կոտորածը:

10 Յուլիս

Ակսան Մուշի կոտորածը: 15 000 հայերէն փրկուցան միայն 500-ը, իսկ գաւառի 59 000 հայ բնակիչներէն միայն 9 000-ը:

15 Յուլիս

Կարինի կուսակալ Թահսին կեղունին յղած իր նամակին մէջ կը գրէ. «Կարինի շրջակայքը հայերուն հանդէպ խժութիւններն անցած են ամէն սահման: Դրամի եւ կանաց համար գործադրուած խայտառակութիւնները ծայրայելորէն ամօթալի են եւ դէմ են մարդկութեան: Պէտք է այս բոլորին առաջքը առնել, մանաւանդ, վերջ տալ ամէն կողմ «Թեշքիլաթը մախսուսէ» անուան տակ գործող չեթէներուն: Խարբերդի կուսակալը կը գրէ, թէ բոլոր ճանապարհները լեցուն են կանաց եւ երեխաներու դիակներով, եւ ժամանակ չենք գտներ զանոնք թաղելու համար: Լաւ կ'ըլլայ, եթէ պահպանէինք մեր վեհանձնութիւնն ու աղգային կերպարը»:

Յուլիսի կէսեր

Ակսան Տիգրանակերտի հայութեան տեղահանութիւնն ու կոտորածը :

18 Յուլիս

Ակսան Սասունի ինքնապաշտպանութիւնը: Թրքական զօրագունդերը յարձակեցան քաղաքի բնակչութեան վրայ: Գիտակցելով իրենց սպառնացող ստոյդ մահը՝ սասունցիները գիմեցին ինքնապաշտպանութեան եւ երեք օր ետք՝ Յուլիս 21-ին, բարձրացան Անդոկ լեռը:

24-28 Յուլիս

Ակսան Անգարայի եւ Կ.Պոլսոյ շրջակայքի տեղահանութիւնները: Տեղահանութիւններ սկսան իզմիրի, Պարտիզակի, Արմաշի, Կեսարիոյ, Անգարայի շրջակայ հայկական գիւղերուն մէջ, շարունակուեցան տեղահանութիւնները կիլիկիոյ մէջ ընդգրկելով նոր տեղափայրեր՝ Անտիոքը, Այնթապը, Բեհեսնին, Քիլիսը, Աղըյամանը, Քարատուրանը, ապա՝ Քեսապը եւ շրջակայ այլ վայրեր:

## ԿԵԱՆՔԸ ԵՂԵՇՈՒԵՆ ԱՌԱՋ



«Մուշի ցերեկային դպրոցի դասարաններէն մէկը ուսուցչուի Մարգարիտի հետ... Ուսուցչուի Մարգարիտ Նալպանանուն եւ դպրոցի 120 աշակերտներուն մեծամասնութիւնը սպանուցան 1915-ին»: Այս տողերը գրուած է նորվելիացի միսիոնար Պոտիլ Պիոռնի կողմէ առնուած ապս լուսակարի հակառակ էջին:

«Անոնք բոլորը սպանուեցան...»  
Նորվելիոյ Պետական արխիու

### 30 Յուլիս - 14 Սեպտեմբեր

Հրահանգուեցաւ տեղահանել Սուետիոյ շրջանի հայութիւնը, սակայն ժողովուրդը դիմեց ինքնապաշտպանութեան: Հերոսամարտը, որ ծանօթ է «Մուսա լերան 40 օրերը» անունով, տեւեց մինչեւ Սեպտեմբեր 14: Գրեթէ քառասուն օր գոյամարտելէ ետք՝ Սեպտեմբեր 14-ին, ողջ մասցած 4000-էն աւելի հայեր յաջողեցան գուրս գալ թրքական զօրքերու շրջափակումէն, հասնիլ ծովափ եւ փրկութի՝ այնտեղ իրենց սպասող անգլիական եւ ֆրանսական նաւերու շնորհիւ եւ հասնիլ Պոր-Սայիտ քաղաքը: Տարիներ անց աւստրիացի գորող ֆրանց Վերֆելը հայ ազգի համար ողբերգական, բայց նաև հերոսական այս դրուագը յաւերժացուց «Մուսա լերան 40 օրերը» վէպով:

### 3-11 Օգոստոս

Ակսան Աֆրոն Գարահիսարի, Կեսարիոյ, Սիվրիհիսարի, Մերսինի, Աղաբազարի, Մարաշի, Էսքիշեհիրի եւ շրջակայ գիւղերու տեղահանութիւնները :

### 13-21 Օգոստոս

Ակսան Անգարայի, Պրուսայի, Էվէրեկի, Ատանայի եւ անոնց շրջակայքը գտնուող հայութեան տեղահանութիւնը:

### Օգոստոս-Սեպտեմբեր

Առաջին պաշտօնական վկայութիւնները արեւմբ-տահայութեան զանգուածային բնաջնջումներուն մասին:

### Օգոստոս

ԱՄՆ դեսպան Մորկենթաու կը յայտարարէ ջարդերուն վերաբերեալ իր ունեցած տեղեկութիւնները, որոնք ձեռք բերած է Թալեաթի հետ իր հանդիպումներէն:

### 12 Օգոստոս

Էնվեր կը յայտարարէ որ 200 հազար հայ սպանուած է:

### 19 Օգոստոս

Ճէյմս Պրայսը կը յայտարարէ, որ Թուրքիոյ մէջ սպանուած է 500 000 հայ:

### 31 Օգոստոս

Թալեաթը կը տեղեկացնէ Գերմանիոյ դեսպան արքայազն Էռնստ Հոենլոէ-Լանգենբուրգին, որ Հայկական հարց այլեւս գոյութիւն չունի:

### 14 Սեպտեմբեր

«New York Times»ը կը հաղորդէ 350.000 սպան-

2010

ուած հայերու մասին:

**15 Սեպտեմբեր**

Օսմանեան կայսրութեան խորհրդարանը կը վաւերացնէ լքուած գոյքի մասին օրէնքը:

**1916**

**7 Մարտ**

Պատասխանելով ներքին գործերու նախարարութեան Մարտի 3-ի հեռագրին՝ Ապառուհաս նուրին նախարարութեան կը տեղեկացնէ, որ մինչեւ 1916 Մարտի 16-ը Պապի եւ Մեսքենէի մէջ բնանջուած է 35 000 հայ, Հալէպի մերժակայքը գտնուող Քարըլքի մէջ՝ 10 000, Տիպսի, Առևարարի եւ Համամի մէջ՝ 20 000, եւ Ռաս-ուլ-Այնն մէջ՝ 35 000, ընդհանուրը՝ 100 000 հայ:

**17 Մարտ**

Ակսաւ Ռաս-ուլ-Այն հաւաքուած աւելի քան 50 000 հայերու տեղահանութիւնը: Տեղահանութիւններուն կը յաջորդեն կոտորածները, որոնք կը տեւեն մինչեւ Ցունիս: Ապա տեղի կ'ունենայ Տէր Զօրի մէջ հաւաքուած 200 000 հայերու կոտորածը:

**22 Յունիս - 13 Յուլիս**

Զարդեր տեղի կ'ունենան տարբեր վայրերու մէջ, որոնց ընթացքին Սեբաստիոյ մէջ կը սպանուին բանուուրական ջոկատներու մէջ աշխատող 10 000 հայ զինուոր, Կարինի արեւմուտքին մէջ 9000, Զառայի մէջ 1000, Թոռքատ գաւառակի Ռէշաղիէ կոչուած վայրին մէջ՝ 1000 զինուոր: Զարդերն իրենց աւարտին կը հասնին Ցուլիսի 13-ին, եւ սպանուած հայ զինուորներու թիւը՝ 21 000-ի:

**10 Օգոստոս**

Հրատարակուած պաշտօնագրով երիտթուրքերով կառավարութիւնը լուծեց Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքութիւնները եւ ձգեց միայն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, որու կեդրոնը պէտք է դառնար Երուսաղէմ:

**Հոկտեմբեր**

ԱՄՆ նախագահ Վուտրո Ուիլսոնը, հենուելով ԱՄՆ քոնկրէսի ընդունած բանաձեւին վրայ, Հոկտեմբեր 8-ը եւ 9-ը կը յայտարարէ «Հայաստանին օգնութեան օրեր»:

**Նոյեմբեր 26**

Հայ ազգային պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուլպար փաշայի, Մարկ Սայքսի (Անգլիա), Ժորժ Պիկոյի (Ֆրանսա)՝ Լուսոնի մէջ կնքած պայմանագրին հիման վրայ Փրանսական գորքերու կազմին մէջ կը ստեղծուի հայկական կամաւրական զօրագունդը՝ Արեւելեան լեռէնը, որ թրքական տիրապետութենէն պէտք է ազատագրէր Հայկական հողերը: 1918 Դեկտեմբերին զօրագունդը կը կոչուի Հայկական լեռէն:

**1917**

**Յունիուար**

Գերմանիոյ գեսպանատան պաշտօնեայ Կոպերթը կը հանդիպի Էնվերի, Թալեաթի եւ Հալիլի հետ՝ նպատակ ունենալով տեղեկացնել, որ անոնց կողմէ իրականացուող բռնի իսլամացումը ոչ մէկ կապ ունի ուազմական միջամը:

տութեան կամ անվտանգութեան հետ եւ պէտք է դադրի:

**Հոկտեմբեր 25**

Պոլշեւիկները Լենինի գլխաւորութեամբ Ռուսաստանի մէջ կ'իրականացնեն քաղաքական յեղաշրջում: Իշխանութեան գլուխն անցնելով՝ պոլշեւիկները ձեռնամուխ եղան պատերազմական գործողութիւններու դադրեցման, եւ արդէն Նոյեմբերէն սկսեալ ուսւական զօրքերը սկսան դուրս բերուիլ Արեւմտեան Հայաստանի տարածքէն: Օգոստելով առիթէն՝ Թրքական կառավարութիւնը կը ծրագրէ ոչ միայն վերադրաւել Արեւմտեան Հայաստանը, այլև՝ նուածել ողջ Արեւելեան Հայաստանը:

**1918**

**Մարտ**

Մարտ 3-ին Ռուսաստանի նորաստեղծ պոլշեւիկնեան կառավարութիւնը Պրեստ-Լիթովսկիի մէջ դաշինք կնքեց դաշնակիցներու հակադիր պետութիւններու՝ Գերմանիոյ, Աւստրօ-Հունգարիոյ, Պուլկարիոյ եւ Թուրքիոյ հետ, որպէս կատարուած ին միացաւ իր նախկին հակառակողներուն հետ: Կնքելով այս պայմանագրիը՝ կողմերը համաձայնութեան եկան այն հարցի շուրջ, որ այսուհետեւ անոնց միջեւ դադրեցուի պատերազմական գործողութիւնները, եւ Ռուսաստանը պահանջովէ իր զօրքերու դուրս բերումը Արեւելեան Անատոլիաէն, մասնաւորապէս՝ Կարսի, Արտահանի եւ Պաթումի մարզերէն: Այս պայմանագիրը 1917-ի նոյեմբեր 8-ին պոլշեւիկներու կողմէ ընդունած «Արեւմտեան Հայաստանի հողերու ազատ ինքնորոշման իրաւունքի պաշտպանութեան մասին» որոշումը եւ փոխարէնը ընդունեց նոյն այդ հողերը Թուրքիոյ վերադրանելու մասին վճիռը:

Պրեստ-Լիթովսկիի պայմանագրիը ծանր վիճակի մէջ դրաւ կովկասեան ճակատին վրայ ապրող հայ ազգաբնակչութիւնը: Ան փաստորէն չեղեալ համարեց 1917-ի Դեկտեմբեր 29-ին պոլշեւիկներուն ընդունած «Արեւմտեան Հայաստանի հողերու ազատ ինքնորոշման իրաւունքի պաշտպանութեան մասին» որոշումը եւ փոխարէնը ընդունեց նոյն այդ հողերը Թուրքիոյ վերադրանելու մասին վճիռը:

Ամիսներ անց՝ Սեպտեմբեր 20-ին, Ռուսաստանի կառավարութիւնը արտգործնախարար Զիչերինի ստորագրած հրամանագրով չեղեալ յայտարարեց ըստ Պրեստ-Լիթովսկիի պայմանագրին Թուրքիոյ կովկասեան տարածքներու զիջումը: Եւ այսուամենայնիւ պրեստ կողմէն կողմերուն կողմէն կողմերու մասին պայմանագրով անհնար գարձաւ նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեան Արեւմտեան Հայաստանի այն տարածքներու վերադրածը, ուր քանի մը ամիս առաջ ուսւական բանակը կանգնած էր, եւ որոնք կրնային Ռուսաստանի կողմէն կողմերուն կողմէն կողմերու մասին» դաշինքով Հայաստանի Հանրապետութեան հաստատման պահուն անոր ծանրակշիռ բաղկացուցիչ մասը գառնալ: Պրեստեան հաշտութիւնը լաւ հնարաւորութիւններ կը ստեղծէր նուածողական նկրտումներ ունեցող թրքական կողմին համար:

Օգոստելով ստեղծուած իրավիճակին եւ խախտելով 1917-ի Դեկտեմբեր 5-ին կնքուած Երգնկայի զինադադարը՝ թրքական բանակը անցաւ յարձակման եւ շնորհիւ գերակշռող ուժերուն՝ գրաւեց Երգնկան, Կարինը, Սարիդամիշը, Կարսը, իսկ Մայիս 15-ին՝ նաեւ Ալեքսանտրապոլը: Արեւելեան Հայաստանի լինելութեան հարցը կը դառնայ մտահոգիչ:



#### Մայիս

Հայաստանի Հանրապետութեան հոչակումը

Թրքական զօրամիաւորումները կը գրաւեն Սարդարապատ կայարանը: Կանոնաւոր զօրամասերէ բաղկացած հայկական բանակը կենաց-մահու կռուի ելաւ թրքական կանոնաւոր զօրքերուն դէմ: Սարդարապատի պաշտպանութիւնը իրականացնելու պարտականութիւնը դրուեցաւ զօրավար Սիլիկեանի վրայ: Մայիս 27-ին ծանր կորուստներ կրելով՝ թրքական զօրաբանակի մնացորդները փախան:

#### Մայիսի 28

Հոչակուեցաւ Հայաստանի Հանրապետութիւնը: Նորանկախ հայկական պետականութեան վիճակուած էր գոյատեւել՝ մինչեւ Հայաստանի խորհրդայնացումը:

#### Յունիս - Սեպտեմբեր

Հակառակ 1918 Յունիսի 4-ին կնքուած Պաթումի դաշնագրին՝ Օգոստոսի 15-ին թրքական զօրքը յարձակում գործեց Ալեքսանդրապոլի վրայ: Հայերու 15 ժամուան դիմագրութիւնը հնարաւորութիւն տուաւ Կարինէն, Կարսէն, Արտահանէն եւ Արտուինէն շրջանին մէջ հաւաքուած գաղթականներուն հեռացումը քաղաքէն: Թրքական զօրքը սուրի քաշեց քաղաքին մնացած բնակչութիւնը: Սեպտեմբեր 15-ին թրքական իշխանութեան հրամանին ներքեւ գործող «Վայրագ զօրաբաժին» թաթարական զօրագունդը Պաքուի մէջ իրականացուց հայ բնակչութեան ջարդը: Ընդհանուր առմամբ Պաքուի մէջ կոտորուեցան 30.000 հայեր:

#### Սեպտեմբեր 19

Պաղեստինի Արարա բարձրունքին վրայ տեղի ու-

նեցաւ ճակատամարտ ֆրանսական զինուած ուժերու կազմին մէջ կռուող Հայկական լեգէոնի եւ թրքական բանակին միջեւ: Այս ճակատամարտի ընթացքին տարած յաղթանակին չնորհիւ Հայկական լեգէոնը մեծապէս նպաստեց դաշնակիցներու յաջողութեան աշակցելով թրքական բանակին դէմ տարած յաղթանակին:

#### 1918

##### Հոկտեմբեր 30

Մուտքոս քաղաքին մէջ կնքուեցաւ զինադադարդաշնակից երկիրներուն եւ Թուրքիոյ միջեւ: Այդպիսով Թուրքիան պարտուած դուրս եկաւ Առաջին Աշխարհամարտէն: Հետագային Դաշնակից երկրները ոչ մէկ քայլ ձեռնարկեցին իրագործելու համար Մուտքոսի զինադադարի այն պայմանները, որոնք կը նպաստէին Հայաստանի, եւ Անդարայի մէջ կազմուած թրքական կառավարութիւնը մերժեց Մուտքոսի զինադադարը՝ հասնելով անոր փաստացի վերացման:

##### Նոյեմբեր - Դեկտեմբեր

Նոյեմբեր 28-ին Արեւելեան (Հայկական) լեգէոնը մտաւ Կիլիկիոյ Ալեքսանտրէթի նաւահանգիստը եւ Դեկտեմբեր 17-19-ին կրցաւ գրաւել Կիլիկիոյ շարք մը ուազմական կարեւոր կէտեր:

#### 1919

##### 28 Փետրուար

Որպէս Թուրքիոյ ազգայնական-քեմալական ուժերու հզօրացման հետեւանք՝ Փետրուար 28-ին Հալէպի

2010

**մէջ տեղի ունեցաւ հայ բնակչութեան ջարդը:**

**23 Յուլիս**

Զօրավար Քիազիմ Գարապեքիրի կազմակերպութեամբ եւ գնդապետ Մուսթաֆա Քեմալի նախագահութեամբ Կարինի մէջ կը բացուի թուրք ազգայնականներու համաժողովը, որու մասնակիցներուն մեծ մասը նախկին երիտթուրքերն էին: Համաժողովը, Օգոստոս 7-ին աւարտելով իր նիստերը, ընդունեց Թուրքիոյ ամբողջականութեան եւ անձեռնմխելիութեան մասին իր յայտարարութիւնը:

**1920**

**21 Յունուար - 12 Փետրուար**

Յունուար 21-ին թուրք ազգայնականներու գէմ սկսաւ Մարաշի հերոսամարտը, որ տեսեց մինչեւ 1920 Փետրուար 12-ը: Փետրուար 11-ին քրանսական ուժերը նահանջեցին Մարաշէն: Հայերը հետեւեցան քրանսական բանակին, սակայն ճանապարհին ենթարկուեցան թրքական յարձակման: Խուժանը մորթեց, կացինահարեց հայերն ու քրանսացիները: Նահանջի ճանապարհին հայերը ունեցան 3000-5000 զոհ, իսկ քրանսացիները՝ 800-1200 սպանուած ու ցրտահարուած:

**Յունուարի 27**

Կ. Պոլսոյ ուազմական ատեանի նիստին Մուսթաֆա Քեմալը երիտթուրքերու մասին ըստ հետեւեալը. «Փաշաները գործեցին չտեսնուած, անպատմելի եւ անըմբոնելի ոճիրներ եւ իրենց անձնական շահերը ապահովելու համար երկիրը հասցուցին ներկայ վիճակին: Անոնք գործադրած են ամէն տեսակ բոնութիւն, կազմակերպած են տեղահանութիւններ եւ ջարդեր, նաւթով այրած են ծծեկեր մանուկներ, իրենց ամուսիններուն եւ ծնողներուն ներկայութեամբ բռնաբարած են կիներ եւ աղջիկներ. զաւակները, մանաւանդ աղջիկները, բաժնած են իրենց ծնողներէն, բռնագրաւած են հայերու անշարժ եւ շարժական ունեցուածքը, ամէն բռնութիւն գործադրելով՝ հայերը տարագրուած են մինչեւ Մուսուլ՝ եւ ողբալի վիճակի հասցնելով զանոնք, հազարաւոր անմեղներ ծովը նետած են, մարդոց բռնադատած են, ստիպած են հաւատափոխ ըլլալ, սովալլուկ ծերունիներու ամիսներով քալեցուցած են ստիպած են աշխատիլ, երիտասարդ կիներուն նետած որեւէ ազգի պատմութեան մէջ նմանը չունեցող զարհուրելի հանրատուները»:

**23 Մարտ**

Խոսրով բէկ Սուլթանովի գլխաւորած թուրք մուսաֆաթական հրոսակախումբերը կոտրեցին Շուշիի աւելի քան 30 000 հայ բնակչութիւնը, կողոպտեցին, աւերեցին եւ հրկիզեցին քաղաքի հայկական մասը:

**23 Մարտ - 15 Հոկտեմբեր**

Հաճընի հերոսամարտը

Մարտ 23-ին սկսաւ Հաճընի հերոսամարտը թուրք ազգայնական ու երիտթրքական միացեալ ուժերու դէմ իր աւարտին հասաւ 1920 Հոկտեմբեր 15-ին:

**1 Ապրիլ 1920 - 8 Փետրուար 1921**

Ապրիլ 1-ին սկսաւ Այնթապի հայութեան հերոսամարտը, որ աւարտեցաւ 1921 Փետրուար 8-ին:

**5 Յուլիս**

1919 Փետրուարին, Թուրքիոյ մէջ սկսաւ երիտթուրքերու առաջնորդներու դատավարութիւնը, որոնք կը մեղադրուին պատերազմի ընթացքին իրենց գործած յանցանքներուն համար եւ երկիրը կործանարար պատերազմի մէջ ներքաշելու պատճառաւ: Մեղադրանքներուն մաս կը կազմէր նաեւ Օսմանեան կայսրութեան մէջ հայերուն դէմ կոտորածներ կազմակերպելու եւ իրականացնելու մեղադրանքը: Սակայն երիտթուրքերու կարգ մը առաջնորդներուն հասցէին ներկայացուած դատավճիռը կը կրէր «Հեռակայ» բնոյթ, քանի որ անոնք պատերազմի աւարտին փախած էին երկրէն: Յուլիս 5-ին հրապարակուեցաւ երիտթուրք պարագլուխներու դատավճիռը, որուն համաձայն, 31 յանցագործներէն 4-ը՝ Թալեաթը, Ճեմալը, Էնվերը եւ Նազիմը, գատապարտուեցան մահուան, իսկ մնացած 27-ը՝ տարբեր տարբիներու ազտազգրկման:

**4 Օգոստոս**

Օգոստոս 4-ին Ատանայի մէջ Միհրան Տամատեանի գլխաւորութեամբ հոչակուեցաւ Կիլիկիոյ հայոց անկախութիւնը՝ ինքնավար Հայաստան Ֆրանսական հովանաւորութեան ներքոյ: Սակայն այդ պետութիւնը սոսկ հոչակագրային բնոյթ կրեց, քանի որ անգլոյ-Քրանսական հակասութիւններու սրման պայմաններուն ներքեւ Թուրքիոյ կողմը հակած Քրանսական զինուորական իշխանութիւնները ցրուեցին նորաստեղծ հայկական կառավարութիւնը:

**10 Օգոստոս**

Փարիզի Սեւր արուարձանին մէջ Համաշխարհային առաջին պատերազմին յաղթանակած պետութիւնները Թուրքիոյ հետ կնքեցին պայմանագիր մը, որ 13 մասերէ եւ 433 յօդուածներէ բաղկացած փաստաթուղթ մըն էր: Պայմանագրին 88-րդ յօդուածով Թուրքիան կը ճանաչնար «Հայաստանը՝ որպէս պատու եւ անկախ պետութիւն»: Իսկ 89-90-րդ յօդուածներուն մէջ նշուած էր, որ «Թուրքիան եւ Հայաստանը, ինչպէս նաեւ պայմանաւորուող կողմերը կը համաձայնին էրզրումի, Վանի եւ Պիթիսի վիլայէթներուն մէջ, Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմաններու որոշումը ներկայացնել ԱՄՆ նախագահի վճուն եւ ընդունի անոր որոշումը, ինչպէս նաեւ բոլոր այն միջոցները, որոնք կ'առաջարկուին անոր կողմէ Հայաստանը գէպի ծով դուրս բերելու եւ նշուած սահմանին վրայ ցանկացած Օսմանեան տարածքի պապազմականացման վերերեալ: Թուրքիան այս վճունի կայացման օրէն կը հրաժարի յանձնուող տարածքներու նկատմամբ բոլոր տեսակի իրաւունքներէն»:

**14 Սեպտեմբեր**

Ատանայի Քրանսական իշխանութիւնները Կիլիկիոյ մէջ ապաստանած հայերուն կը հրահանգեն մեկնիլ Կ. Պոլիս, Ամերիկա, Մարաչյ, Պէյրութ, Տէօրթ Եոլ, Իսկէնտ-րուն կամ որեւէ այլ տեղ: Հրահանգը կը վերաբերէր 14 000 այն հայերուն, որոնք Քրանսական հովանաւորութեան ներքոյ էին: Սակայն որոշ ժամանակ անց այդ հրահանգը տարածուեցաւ ողջ Հայութեան վրայ:

**23 Սեպտեմբեր**

Առանց պատերազմ յայտարարելու թրքական բանակը բնոդհանուր յարձակման անցաւ Հայաստանի դէմ: Սկսաւ Հայ-թրքական պատերազմը: Թուրքերը գրաւեցին:

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՎՈՂ:** Ալեքսանդրավողի գաւառին եւ Ախալքալաքի մէջ սուրէ անցուեցաւ ու թալանուեցաւ մօտ 30 գիւղ: Հայ խաղաղ բնակչութեան նկատմամբ թուրքերը յատուկ դաժանութեամբ կը վարուէին:

**Նոյեմբեր - Դեկտեմբեր**

Մինչ ԱՄՆ նախագահ Վուտրո Ռիլսը իր տեսակէտը կը յայտնէր Հայաստանի Հանրապետութեան նոր սահմաններուն հարցին չուրջ, պոլչեւիկեան Կարմիր բանակը կը նուաճաէր ամբողջ Կովկասը: Նոյեմբերի վերջին Կարմիր բանակը մտաւ Հայաստան, տիրող դաշնակցական կառավարութիւնը, չցանկանալով ներքաշուիլ աւելորդ արիւնահեղութեան եւ եղբայրասպան քաղաքացիական պատերազմի մէջ, իշխանութիւնը յանձնեց պոլշեւիկներուն: Դեկտեմբեր 2-ին Հայաստանը խորհրդայնացաւ:

**1921**

**15 Մարտ 1921 - 1922 Յուլիս**

Մարտ 15-ին Պերլինի մէջ կը սպանուի Հայոց Յեղասպանութեան կազմակերպիչներէն՝ Թալեաթը: Մահափորձը կ'իրականացնէ Սողոմոն Թեհլիրեան: Այս գործողութեամբ սկիզբ կը գրուի 1919-ին ՀՅԴ կուսակցութեան 9-րդ Ընդհանուր ժողովին մշակուած «Նեմեսիս» (վիճառութեան հին յունական աստուածուէի անուամբ) գործողութեան, որու նպատակն էր Թուրքիոյ երիտթուրքերու պարագլուխներուն դէմ կայացուած մահուան դատավճոփի ի կատար ածումը: «Նեմեսիս» յստակ, մանրամասն մշակուած գործողութիւն էր, որ ժամանակի ընթացքին արդարացի վրէժինդրութեան նպատակով իրականացուեցաւ հայ վրիժառուներու կողմէ: Ստեղծուած էր նաեւ յատուկ յանձնախումբ, որ պէտք է յայտնաբերէր փախստական դարձած եւ աշխարհի տարբեր անկիւններուն մէջ ծպտուած եղեռնագործները:

Յունիսին սկսաւ Թեհլիրեանի դատավարութիւնը, որ փաստօրէն վերածուեցաւ Յեղասպանութեան կազմակերպիչներուն դէմ գատավարութեան: Եւրոպայի հանրութեան ճնշման չորսհիւ Թեհլիրեանը արդար գուրս եկաւ դատավարութիւնէն: Դեկտեմբեր 6-ին Հոռոմի մէջ, Արշակը Շիրակեանի արձակած գնդակէն կը սպանուի երիտթուրքերու առաջին կառավարութեան ղեկավար Սայիտ Հալիմը: 1922 Ապրիլ 7-ին Պերլինի մէջ, Արշաւիր Շիրակեանն ու Արամ երկանեանը իրականացուցին Տրավիզոնի նախկին նահանգապետ Ճեմալ Ազրմիի եւ «Թեշքիլաթը Մախսուսէ» յանցաւոր կազմակերպութեան հիմնադիր Պեհաչտին Շաքիրի մահապատիժը: Յուլիս 25-ին, Ստեփան Շաղիկեանի, Արտաշէս Գէրդեանի եւ Պետրոս Տէլ-Պողոսեանի կողմէ Թիֆլիսի մէջ մահապատժի կ'ենթարկուի հայոց եղեռնի դաշիճներէն՝ Ճեմալ փաշան:

**16 Մարտ**

Մոսկուայի մէջ կը ստորագրուի խորհրդա-թրքական բարեկամութեան եւ եղբայրութեան պայմանագիրը: Այս ստորագրուեցաւ այնպիսի ժամանակահատուածի մը ընթացքին, երբ խորհրդային Ռուսաստանի ղեկավարութիւնը կ'աջակցէր քեմալական թուրքիոյ՝ անտեսելով Հայաստանի նկատմամբ վերջինիս քաղաքականութիւնը:

**20 Մարտ**

Լոնտոնի մէջ կը կնքուի թուրք-Փրանսական պայմանագիրը:



Գ. Զօհրայի




Դ. Վարուժան



Սիամանքը



Ռ. Սեպակ



Թլկատինցի



Երուժան

Եղեռնին զոհուած հայ գրագէտներ

**13 Հոկտեմբեր**

Կարսի մէջ կը կնքուի պայմանագիր մը, թուրքիոյ եւ նորաստեղծ Հայաստանի, Վրաստանի, Արաբէջանի և որհրդային Հանրապետութիւններուն միջեւ: Այս պայմանագիրը գրեթէ նոյնութեամբ կը կրկնէր Մոսկուայի պայմանագիրի կէտերը Հայաստանի տարածքներու հարցին վերաբերաբ:

**20 Հոկտեմբեր**

Անգարայի մէջ կը ստորագրուի թուրք-Փրանսական դաշնագիրը, եւ 1921 Դեկտեմբերէն մինչեւ 1922 Յունուար 4-ը Ֆրանսան իր զինուած ուժերը դուրս կը բերէ Կիլիկիայէն:

2010



Նոր կոտորածի սպառնալիքը կիլիկոյ 160 հազար հայերուն ստիպեց դաղթել դէպի Սուրբա, Լիբանան, Յունաստան:

1922

4 Օգոստոս

Օգոստոս 4-ին Միջին Ասիոյ բասմաչներու եւ խորհրդային զօրքերու բախման ժամանակ հայ զինուորական՝ Յակոբ Մելքոնովի կողմէն կը սպանուի Օսմանեան Թուրքիոյ ուազմական նախարար Էնվերը:

9 Սեպտեմբեր

Թուրքական բանակը կը մտնէ Իզմիր. կը սկսի 10 000 հայերու ու 100 000 յոյներու ջարդը: Երեք օր անց Իզմիրը կրակի կու տան:

Նոյեմբեր

Նոյեմբեր 20-ին Զուկցերիոյ Լոզան քաղաքին մէջ իր աշխատանքները կը սկսի Մերձաւոր Արեւելքի հարցերուն վերաբերող միջազգային համաժողովը, որ կը տեսէ

մինչեւ 1923 Յուլիս 24: Մասնակիցներն էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսան, Իտալիան, Յունաստանը, Ճապոնը, Ռումանիան, Եռևանավիան, Թուրքիան եւ դիտորդի կարգավիճակով՝ ԱՄՆ-ն: Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան թոյլատրուած չէր մասնակցիլ համաժողովին այն պատճառաբանմբ, որ այդ պատուիրակութիւնը այլ եւս չէր կրնար ներկայացնել Հայաստանը, ուր հաստատուած էին խորհրդային կարգեր: Լոզանի համաժողովին քննարկուեցաւ նաեւ Հայկական հարցը, սակայն թուրքական պատուիրակութիւնը, իսմէթ փաշային եւ Ռիզա Նուր Պէյի գլխաւորութեամբ, վճռականորէն հանդէս եկաւ Թուրքիոյ տարածքին որեւէ Հայկական օճախի ստեղծման գաղափարին դէմ:

Ի վերջոյ բանակցութիւններու ընթացքին Թուրքիա կը յաջողի իր կամքը պարտագրել Դաշնակից երկրներուն: Արդիւնքը կ'ըլլայ այն, որ Լոզանի վերջնական համաձայնագրին մէջ Հայաստանի եւ հայերուն մասին որեւէ յիշատակում չարձանագրուիր: Այսպիսով, Լոզանի համաժողովով Հայկական հարցը ժամանակաւորապէս կը փակուի, եւ Սեւրի գաշնագրով Հայաստանին յանձնուելիք տարածքները կը մտնեն Թուրքիոյ Հանրապետութեան սահմաններուն մէջ:

1923

31 Մարտ

Անգարան անմեղ կը հոչակէ բոլոր այն թուրքերը, որոնք դաստակարտուած էին ուազմական կամ այլ դատարաններու կողմէ:

Սեպտեմբեր

Համաձայն թուրքական նոր օրէնքին՝ արգիլուեցաւ հայերուն վերադարձը Թուրքիա:

30 Նոյեմբեր

Կայացաւ Պոնտոսի հայերու եւ յոյներու տեղահանութիւնը:

1939

Յունիս

Հակառակ տեղի բնակչութեան կամքին եւ Սուրիոյ ընդդիմանալուն, Ալեքսանտրէթի սանճաքը բոնութեամբ կցուեցաւ Թուրքիոյ, որուն որպէս հետեւանք Յուլիս 16-23 ինկած ժամանակահատուածին տեղաբնակ շուրջ 40.000 հայերը լքեցին իրենց բնակավայրը եւ հաստատուեցան Սուրիա ու Լիբանան:

Սեպտեմբեր

Համաշխարհային Երկրորդ պատերազմի սկսելէն մէկ շաբաթ առաջ Ատոլֆ Հիթլերը, ելոյթ ունենալով իր զինուորներուն առջեւ, կոչ կ'ուղղէ անոնց «...անխնայ կոտորել լեհ ցեղախումբի բոլոր մարդոց՝ տղամարդ, կին, երեխայ», եւ կ'աւարտէ իր խօսքերը հետեւեալ հարցով. «Ո՞վ այսօր կը խօսի հայերու բնաջնջման մասին...»:

## ԹՐՔԱԿԱՆ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ժխտողականութիւնն ուղեկցում է բոլոր ցեղասպանութիւններին: Իրականացրած ոճիրը քօղարկելու, այն ժխտելու քաղաքականութիւնը յատուկ է բոլոր ցեղասպաններին, եւ Թուրքիան, անշուշտ, դրավառ օրինակն է:

Ժխտողականութիւնը Թուրքիայում իրականացրում է պետական մակարդակով: Ցեղասպանութիւնների եւ մարդկութեան դէմ յանցագործութիւնների հանրագիտարանը Հայոց Ցեղասպանութեան ժխտումն անւանում է «սեփական անցեալը Ժխտելու՝ պետութեան ամենաբացայայտօրինակը»: Այսօր Թուրքիայում գրեթէ բոլոր պատմագիտական կազմակերպութիւնները, խոչորագոյն թերթերը, Հեռուստատեսութիւնն ու ռատիոն ներգրաւուած են այս քաղաքականութեան մէջ:

Մի շաբք թուրք, ինչպէս նաև թրքական պետութեան կողմից փինանսաւորուող արեւմտեան գիտականների հիմնական առաքելութիւնն է դարձել «զուգահեռ» պատմութեան ստեղծումը, որն իրականութեան հետ շատ քիչ կապ ունի եւ ժխտում է Հայերի Ցեղասպանութիւնը:

2001-ի Ապրիլին, Անդարայում հիմնադրուեց Հայկական հետազոտութիւնների ինստիտուտը, որի հիմնական խնդիրներից մէկը Հայոց Ցեղասպանութեան թեմայի արծարձման դէմ պայքարն ակադեմական շրջանակ տեղափոխելն է: Բացի այդ, թրքական կառավարութիւնն ամէն կերպ աշխացում է աշխարհի նշանաւոր համալսարաններում թրքական պատմութեան եւ մշակոյթի ուսումնասիրութեան ամպիոններ հիմնադրելուն, որոնց գործունէութեան մէջ ժխտման քաղաքականութիւնը շատ մեծ դեր ունի:

ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՏԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՈՅՉՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Ցեղասպանութեան ժխտման ընթացքում կասկածի տակ է դրում ցեղասպանութեան իրականացման մտադրութեան եւ ծրագրի գոյութիւնը:

Օրինակ, հրեաների բնա-

ջնջման հրամանների վաւերագրեր չեն պահպանուել, եւ սա Հոլոքոսթը, ողջակիզումը ժխտողների կողմից համարւում է հրեական ցեղասպանութեան ծրագրուած չլինելու ապացոյց: Նոյն մեքանիզմը կիրաւում է նաեւ Հայոց Ցեղասպանութեան պարագայում: Թուրքիան պնդում է, որ չկայ Հայերին բնաջնջելու հրամանի եւ ծրագրի գրաւոր արձանագրուած վաւերագիր:

Եթէ նոյնիսկ կասկածի տակ առնենք 1920-ին Լոնտոնում Արամ Անտոնեանի կողմից հրատարակուած երիտրքական կառավարութեան ներքին գործերի նախարար Թալեաթի՛ Օսմանեան կայսրութեան հայ բնակչութեան տեղահանութեան եւ ոչընչացման մասին գաղտնի հրամանագրերը, որոնք Անտոնեանին էր փոխանցել Հայէպ քաղաքի հայերի տեղահանութեան կոմիտէի գլխաւոր քարտուղար Նայիմ Պէյր, միեւնոյնն է՝ Հայոց Ցեղասպանութեան կազմակերպուած եւ ծրագրուած լինելու վաստն ուղեկցում է ապացոյցների անվիճելի, հսկայական զանգուածով:

Այդպիսին են Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի դաշնակիցներ Գերմանիայի եւ Աւստր-Հունգարիայի արխիւներում պահուող պաշտօնական վաստաթղթերը, այդ երկրների դեսպանների եւ հիւպատոսների գեկուցագրերը, Կ. Պոլսում ամերիկեան դեսպան Հենրի Մորկենթաուի հեռագրելը, բազմաթիւ օտարազգի ականատեսների վկայութիւնները եւ, վերջապէս, 1919-1921 Սթամբուլում երիտրքական առաջնորդների նկատմամբ թուրքերի կողմից կայացած դատավճիռները, մեղադրական եղբակացութիւնները եւ ականատեսների վկայութիւնները:

Այս վերջին ու շատ զօրեղ պազցոյցը նոյնպէս կասկածի տակ առնելու փորձ է արւում: Յայտարարւում է, որ երիտրքուրքերի դատավարութիւններն ընթացել են Առաջին Համաշխարհային պատերազմում հանդիպում ենք պատերազմի ընթացքում Հայերի հաւատարմութեան մասին բազմաթիւ արձանագրութիւնների, իսկ Վանի ինք-

մաստ փաստարկ է, քանի որ այդ գէպքում պէտք է կասկածի տակ գնել նաեւ Նիւրէնպերկեան դատավարութեան արդիւնքները, որոնք նոյնպէս ընթացել են պատերազմում յաղթող պետութիւնների վերահսկողութեան տակ, սակայն որոնց վճռները Թուրքիան անվերապահօրէն ընդունել է:

ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՉ ԹԻԿՈՏՈՐԱԾ. ԳԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԱՐԿԱԾԸ

Հստ թուրք պատմաբանների՝ հայերի անհետացումն իրենց բնակութեան վայրերից տեղի է ունեցել մեծ մասամբ ոչ թէ ծրագրուած զանգուածային ոչնչացման, այլ ընդամէնը ուազմաճակատի գոտուց հայ բնակչութեան մի մասի տեղափոխման պատճառով, քանի որ քրիստոնեայ հայերն անյուսալի տարը էին Ռուսաստանի դէմ պատերազմի ընթացքում: Հստ թուրքերի՝ ճանապարհին տեղահանուղների մի աննշան մաս զոհուել է սովոր, հիւանդութիւններից եւ այլ պատճառներից, որոնցից էին նաեւ պատերազմի ընթացքում անիշխանութեան մատնուած որոշ շրջաններում գործող աւագակամբերից: Վերջին շրջանում յարձակումները: Վերջին շրջանում իյայոտ է եկել նաեւ մի նոր թեղ՝ սպանւած հայերի հետ մէկտեղ նշանում են նաեւ սպանուած թուրքեր, առաջ է քաշւում նաեւ քաղաքացիական պատերազմի եւ հայերի ապստամբելու վարկածը:

Մակայն այս թեղերը ոչ մի քննարկման չեն դիմանում: Հայերի բռնի տեղահանուղների իրականացուել է ոչ միայն «Արեւելեան Անատոլիայից» (Արեւմտեան Հայաստանից), որի մի մասը պատերազմի թատերաբեմ էր, այլեւ ամբողջ Անատոլիայից եւ նոյնիսկ ուազմաճակատից շատ հեռու գտնուող վայրերից: Ապստամբութեան վարկածը բոլորովին չի համապատասխանում իրականութեանը: Թուրքական հրամանատարութեան գեկոյցներում հանդիպում ենք պատերազմի ընթացքում Հայերի հաւատարմութիւնների, իսկ Վանի ինք-



նապաշտպանութիւնը, որը, ամենայածախն է նշւում իբրեւ ապստամբութեան փորձ, 1915-ի Ապրիլին էր, այն դէպքում, երբ տեղահանութեան մասին որոշումը Մարտին էր ընդունվել եւ զանգուածային սպանութիւններն արդէն իսկ սկսուել էին: Իսկ սպանդի տեսարանները նկարագրում են գրեթէ բոլոր ժամանակակիցները՝ հայազգի թէ օտար, Թուրքիայի հակառակորդ թէ դաշնակից, քրիստոնեայ, իսլամ թէ հրեայ, ընդ որում՝ նշելով պետական պաշտօնեաների եւ բանակի միանշանակ մասնակցութիւնը: Հսկայական լուսանկարչական արխիւր գալիս է վաւերացնելու տեղահանութեան պատրուակով կազմակերպուած ժողովրդի բնաջնջման փաստը:

#### ԿԵՂԾ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թուրքական կողմի ծաւալած բանավէճի հիմնական թեմաներից է ցեղասպանութեան տարիներին զոհւած հայերի թիւը: Ժիստողականները կասկածի տակ են դնում մէկուէչս միլիոն զոհերի թիւը: Բացարձակ կերպով ժիստել հայերի զանգուածային սպանութիւնները՝ ուղղակի անհնարի է, եւ փորձ է արուում կասկած առաջանելով այս մասնաւոր հարցի վերաբերեալ, տարածել այդ կասկածը նաեւ ամբողջ երեւոյթի վրայ: Այսպէս, Հայոց Ցեղասպանութեան յայտնի ժիստողներից մէկը՝ ծասթին Մըքքարթին, յենուելով վիճայարոյց հետազոտութիւնների վրայ, նշում է, որ կայսրութիւնում մինչեւ 1915 ապրում էր մէկ ու կէս միլիոն մարդ: Հստ Թուրքական պատմական ընկերութեան

նախկին նախագահ Եռւսուփ Հալածողութի, հայ զոհերի թիւը 56 հազարի է հասնում, որոնցից միայն 10 հազարն են սպանուած:

Այս փաստարկի օգտագործումը, մեղմ սասած, տարօրինակ է: Պոսնիական Սերեպենիքայի սպանդի պատասխանատունները դատապարտուել են Հէյկի (Hague) միջազգային դատարանի կողմից՝ իբրեւ ցեղասպանութիւն իրականացնողներ, թէ եւ այստեղ սպանուեց «ընդամէնը» 7000 մարդ: Սակայն եթէ նոյնիսկ փորձենք մտնել այս բանավէճի մէջ, ապա մանախօսուն փաստարկը հենց թրքական պաշտօնական վիճակագրութիւնն է: Երիտրքական կուսակցութեան տապալումից յետոյ, 1918-ի Դեկտեմբերին, ներքին գործերի նախարար Մուսթաֆա Արիֆի նախաձեռնութեամբ կազմուեց մի յանձնաժողով, որը պէտք է քննէր այս հարցը: Այս աշխատեց երեք ամիս եւ արդիւնքները հասարակութեան դատին ներկայացրեց նոր ներքին գործոց նախարար ծեմալ պէյի օրով՝ 1919-ի Մարտի 14-ին: Հստ այդ տուեալների սպանուած հայերի թիւը 1914-1918 կազմում էր 800 000:

#### ՕՍՄԱՆԵԱՆ ԱՐԽԻՒՆԵՐԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Ժիստողականները պնդում են, որ բազմաթիւ փաստեր, փաստաթղթեր եւ վկայութիւններ ստեղծուել են հայերի կողմից: Այս պնդումն ուղեկցւում է այն քարոզչական աշխատանքով, որը տարւում է Օսմանեան արխիւնները բացելու փաստի առնչութեամբ:

Օսմանեան արխիւնները հսկայական նիւթ են պարունակում ոչ միայն թուրքերի, այլեւ երկար ժամանակ օսմանեան տիրապետութեան տակ գտնուող ժողովուրդների պատմութեան մասին: Այն, որ դրանք կարող են թուրքիայի համար վտանգ ներկայացնել, Անդարան հասկացաւ դեռ 1960-ականներից, երբ միայն եղակի մասնագէտների էր իրաւունք տրւում մուտք գործել Օսմանեան արխիւները: Տարիների ընթացքում իրականացրում էր արխիւային փաստաթղթերի ընտրութիւնը եւ համակարգումը՝ թուրքիայի Գլխաւոր արխիւային վարչութեան տնօրէն իսմէթ Միրօղլուի գլխաւորութեամբ: 1989-ի Մայիսի 16-ին, թրքական կառավարութիւնը հանդիսաւորութեամբ յայտարարեց Օսմանեան արխիւնները բացելու մասին: Բացւում էին հայերի մասին փաստաթղթերը, ընդ որում՝ յատուկ յանձնաժողովի կողմից 7 միլիոն դասակարգման ենթարկուած փաստաթղթերից բացուել էին ընդամէնը 10 հազարը: Սա յայտարարուեց աննախագէպ քայլ՝ լոռութեան մատնելով այն փաստը, որ 1980-ի ուղմական յեղաշրջումից յետոյ, հանդիսաւորութեամբ փաստաթղթերը ուղղակի այրել էին:

Սակայն, եթէ նոյնիսկ Օսմանեան արխիւնները չմաքրագերծըւէին, հայերի զանգուածային ոչընչացման մասին որոշում կամ ուղղակի հրահանգներ գտուար թէ հնարաւոր լինէր այստեղ գտնել. որոշումն ընդունուել է երիտրքական վերնախաւուի շատ նեղ շրջանակի կողմից, հրամանները հիմնականում բանաւոր էին եւ գաղտնի:

#### ՃԽԾՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ինչո՞ւ թուրքերը չեն ընդունում ցեղասպանութեան փաստը: Զէ՞ո՞ որ ժամանակին «Միութիւն եւ յառաջդիմութիւն» կուսակցութեան առաջնորդները դատապարտուեցին, այլ յանցագրութիւնների հետ մէկտեղ, նաեւ հայերի զանգուածային սպանութիւնները իրականացնելու համար: Նոյնիսկ Քեմալ Աթաթուրքն է բազմից խօսել այս թեմայով եւ դատապարտել կոտորածները՝ դրանք անուանելով «ամօթալի գործողութիւն» եւ պահանջելով պատճել մեղաւորներին: Այսինքն՝ տեսականօրէն կարելի է ընդունել հայերի ոչընչացումը՝ բացարեկով, որ այդ ոճրագործութիւնները կատարուել են Օս-

մանեան կայսրութիւնում եւ կապ չունեն ներկայիս թրքական հանրապետութեան հետ: Սակայն, իրականում թրքական պետական մեքենան եւ հասարակութիւնը կատաղի ձեռով ժխտում են սեփական մեղաւորութիւնը, եւ զրա համար կան հիմնաւոր պատճառներ: Այդ պատճառներին անդրադարձել են մի շարք հետազոտողներ, որոնք հիմնականում առանձնացնում են վախի երեք գործօն:

ա) Հատուցման վախը.

Հայերն Օսմանեան կայսրութեան մշակութային առումով ամենազարգած եւ տնտեսապէս ամենաշօր համայնքներից էին: Ցեղասպանութիւնից յետոյ այդ հակայական հարստութիւնն անցաւ նրանց կոտորածների կազմակերպիչներին եւ մարդասպաններին: Թրքական խոչընդագոյն առեւտրական ընտանիքներ եւ տնտեսական ընկերութիւններ իրենց հարստութեան կուտակման պատճութեան մէջ ունեն հայկական հետք: Հենց այս ուժերը մտավախութիւն ունեն, որ ցեղասպանութեան ճանաչումն իր հետ փոխատուցման պահանջ կը բերի: Փոխհատուցման հակայական չափերի պատճառով այն կարող է ձեւափոխուել տարածքային պահանջների, այն դէպում, եթէ թրքական պետութիւնն ի վիճակի չլինի վճարել պահանջուղ հատուցման գումարը:

բ) Հերոսների վարկաբեկման վախ.

Քեմալական շարժմանը միացել էին նախկին երիտթրքական կուսակցութեան բազմաթիւ անդամներ, որոնք դատապարտուել էին կառավարութեան կողմից, այդ թւում՝ նաև հայերի դէմ իրագործած ոճրի համար: Այս մարդկանց համար թրքական ազգայնական եւ յեղափոխական չարժմանը միանալը պատասխանատութիւնից խուսափելու միակ միջոցն էր: Հետագայում նրանք կարեւորագոյն պաշտօններ ստացան նոր թրքական հանրապետութիւնում եւ ամենակարեւորը՝ լրացրին նոր ստեղծուող հերոսական պանթէոնը: Օրինակ, Շուքրու Գայեան՝ Քեմալի ստեղծած ժողովրդա-հանրապետական կուսակցութեան գլխաւոր քարտուղարը եւ ներքին գործերի նախարարը, հայերի տեղահանութեան գլխաւոր պատասխանատուներից էր եւ բազմաթիւ անդամներ յայտարարել է գերմանական հիւպատուներին. «Մենք պէտք է ոչնչացնենք հայե-



Թրքական հակահայ ցոյց Նիս Եորքի Թավմզ հրապարակին վրայ. 2007-ին

բին», Մուսթաֆա Ապտուհալիք Ռինտան՝ հանրապետական շրջանում Ազգային ժողովի նախագահը, հազարաւոր հայերի էր ողջակեզել Մուշում: Ճշմարիտ պատճութեան պարագայում հանրապետութեան հիմնադիրները մարդասպաններ եւ յանցագործներ են ներկայանալու:

գ) Խննութեան նգնածամի վախ.

Խնդրի հանրային քննարկման հիմնական խոչընդուներից է արդի թրքական հասարակութեան ամբողջական յիշողութեան կորուստը: Երբ Աթաթուրքը ստեղծում էր նոր պետութիւն, նա իրական պատճութիւնը փոխարինեց պաշտօնական պատճութիւնով, որում պատերազմական պարտութիւնները եւ ազգային-կրօնական փոքրամասնութիւնների դէմ գործած արիւնալի ոճագործութիւններն ուղղակի չեն յիշատակում եւ այդպիսով հասարակութեան քննարկումներից դուրս են բերուում:

Կարելի է ասել, որ հայերին բնաջնջելով՝ օսմանեան առաջնորդները իրատեսակ կերպով վրէժինդիր էին լինում եւրոպական տէրութիւններից իրենց կրած նուաստացումների համար եւ ազատւում սեփական բարդոյթներից: Քեմալական առաջնորդները ոչ միայն մարդեցին այս տրամայի հետեւանքները, այլեւ կերա-

րարեցին պատճութիւնը եւ վերաձեւեցին ազգային ինքնութիւնը: Եւ այդ ժամանակուանից սկսած՝ թրքական պետութիւնն ինքն է ճնշում ցանկացած նախաձեռնութիւն, որը կը փորձէր վեր հանել «արգելուած պատճութիւնը»:

Հայոց Ցեղասպանութեան ընդունումը կ'ոչնչացնի բոլոր այն պատկերացումները, որոնց վրայ խարսխուած է հանրապետական թուրքիայի պատճութիւնը. այս դէպքում հակա-իմպերիալիստական պատերազմը դառնում է հայ եւ յոյն փոքրամասնութիւն դէմ պատերազմ, առաջին ժողովրդական ջոկատները՝ Կուվայ Միլլիye, որոնք ներկայացւում են իրեւ անկախութեան մարտիկներ, դառնում են ուղղակի Հայոց Ցեղասպանութեան զոհերի ունեցւածքի հաշուին հարստացած աւազակախմբեր: Ստացւում է, որ Մուսթաֆա Քեմալը ոչ թէ ազգային-ազատագրական պայքար է մղել եւ հիմնարկել թուրքիայի Հանրապետութիւնը, այլ ընդամէնը իրականացրել է երիտթուրքերի պահստային տարբերակը եւ բնաջնջելով հայերին ու յոյներին՝ ապահովել գոնէ մասնատուած կայսրութեան պահպանումը:

**ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ**  
Հայոց Ցեղասպանութեան թանգարանի  
փոխ տնօրին

## ՇողիկէԱ շողի'Ա հասանք

95-ամեակիւ սութիւն

**Մեծ եղեռնի իրականութիւնը մեր կեանքի անբաժան մասը կազմեց մեր ծնած օրէն, եւ պիտի կազմէ տակաւին դալիք սերունդներուն ալ կեանքին, մինչեւ որ ջնջուին բոլոր այն պատճառները, որ մեզի կ'արգիլեն մոռնալ զայն:**

1955 Ապրիլ 24-ին «Յուսաքը»ի մէջ նոր սերունդ վերտառութեան տակ լոյս կը տեսնէր մեր մամուլին մէջ հրատարակուած անդրանիկ յօդուածու՝ «Արեւի շողիկը» խորագրով։ Պատանեկան լաւատեսութեամբ յագեցած փոքրիկ գրութիւն մըն էր, ուր գիշերուան մթութենէն ետք կ'երեւի արեւին առաջին շողիկը ու գունու, քառամած ծաղիկները «կամաց կամաց կ'արքննան»։

**Պարզապէս երազատեսութի՞ւն, մարգարէութի՞ւն. ոչ այս, ոչ այն, այլ մեզի տրուած դաստիարակութեան արդիւնքն էր այդ՝ տան, գարոցին ու ակումբին, որ չկորսնցնենք մեր յոյսը, ապրինք բացուող այդեքացի մը տեսականով...**

Այս այն տարիներուն էր տակաւին, երբ Ապրիլ 24-ը սուզի օր էր, վերապրողները տակաւին կը յիշէին իրենց անմիջական հարազատները, զորս կորսնցուցեր էին հազիւ 3-4 տասնամեակ առաջ։ Սգատօն էր ոգեկոչումը, եւ ուրիշ ի՞նչ կրնար ըլլալ։

Առաջին հոգեփոխութիւնը պիտի գար տասը տարի անց, 1965-ին, Մեծ եղեռնի յիսնամեակին, երբ Հայաստանի մէջ երիտասարդութիւնը հրապարակ իջաւ «Մեր հողերը», «Մեր հողերը» վանկարկելով եւ Ծիծեռնակաբերդի յուշակոթողը բարձրացաւ, իսկ Սփիւրքի մէջ առաջին հանդիսաւոր երթերը սկսան՝ բազմահազար ազգակիցներու մասնակցութեամբ։ Նոր շունչ մըն էր, որ կը փէքր հայութեան հոգիներուն մէջ։

Աշխարհը կը շարունակէր մինչ այդ մնալ իր քար անտարերութեան մէջ։ Շատ արագ մոռացութեան էր տրուած մարդկութեան դէմ գործուած դարու առաջին մեծ Ոճիրը, իսկ ոճագործը տակաւին պատասխանատուութեան չէր կանչուած։

Եւ ահա, տասնամեակ մըն ալ անց՝ կը յորդէր համբերութեան բաժակը, կը քանդուէր լուսութեան պատը։

Հայ երիտասարդութեան բողոքի արտայայտութիւնները տարբեր ձեւեր կը ստանային եւ ուրիշ ամբողջ տասնամեակ մըն կը ցնցուէր աշխարհը ինքնազութեան այլազան արարքներով՝ մարդկութեան խիղճը արթնցնելու համար։

Ամէն արարքէ ետք թունդ կ'ելլէր նաեւ հայութեան սիրած՝ ի տես այն հերոսական ձիգին, որ ի գործ կը դնէին երիտասարդներ՝ յաճախ զոհելով նաեւ իրենց կեանքը։

Յետոյ... յետոյ արդէն պիտի չուշանար Արցախեան շարժումը, որ մեր մարդկային իրաւունքներու պաշտպանութեան նորագոյն պոութկումն էր, հայոց պատմութեան դիւցազներութեան նորագոյն էջը, իր անհամար զոհերով ու հերոսներով, իր պարտութիւն ու յաղթանակենքը։

Խորհրդային միութեան փլուզումը եւ Հայաստանի վերանկախացումը մեզ բոլորս դրին նոր իրավիճակի մը մէջ։ Եթէ մինչեւ 1991, Հայաստանի խորհրդային ըլլալու հանգամանքին պարտադրութեամբ, առաւելաբար կամ նոյնիսկ բացառաբար՝ Սփիւրքին էր վիճակուած Հայ դատը հետապնդելու առաքելութիւնը, ապա անկէ ասդին հայութեան իրաւունքները պաշտպանելու պարտականութիւնն էր, պէտք է ըլլար նաեւ հայկական պետականութեան առաքելութիւնը, առաջին հերթին հայկական պետականութեան առաքելութիւնը։

Սակայն դառն իրականութիւնը տարբեր պատկեր ստացաւ։

Անկախ Հայաստանը այդքան ալ անկախ չկրցաւ ըլլալ... եւ միջազգային ուժերը իրենց ներկայութիւնը մէկէ աւելի ձեւերով զգացուցին ու կը զգացնեն յատկապէս մեր երկրի արտաքին քաղաքականութեան ձեւառուման մէջ։

Եւ եթէ այսօր հայկական պահանջատիրութիւնը անխուսափելիօրէն այլեւս դրուած է քաղաքակա՞ն դաշտին վրայ, եւ եթէ Հայաստանի իշխանութիւնները, նոյնիսկ լաւգոյն տրամադրութիւններով, կաշկանդուած են այլազան պարտադրանքներով՝ տարածաշրջանին մէջ տիրող աշխարհագաղաքան նկատառութեան մէջ արագական պետականութեան ներկայացուցիչները՝ հաշուի առնել հայութեան երազները, տենչերը եւ իրաւացի պահանջները։

Իսկ մինչեւ ասիկա կարենան ընել անոնք ՀՀ վայել կեցուածքով, Սփիւրքը ինք պիտի շարունակէ արտայայտիչը հանդիսանալ այդ երազներուն, տենչերուն եւ պահանջներուն, ինչպէս ըրաւ ամբողջ 70 տարի՝ խորհրդային պաղպայնացման տարիներուն։

Ինք՝ այլեւս հասած քաղաքական հասունութեան, տիրացած անփոխարինելի փորձառութեան, գիտակից իր վրայ դրուած այդ ծանր պարտաւորութիւն։

Այո՛, Հայաստանի Հանրապետութիւնը, իր առկայութեամբն իսկ, գրաւականն է մեր երազանքին, եւ կասկած չկայ, որ զայն իր ներկայ աննախանձելի քաղաքական, տնտեսական թէ մշակութային վիճակին դուրս բերելը համազային պարտաւորութիւնն է, է միաժամանակ իւրաքանչիւր հայու պարտականութիւնը։

Հայոց դէմ ցեղասպանութեան՝ Մեծ եղեռնի 95-ամեակը առիթն է, որ ասոր գիտակցի իւրաքանչիւր հայ մարդ եւ իւրաքանչիւր հայկական կազմակերպութիւն։ Գիտակցին, համախմբուին ու Ազգին ամբողջական ներուժով պայքարին ի ինդիք մեր իրաւունքներուն եւ ամբապնեն գոյութիւնն ու անկախութիւնը մեր հայրենիքի այն փոքրիկ կոտորակին, որ արեւի չո՛ղն է, մեր պատմութեան այնքան երկար ատեն մթնցած երկնքին վրայ։

ՎՐԵԺ-ԱՐՄԵՆ

Օարածեցէք ձեր «Հորիկոն»ը [www.horizonweekly.ca](http://www.horizonweekly.ca)

# ԹՈՒՐՔ ԲԺԻՇԿԱՆԵՐՈՒ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒԽԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԷԶ

Հայ ժողովուրդի բնաջնջումը որոշուեցաւ, ծրագրուեցաւ եւ կազմակերպուեցաւ թուրք ազգայնամոլ քաղաքական եւ զինուորական ղեկավարներու կողմէ ու գործադրուեցաւ թուրք ջարդարար ամբոխին կողմէ:

Եղենը տեղի ունեցաւ համայն աշխարհի ականատես վկայութեամբ, քաղաքակիրթ ժողովուրդներու եւ երկիրներու լոռութեամբ ու կարգ մը պետութիւններու անմիջական մեղսակցութեամբ:

Այս հրէշային աշխատանքին իրենց անմիջական մասնակցութիւնը բերին թուրք բժիշկներէն շատեր, որոնք ունեցան հիմնական դերակատարութիւն եւ մեղսակցութիւն հայերը սպանդի ենթարկելու գործին մէջ: Անոնցմէ շատեր արդէն մաս կը կազմէին քաղաքական եւ իշխող ղեկավարութեան: Անոնք, համախորհուրդ կեղրոնական քաղաքական ղեկավարութեան հետ, կազմակերպեցին տեղահանութիւնը, ձերքակալութիւնները, տարագրութիւնը, թուրք ամբոխին հրահրումը եւ թուրք դահճճներու պատրաստութիւնը:

Աւելի՞ն, թուրք բժիշկները մոռնալով իրենց ասպարէզի նախահօր՝ Հիպոկրատի երդումը եւ բժշկական բարոյականութիւնը, կազմակերպեցին աննախընթաց, անմարդկային, անբարոյական, աննկարագրելի եւ ճիւաղային ոճիրներ՝ հանդէպ հայ ժողովուրդին եւ հանդէպ իրենց գործակից արհեստակից հայ բժիշկներուն, ամբողջ Օսմաննեան կայսրութեան տարածքին: Անոնք կ'առաջնորդուէին մոլուանդ ազգայնամոլութեամբ եւ հայ բժիշկներու գերազանցութեան, բժշկական բարձր մակարդակին, հմտութեան, դիրքերուն եւ պաշտօններուն հանդէպ՝ նախանձով: Երբումնագրուժ թուրք բժիշկներ իրենց ձեռքերը թաթիւնցին հայերու արեան մէջ եւ դարձան դահճճապետեր: Անոնց ոճարյին արարքները անջնջելի արատ մը ձեցին համայն բժշկական բարոյագիտութեան վրայ:

Թուրք բժիշկներու դերակատարութիւնը Հայկական Ցեղասպանութեան մէջ ի յայտ եկաւ յատկապէս 1919-ի թրքական զինուորական դատավարութիւններուն ընթացքին: Այս դատավարութիւնները տեղի ունեցան 1918-ի Դեկտեմբերէն մինչեւ 1919-ի Մայիսը, ընդհատումներով եւ մասնակցութեամբ իթթիւհատ կուսակցութեան հինգ ղեկավարներուն, որոնք լսեցին բոլոր վկայութիւնները եւ կատարեցին հարցաքննութիւնները: Զինուորական դատարանին եղրակացութիւններուն համաձայն հայկական ջարդերուն պարագուիները եղած են հետեւեալ երդումնադրուժ թուրք բժիշկները.

## 1.- ՏՈՔԹ. ՆԱԶԻՄ

Վկայեալ Պոլսոյ կայսերական բժշկական վարժարանէն եւ Փարիզի բժշկական համալսարանէն: Կարծ շրջանի մը համար եղած է Սալոնիկի թաղապետական հիւանդանոցին բժշկապետը: Ան եղած է իթթիւհատի կեղրոնական վարչութեան ղեկավար ուժերէն մէկը. անդամ հայկական տեղահանութիւններու եւ ջարդերու մասնաւոր



Տոքթ. Նազիմ եւ Պաշիտ Պէջ

յանձնախումբին ու վարած է Թուրքիոյ կրթական նախարարութիւնը:

Տոքթ. Նազիմի հրահանգով, հայերու սպանութիւնները գործադրուած են ընդհանրապէս հեռաւոր եւ ամայի վայրերու մէջ եւ ոչ թէ քաղաքներու եւ կամ գիւղերու մէջ: Ան նկատուած է դահճճը Պոլսոյ հայ մտաւորականներուն, կուսակցական ղեկավարներուն, աչքառու հայ բժիշկներուն: Ան իր վրէժը լուծած է բոլոր տաղանդաւոր հայ բժիշկներէն, որոնք գերազանցած էին թուրք բժիշկները: Տոքթ. Նազիմ հապատութեամբ յայտարարած է, որ ինք մէկ միլիոն ոճիր կատարած է հայերուն դէմ:

Զինուորական դատավարութենէն առաջ կը լրէ հայրենիքը եւ կը փախչի Գերմանիա: Իր բացակայութեան, ան մահուան կը դատապարտուի թրքական զինուորական դատարանին կողմէ, Յուլիս 5, 1919-ին:

Իր գործընկերոջ, հայերու ջարդարար Պէհաէտափին Շաքիրի ահաբեկումէն ետք (Արշաւիր Շիրակեանի ձեռքով, Ապրիլ 22, 1922-ին), տոքթ. Նազիմ Գերմանիոյ մէջ կ'ունենայ յաւելեալ գերմանական սոտիկանական հսկողութիւն: Ան կը վերադառնայ Թուրքիա, ստանալէ ետք թրքական իշխանութեան ապահովութիւնը եւ կ'ունենայ որոշ քաղաքական գործունէութիւն, սակայն շուտով կը ձերբակալուի եւ կը դատուի Անգարայի Անկախութեան Դատարանին կողմէ, ոչ թէ հայկական ջարդերը կազմակերպելուն համար, այլ իր գործած յետպատերազմեան հակահիւանական գործունէութեան համար: Տոքթ. Նազիմ մահուան կը դատապարտուի եւ կախաղան կը բարձրանայ Անգարայի մէջ 26 Օգոստոս, 1926-ին:

## 2.- ՏՈՔԹ. ՊԵՀԱԿԱՏՏԻՆ ՇԱՔԻՐ

Վարած է Պոլսոյ բժշկական դպրոցին բարոյագի-տութեան բաժանմունքին բժշկապետութիւնը: Ան եղած է ուսուցիչ Կայսերական բժշկական վարժարանին մէջ, իթթիւհատի կեղրոնական վարչութեան ղեկավարներէն մին, անդամ հայկական տեղահանութեան եւ ջարդերու մասնաւոր յանձնախումբին եւ ընդհանուր հրամանատարն ու



պատասխանատուն բոլոր սպանութիւններուն արեւելեան նահանգներուն մէջ: Տոքթ. Շաքիր իր դատավարութենէն առաջ կը լրէ թուրքիան եւ կը փախչի Գեղմանկա, ապաստան գտնելով Պերլին: Թրքական Զինուորական դատարանին կողմէ մահուան կը դատավարուի ի բացակայութեան, 13 Յունուար 1920-ին: Տոքթ. Շաքիր կ'ահաբեկուի Պերլինի մէջ, 17 Ապրիլ 1922-ին, հայ վրիժառու՝ Արշաւիր Շիրակեանի ձեռամբ:

Զինուորական դատավարութեան ընթացքին, վերոյիշեալ երկու դահճապետ թուրք բժիշկներուն դէմ վկայութիւններ ըրած են թուրք կարդ մը անձնաւորութիւններ, մասնաւորապէս թուրք զինուորականներ, կառավարիչներ եւ բժիշկներ: Ասոնցմէ կարեւորագոյնները եղած են՝ Վահիպ Փաշա եւ Էրզրումի կառավարիչներ Մունիր եւ Հասան Թահսին:

Հարցաքննութիւններու ընթացքին նազիմ եւ Շաքիր ամբաստանուած են 8 անգամ: Տոքթ. Շաքիրի դէմ ամբաստանութիւնները աւելի հիմնաւորուած են, երբ հարցաքննող իթթիհատականները յայտնաբերած են իրենց տրամադրութեան տակ ունեցած Շաքիրի մէկ հեռագիրը ուղղուած խարբերդի իր գործակիցին, որուն մէջ յստակօրէն կը բացայայտուի իր հիմնական դերակատարութիւնը հայկական ջարդերուն մէջ: Զինուորական Դատարանը հասած է հետեւեալ յստակ եզրակացութիւններուն.

Ա.- Երկուքը միասին ունեցած են առանցքային եւ հիմնական դերակատարութիւն հայկական ջարդերու կազմակերպումին եւ գործադրութեան մէջ.

Բ.- Միասնաբար կազմակերպած են յատուկ ոճրա-

յին խումբեր՝ գործադրելու համար հայ ժողովուրդի բնաջնջումը.

Գ.- Ոճրային խումբերու անդամները եղած են թուրք ոճրագործ դատավարական բանտարկեալներ, որոնք բանտերէն ազատ արձակուած են ներքին եւ արդարութեան նախարարութիւններու որոշումով եւ հրամանով.

Դ.- Ոճրային խումբերը պատրաստուած են բարձրաստիճան թուրք զինուորականներու կողմէ, գործադրելու համար հայ ժողովուրդի ջարդը: Իւրաքանչիւր խումբ կազմուած է 50-200 ոճրագործներէ, որոնք կոչուած են «չէթէ»:

Շատ մը թուրք իթթիհատական կարեւոր հեղինակներ, այդ օրերուն փաստած են այս երկու բժիշկներուն գերակատարութիւնը հայկական ջարդերուն իրականացման մէջ: Ասոնցմէ եղած են՝ Ֆալիհ Ռիֆքի Աթայ, թուրք պատմաբաններ՝ Շէվքէթ Սիւրէյյա Այտէմիր եւ Տօղան Աւսիօղու:

Գերմանական եւ Անգլիական փաստերը նոյնպէս մատնանշած են երկուքին կերպոնական դերակատարութիւնը ջարդերուն մէջ: Գերմանացի զօրավար Stange, որ զինակիցը եղած է Շաքիրին պատերազմի ընթացքին, խոստովանած է հայերու ջարդերու առնչութեամբ անոր դերակատարութեան մասին:

Գուիցերիացի պատերազմական թղթակից Ս.Զիւլինտէն գրած է, թէ ինչպէս տոքթ. Նազիմի եւ տոքթ. Շաքիրի կարգադրութեամբ, հայ զինուորական բժիշկները ձերբակալուելէ ետք կը չէզոքացուէին, այնպիսի ժամանակ մը, երբ թրքական բանակը կարիքը ունէր մեծ թիւով բժիշկներու:

### 3.- ՏՈՔԹ. ՍԻՒԼԷՅՄԱՆ ՆԷՄԱՆ ՓԱԾԱ

Վկայեալ Պոլսոյ կայսերական բժշկական վարժարանէն: Եղած է Իթթիհատի կարեւոր դէմքերէն մին, բարձրաստիճան զինուորական, ընդհանուր բժշկական հրամանատար ամբողջ թրքական բանակին եւ տնօրէն վիրաբուժական բաժանմունքին, բժշկական հաստատութիւններուն ու առողջապահական ծառայութիւններուն: Հայոց Ցեղասպանութեան կապակցութեամբ իր հիմնական դերակատարութիւնները եղած են հետեւեալները՝

Ա.- Էրզրումի, Սվազի եւ Երզնկայի առողջապահական մարմիններուն հրահանգելով՝ սպանել տուած է հիւանդ հայերը՝ թունաւորումով:

Բ.- Իր յատուկ հրամանագրով սպանուած են թրքական բանակի հայ բժիշկները եւ բանակի բժշկական եւ առողջապահական կերպուններու մէջ գործող բոլոր հայերը.

Գ. Հովանաւորած է ջարդարար թուրք բժիշկները եւ անոնց շնորհած է աստիճանի բարձրացում, այս բժիշկներէն եղած են՝ Ալի Սայիդ, Շէվքէթ, Սանի Եավէր, Ֆէրհուն, Համար Սիւլէյման, Ֆայէք, Զիա, Հասան Ֆոււատ, Քարամա եւ ուրիշներ:

Հետագային, տոքթ. Սուլէյման Նէման Փաշա կը ձերբակալուի, կը դատուի եւ կը դատավարուի իր գործած ոճիրներուն համար եւ մանաւանդ հայ բժշկներուն սպանութիւններուն համար: Կ'աքսորուի Մալթա:

### 4.- ՏՈՔԹ. ՖԱԶԻԼ ՊէՔՐԻ

Վկայեալ Պէքրի յատուկ բարձրաստիճան զինուորական: Սվազի մէջ հրահրած է թուրք եւ իսլամ ամբոխը հայերու դէմ եւ կազմակերպած է գաղտնի ոճրագործ կորիզներ Սվազի (Սեբաստիա) եւ Էրզրումի մէջ՝ հաւաքական ջարդեր գործադրելու համար հայերուն դէմ: Ան իր մասնակցու-

թիւնը բերած է Զօհրապի եւ Վարդգէսի սպանութեանց մէջ, Տիարպէքիրի ճամբուն վրայ: Անգլիացիներու կողմէ ձերբակալուելէ եւ դատապատուելէ ետք, 1919-ի Յունիսին կ'աքսորուի Մալթա:

#### 5.- ՏՈՔԹ. ՄԷՀՄԵՏ ՀԱՍԱՆ

Բանակային դեղագործ եւ բարձրաստիճան զինուորական: Ան կազմակերպած է թրքական բանակին մէջ ծառայող 2000 հայ զինուորներու սպանութիւնը Սահնա հովիտին մէջ: Ինք անձնամբ եւ իր ոճագործներու վոհմակը, առեւանգած եւ պղծած են 250 հայ աղջկներ: 1919-ի Ապրիլին կը ձերբակալուի անգլիացիներուն կողմէ եւ կ'աքսորուի Մալթա:

#### 6.- ՏՈՔԹ. ԱՀՄԵՏ ՄԻՏԾԱԹ

Կազմակերպած է Պոլսոյ տեղահանութիւնները: Տոքթ. Միտհատ կը ձերբակալուի եւ կը դատապարտուի 10 տարուան բանտարկութեան, սակայն աւելի ուշ անգլիացիներու կողմէ կը բանտարկուի Մալթայի մէջ:

#### 7.- ՏՈՔԹ. ՄԷՀՄԵՏ ՌԱԾԻՏ ՊէՅ

Ծագումով Զերքէզ, 1915-ին եղած է Տիարպէքիրի կառավարիչը: Տոքթ. Մէհմէտ խոստովանած է, թէ հակառակ իր բժիշկ ըլլալուն, դաւաճանած է բժշկութեան սկզբունքներուն եւ գործած է թուրք ազգի շահերուն համար:

Կազմակերպած է հարիւր հազարաւոր հայերու տեղահանութիւնը եւ անմարդկային չարչարանքներով սպանել տուած է անգէն հայեր: Անոր գործադրած չարչարանքները եղած են տեսակալոր.

- Անմեղ հայերու ոտքերուն գամել տուած է ձիու պայտեր եւ ստիպած է, որ անոնք տողանցեն փողոցներու մէջ:

- Կարմրած պայտեր գամել տուած է հայերու կուրծքերուն վրայ եւ հայ բանտարկեալներու գանկերը ճգմել տալիք ետք, անոնց մարմինները խաչափայտի վրայ գամել տուած է:

Տոքթ. Մէհմէտ հաւաքելէ ետք 800 անմեղ հայ մանուկներ հաւաքափայրի մը մէջ, կը հրկիզէ վայրը եւ հպարտութեամբ կը դիմէ 800 մատղաշ մանուկներու դիակները:

Յետպատերազմեան շրջանին կը դառնայ փախտական, սակայն կը ձերբակալուի եւ բանտարկուելէ ետք անձնասպան կ'ըլլայ:

#### 8.- ՏՈՔԹ. ԹէՎՖԻՔ ՌՈՒՇՏԻ

Եղած է տոքթ. Նազիմի անմիջական գործակիցն ու աներձագը: Անդամ առողջապահական բարձրագոյն մարմնին: Տոքթ. Թէվֆիք կազմակերպած է սպանուած հայերու դիակներուն անհետացման գործը: Իր հրահանգով թուրք զինեալները հաւաքած են սպանուած հայերու դիակները եւ զանոնք փոսերու եւ հորերու մէջ նետելէ ետք, ծածկած են կիրով:

Կը ձերբակալուի 2 Փետրուար 1919-ին, սակայն ազատ կ'արձակուի եւ բարձրաստիճան պաշտօններու կը տիրանայ մինչեւ 1938:

#### 9.- ՏՈՔԹ. ՄԷՀՄԵՏ ՌԵՖԻԴԻ

Ան եղած է ուսուցիչ Կայսերական զինուորական վարժարանին մէջ: Ավագի եւ երգնկայի մէջ մասնակից դարձած է հայ բժիշկներու ջարդերուն եւ փորձած է զանոնք իսլամացնել:



Տոքթ. Պէհականութիւն Շաքիր

#### 10. ՏՈՔԹ. ՖԷՄԻԴԻ

Բժշկապետ Տիարպէքրի Սիլվանի զինուորական հիւանդանոցին: Իր կիրքերուն զոհ գացած են շատ մը անմեղ հայ որբուհիներ:

#### 11.- ՏՈՔԹ. ԱԼԻ ՍԱՅԹԻՊ

Տրապիզոնի առողջապահական ծառայութիւններու տնօրին: Ան պատճառ գարձած է հազարաւոր հայ մանուկներու, որբերու, չափահաններու եւ յղի կիներու թունաւորումին, Տրապիզոնի Կարմիր Մահիկ հիւանդանոցին մէջ եւ շարք մը գպրոցներու մէջ: Այս անմեղ հայերը խարբելով, թէ պատուասի դեղ պիտի ներարկեն, անոնց մարմիններուն թոյն սրսկած են: Գտնուած են հայեր, որոնք մերժած են սրսկումները եւ տոքթ. Սայիս զայրացած, բոլորը խեղդամահ ընել տուած է ծովուն մէջ: Հիւանդ մանուկները չոգիով դարմանելու պատրուակով, զետեղուած են թունաւոր կազով լեցուն յատուկ սենեակներու մէջ, ուր բոլորը հեղձամահ եղած են:

Մաննիկ երազեան 26 Ապրիլ 1919-ին, Զինուորական զատապարութեան ընթացքին, մանրամասն նկարագրած եւ վկայութիւններ տուած է անչափահաս հայ մանուկներու թունաւորուման պարագաներուն մասին: Տոքթ. Ատենան, Տրապիզոնի առողջապահութեան թուրք տնօրէնը, Զինուորական զատապարութեան ընթացքին վկայած է որ հայ մանուկներուն թունաւորումը տեղի կ'ունենար թէ կարմիր մահիկի հիւանդանոցին մէջ եւ թէ գպրոցներուն մէջ: անոնց մարմինները սպանութենէ ետք կը զետեղուէին: Խոշոր կողովներու մէջ եւ ապա կ'ոչնչացուէին:

Տոքթ. Սահիպ կազմակերպած է նաև Տրապիզոնի քաղաքապետական հայագիտի բժիշկ տոքթ. Ասլանեանի սպանութիւնը էրգորումի ճամբուն վրայ: Տոքթ. Սահիպ, տոքթ. Ասլանեանի տիկնոջ տիրանալու համար, հայ բժիշկին ձեւականօրէն կը նշանակէ էրգորումի պետական բժիշկ: Տոքթ. Ասլանեան, իր բժիշկ եղբօր հետ դէպի էրգորում ու-

ղեւորութեան ընթացքին կը խոշտանգուի Ալի Սահակի ոճ-  
րագործ զինեալներուն կողմէ եւ եղբօր հետ կը սպանուի:  
Ֆրանսահպատակ գործարար, Լուիս Վիտալ, որուն կինը  
եղած է տիկին Ալանեանին քոյրը, Զինուորական դատա-  
վարութեան ընթացքին տուած է վերոյիշեալ վկայութիւնը:

#### 12.- ՏՈՒԹՅ. ՀԱՄԻՏ ՍՈՒԱՏ

Վկայուած Միւնիխի բժկական համալսարանէն եւ  
Պոլոյ Կայսերական վարժարանէն: Բծաւոր տեսդի փոր-  
ձարկումներու հեղինակ: Ան հայերը օգտագործած է որպէս  
«փորձարկման կենդանիներ»: Իրեն օգնած է տոքթ. Թէվ-  
ֆիք Սալիմ, որ եղած է դասախոս Կայսերական վարժարա-  
նին մէջ եւ բժշկապետ Օսմանեան Գ. զօրաբաժնին:

Երգնկայի կեղբոնական հիւանդանոցին մէջ,  
թուրք բժիշկներ, առանց որեւէ դիտական հիմնաւորումի,  
կատարած են բժշկական փորձեր հայ հիւանդներու վրայ:  
Անոնք առած են թիֆոյիտէ տառապող հիւանդներու  
արիւնը եւ ներարկած են հայ հիւանդներուն, որոնք հետա-  
գամ մահացած են: Այս տեղեկութիւնները առաջին ան-  
դամ աշխարհ լոյս բերած է տոքթ. Միհրան Նորայր, 15  
Դեկտեմբեր, 1918-ին, ամբաստանելով թուրք բժիշկները եւ  
տալով իր վկայութիւնները: Թրքական զինուորական դա-  
տավարութեան ընթացքին թուրք բժիշկներ տոքթ. Հայ-  
տար Քեմալ եւ տոքթ. Սալահատին տուած են իրենց վկա-  
յութիւնները ըսելով, որ իրենք անձնապէս ականատես  
եղած են այս անմարդկային եւ բժշկականօրէն անընդու-  
նելի արարքներուն:

Տոքթ. Հայտար Քեմալ Դեկտեմբեր 23 1918-ին  
բաց նամակ մը գրած է թուրքիոյ ներքին գործոց նախա-  
րարութեան ըսելով հետեւեալը. «Հայերու վրայ դիտական  
վայրագութիւններ կատարուած են Երգնկայի մէջ 1915-ի  
Դեկտեմբերին: Այդ թուականին Երգնկայի Գ. բանակի  
բժշկապետ Թէվֆիք Սալիմի հրամանով թիֆոյիտէ վարակ-  
ւած հիւանդներէն առնուած արիւնը առանց անգործոն  
դարձնելու (inactivate) կը ներարկուէն անմեղ հայերու եւ  
կը խաբէին զանոնք, որպէս թէ ներարկուածը թիֆոյիտը  
դարձնող դեղ է, բայց եւ այնպէս, անոնք կը մահանային  
այս փորձարկումներէն: Այս փորձարկումները բժշկակա-  
նօրէն պէտք էր կատարուէր միայն փորձարկման կենդա-  
նիներու վրայ: Այս արարքները կատարող տոքթ. Համտի  
Սուատ, թրքական զինուորական բժշկական թերթին մէջ  
գրած էր, թէ ինք այս փորձերը կ'ընէր սպանութեան դա-  
տապարտուած անհատներու վրայ, սպական ես կը վկայեմ,  
որ փորձակուողներու միակ յանցանքը՝ հայ ըլլալն էր: Այս  
փորձարկումներուն մօտէն տեղեակ են նաեւ այդ օրերու  
Երգնկայի Կեղրոնական հիւանդանոցի բժշկապետ՝ Տոքթ.  
Թէվֆիք Պէյ, ինչպէս նաեւ Երգնկայի Կարմիր Մահիկի  
բժշկապետ՝ տոքթ. Սելահէտափին Պէյ»:

Յաջորդ օրն իսկ, տոքթ. Սելահէտափին կարդալով  
վերոյիշեալ բաց նամակը կը հաստատէ, նոյն թերթին մէջ,  
որ ինք տեղեակ եղած է այդ դէպքերէն եւ այդ դէպքերը  
մարդկութեան եւ բժշկութեան համար ամօթալի կը նկատէ:  
Ան կը վկայէ նաեւ որ Երգնկա ապաստանող հայերը ոչ-  
խարներու նման Կեղրոնական հիւանդանոց կը զրկուէին,  
որոնց վրայ մանբէաբանութեան փորձարկումներ կը կա-  
տարուէին, դիտական փորձեր՝ որոնք միայն խոզի եւ ճա-  
գարի վրայ կը կատարուէին:

#### 13.- ՏՈՒԹՅ. ԳԱԼԻՔ

Եղած է Սվագի կառավարիչ: Զինուորական դա-  
տավարութեան ընթացքին կը բացայայտուի տոքթ. Ֆար-

քի մեկսակցութիւնը հազարաւոր հայերու մորթուելուն՝  
Սվագի մէջ: Արաբ հանրածանօթ անձնաւորութիւն մը, այս  
թուրք բժիշկին մասին տուած է հետեւեալ վկայութիւնը.

- Տոքթ. Ազիզ Պէյ անունով թուրք բժիշկ մը կը  
ներկայանայ Սվագի կառավարիչին՝ տոքթ. Ֆարքին եւ  
կ'ըսէ անոր. «ատարբերութիւն չկայ բժիշկիներու եւ մար-  
դասպան մսագործներու միջեւ, երկու խումբերն ալ կ'իրա-  
գործեն իրենց պարտականութիւնը դանակի գործածու-  
թեամբ. արտօնեցէք անձամբ տեսնել մարդասպաններու  
վիրաբուժական գործողութիւնները»: Տոքթ. Ազիզ Պէյի  
կ'արտօնուի եւ ան կը պատմէ իր տեսածը. «Հայ երեւելի  
ձերբակալուածներ խումբ առ խումբ, իւրաքանչիւր խումբ  
կազմուած 10 անձերէ, ոչխարներու նման կը ներկայանա-  
յին չորս թուրք մարդասպան-մսագործ դահիճներու, որոնք  
մէկ առ մէկ կը հարուածէին անոնց վիզերուն, մսագործի  
երկար դանակներով»:

\*\*\*

Վերոյիշեալ թուրք բժիշկներուն կողքին հետեւեալ  
թուրք բժիշկները զանազան գերակատարութիւններով  
մասնակից եղած են Հայկական Ցեղասպանութեան.


Իպրահիմ Թալի, Յուլատ Սապի, Հիւսէին Ռիզա,  
Ռիփքի, Սերպէթ, Հելմի, Ակտքի, Էրէկի, Իզգէթ պըն էմին,  
Ապտալլա, Ռուշտի Պէյ Պըն Հածի Հիւսէին, Պէսիմ Զուհտի,  
Միտհատ, Զիյա, Ֆէթհի, Ապտիւ Սալիմ:

Կարդ մը թուրք բժիշկներ անձամբ եւ կամ ուրիշ-  
ներու մեղսակցութեամբ սուտ բժշկական վկայագիրներ  
տուած են նահատակուած հայերու անունով: Օրինակի հա-  
մար, Ուրֆայի թաղապետական բժիշկ՝ տոքթ. Թահսին,  
բժշկական սուտ վկայագիր տուած է ըսելով, որ Գրիգոր  
Զօհրապ սրտի տագնապանութիւն ունենալը եւ ինք ըստ այնմ դարմանած է  
Զօհրապը: Այս սուտ վկայագիրն կողքին, ոճրագործ բժիշ-  
կը կը ստիպէ տեղւոյն քահանային, Վանէս Օղու Հայրա-  
պետին, որ վկայագիր մը տայ ըսելով, որ կրօնական օրինա-  
ւոր թաղում ըրած է Գրիգոր Զօհրապին: Տէր Վանէս քա-  
հանան պարտադրաբար այդպիսի վկայագիր մը կու տայ:

Այլ թուրք բժիշկներ կատարած են նաեւ անմարդ-  
կային եւ հրէշային անդամահատումներ հայ աղջիկներու  
վրայ, յագեցնելու համար իրենց սեռային կիրքերը: Շատեր  
խոստովանած են, թէ ինչ մեծ հաճոյքով եւ մոլեգնօրէն  
իրենց պապակը կը յագեցնէին 12 տարիքը չըոլորած հայ  
կոյս պարմանուհիներ պղծելով եւ բանաբարուած այդ աղ-  
ջիկները իրենց կողմէ սարքուած բագիններու վրայ զոհա-  
բերելով:

Թուրք ակնաբուժներէն ոմանք նոյնպէս ունեցած  
են մեծ գերակատարութիւն: Անոնք փոխանակ դարմանե-  
լու իրենց ներկայացած հայ հիւանդներուն աչքերը, գոր-  
ծածած են այնպիսի դեղեր, որոնք պատճառած են տեսո-  
ղութեան կորուստ: Այս բժիշկներէն մէկը, Գոնիայի մէջ  
հետեւեալը ըստ է իր թուրք գործակիցին. «Մենք պէտք է  
շաբաթը մէյ մը մէկ հայ կուրցնենք». այս խօսակցութիւնը  
լուուած է հայ հիւանդ մանուկի մը մօրը կողմէ:

Ամերիկացի բժշկուէի Մէյլար Ելլիոթ, որ գինա-  
գուլէն եաք աշխատած է Պոլսոյ մէջ որպէս բժշկական տնօ-  
րէնուհի «Միջին Արեւելքի խնամատարութիւն» կազմա-  
կերպութեան մէջ, իր յուշերուն մէջ գրած է. «լսեցի հազա-  
րաւոր անմեղ հայուհիներու պատճութիւնները եւ տեսայ



Սեբաստիան 1915-էճ առաջ

անոնց խորտակուած հոգեվիճակները, ինչպէս նաեւ անոնց յօշոտուած, այլանդակ եւ անդամահատուած հրեշտակային դէմքերը»:

Թուրք զինուորական մը, իր վկայութիւնները տուած է ըսելով. «Պիթիսի բոլոր հայերու տեղահանութենէն ետք, մնացած էին չուրջ 300 հայ պարմանուէիներ, որոնք պարտադրուած էին մնալ Պիթիսի եկեղեցւոյ մէջ եւ տրամադրուած էին թուրք զինուորականներու։ Այս զինուորականները յաճախ կ'այցելէին այս հայ պարմանուէիներուն եւ կը վարակէին զանոնք զանազան տեսակի սեռային հիւանդութիւններով։ Քաղաքին կառավարիչը տեսնելով այս իրողութիւնը որոշեց պատմել վարակուած հայ աղջիկները, որոնց պատիժը գործադրուեցաւ թունաւորումով եւ սպանութեամբ»։

Թուրք բժիշկներէն շատերը իսլամացումը պարտադրած են ոչ միայն հայ աղջիկներուն եւ չափահաս կիներուն, այլ նաեւ իրենց գործակից հայ բժիշկներուն որպէսզի խնայուի իրենց ջարդի գործադրումը։

Հայ բժիշկը անբաժան չմնաց հայ ժողովուրդի գողդություն։ Թուրքը չխնայեց հայ բժիշկը, որ իր կոչումին հաւատարիմ ծառայած էր հայրենիքին եւ թուրք ժողովուրդին։ Եղեռնի առաջին օրերուն, հայ բժիշկները իրենց արիւնակիցներուն հետ միասին ձերբակալուեցան, բանտարկուեցան, տարագրուեցան եւ խորագրուեցան եւ անմարդկայինքն չարչարուեցան ու խողխողուեցան թուրքի ճիւաղային, ջարդարար եւ արիւնարբու ձեռքերով։ Անոնք արժանապատութեամբ մաս կազմեցին հայ նահատակներու մեծ փաղանգին։

Հետեւեալ թուրք բժիշկները ուղղակիօրէն կազմակերպած են խումբ մը հայ վիրաբոյժներու, ակնաբոյժներու եւ ատամնաբոյժներու սպանութիւնները՝ Մէհմէտ Ասաֆ, Մէհմէտ Ռէֆի, Շէֆքէթ, Սանի եւ Ֆէրիտոն։

Թուրք բժիշկներ ուղղակի եւ կամ անուղղակի մելսակցութեամբ պատասխանատու կը նկատուին նուազագոյնը 70 հայ բժիշկներու եւ վիրաբոյժներու, 15 բժշկան հայ ուսանողներու, 73 հայ դեղագործերու, 14 հայ

ատամնաբոյժներու եւ անորոշ թիւով հայ հիւանդապահութիւններու սպանութեանց։

Սակայն մոռնալու չենք եւ երախտագիտութեամբ յիշելու ենք, որ գտնուած են որոշ թիւով բարեսիրտ եւ խղճամիտ թուրք բժիշկներ, որոնք հաստատ մնացած են իրենց կատարած բժշկական ձիպոկրատի ուխտին։ Անոնք պաշտպանած են իրենց գործակից հայ բժիշկներէն ոմանք, արգելք հանդիսացած են անոնց սպանութեան, դարմանած են շատ մը հայ հիւանդներ եւ օգտակար գարձած են անտէր հայ զանգուածներուն։ Անոնք խստօրէն քննադատած եւ գատապարտած են Հայոց Ցեղասպանութիւնը կազմակերպող եւ գործադրող թուրք բեկալարութիւնը։

#### Օգտագործուած Աղբիւրներ՝

1. «Ազգը չէ մենած եւ անհնար է որ մեննի, բանտի եւ ախորի տարիներ», Թէոդիկ, 1919, վերիրատարակուած 1985, Անքիլիսա.

2. «Մեծ եղենի նահատակ հայ բժիշկներ», Տոք. Գասպար Կարոյեան, Պոսքոն, 1957.

3. «Մէկ ու կէս միլիոն հայերու ջարդը», Արամ Անտոնիսան, Պոլիս, 1921, վերահրատակուած Պէյրութ 1978.

4. «Գրիգոր Զօհրապի կիանի եւ գրական ժառանգութեան էջերից», Ալբրտ Շարուրեան, Համազգայինի հրատակութիւն, 1997.

5. Recognizing the Armenian Genocide, Vol.1, booklet by United Comemoration Committee of Canada, 1995.

6. The role of Turkish physicians in the world war I Genocide of Ottoman Armenians, Holocaust and Genocide studies 1,2(1986), Dr. Vahagn N. Dadrian.

7. Children as Victims of Genocide: The Armenian Case, Vahagn N. Dadrian, Journal of Genocide Research 5,no.3 (September 2003) 421-437.

Պատրաստեց՝  
ՏՈՓԹ. ԿԱՐՊԻՍ ՀԱՐՊՈՅԵԱՆ

## 8 Փետրուար 1915-ին, Երիտթուրքերը որոշեցին գործադրել հայ ժողովուրդի բնաջնջման ցեղասպանական ծրագիրը

95 տարի առաջ, 8 Փետրուար 1915-ին, Օսմանեան կայսրութեան երիտթուրքական կառավարութեան պարագը-լուխները գաղտնի ժողովի հրաւիրեցին իրենց կուսակցութեան կելքոնական մարմինը՝ հայ ժողովուրդի բնաջնջման ցեղասպանական իրենց ծրագիրը գործադրութեան յանձնելու պատմական ծանրագոյն որոշումը կայացնելու համար:

Երիտթուրք կառավարութեան եռագլուխ զեկավարութիւնը կազմող Մեհմետ Թալեաթ (վարչապետ ու ներքին գործոց նախարար), Խսմայիլ Էնվեր (պատերազմի նախարար) եւ Ահմէտ Ճեմալ (ծովուժի նախարար եւ Սուլթոյ զինուորական կառավարիչ) փաշաները խուճապահար վիճակ ունեին: Կովկասեան ճակատի վրայ Էնվեր փաշայի զօրքերը ծանր պարտութիւն կրած էին: Թրքական պետութիւնը ինք պատերազմ յայտարարած էր Յարական Ռուսաստանի ու Անդրկամարդկանական պատմական զորքը 1914-ի աշնան թրքական զօրքը սկսած էր իր արշաւանքը, բայց Յունուար 1915-ին արդէն սկսած էր նահանջել եւ ոռուսական զօրքերուն ու հայ կամաւորական գունդերուն զիջիլ Արեւմտեան Հայաստանի նահանգները: Համբական շրջանի թրքական կառավարութեան անդիմամէտության ու ֆրանսամէտ քաղաքականութեան կոնսակ դարձուցած էր 1912-1913-ի Պալքանեան պատերազմի իր պարտութենէն վերականգնելու որոշումով, Կայսերական Գերմանիոյ հետ զինակցած թրքական իշխանութիւնները,

կանգնած էին անփառունակ նոր պարտութեան մը սեմին: Իթթիհատ վէ Թերաքքը (Միութիւն եւ Յառաջդիմութիւն) կուսակցութեան կերպունական Կոմիտէի 8 Փետրուար 1915-ի այդ գաղտնի ժողովին (որուն մանրամասնութիւնները բացայայտուեցան Առաջին Աշխարհամարտի աւարտին իթթիհատական իշխանութեանց յանցանքները մերկացնող դատավարութեան ընթացքին), էնվեր փաշա ահազանգ հնչեցուց թրքական պետութեան սպառնացող օրհասական վտանգին դէմ: Արեւմուտքէն եւ հարաւէն Անդլիան ու Ֆրանսան, իսկ հիւսիսէն ու արեւելքէն Ռուսաստանը պաշարման օզակը սկսած էին ծայր աստիճան սեղմել թրքական պետութեան շուրջ, որուն ուժասպառ անկումը անխուսափելի գարձած էր՝ արագացնելով Օսմանեան Կայսրութեան ամբողջական անդամահատումը: Ահա՛ նման ահազանգով թալեաթ-Էնվեր-Ճեմալ եռապետութիւնը երիտթուրք կուսակցութեան զեկավարութենէն պահանջեց իրագործման դնել հայ ժողովուրդի բնաջնջման նպատակով տարիներ առաջ մշակուած իրենց ցեղասպանական ծրագիրը:

Պատմաքաղաքական առանձին քննարկման նիւթէ է, թէ ինչո՞ւ իթթիհատը Պալքանեան պատերազմի օրերուն յլացած էր հայ ժողովուրդը ցեղասպանութեան ենթարկելու պատմական այդ ծանրագոյն յանցանքները:

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԵՍՊԱՆ ՄՈՐԿԵՆԹԱՌԻՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԵՐԻՆ

«...Թոյլ տուէք պատմել դէպք մը, որ նկարագրուած է մեր հիւպատոսներէն մէկուն տեղեկագիրներուն մէջ, եւ որ այժմ մաս կը կազմէ Ամերիկայի պետական արխիւներուն: Յուլիսի սկիզբը 2000 հայ ամելէներ, ինչպէս թուրքերը կը կոչեն աշխատաւորի վերածուած զինուորները, Խարբերդէն ուղարկուեցան ճամբաներ կառուցելու համար: Խարբերդի հայերը հասկցան՝ ինչ կը նշանակէր ասիկա եւ կառավարիչին գութը հայցեցին: Սակայն պետական ներկայացուցիչը շեշտեց, որ վնաս պիտի չհասնէր այլերուն եւ նոյնիսկ կանչեց գերմանացի միսիոնար պրն. էհեմանը, որպէսզի հանդարտեցնէր խուճապը, պատւոյ իր խօսքը տալով ազնիւ մարդուն, որ նախկին զինուորները պիտի պաշտպանուին: Պրն. էհեման հաւատաց կառավարիչին եւ մեղմեց ժողովուրդին մտավախութիւնը:

Այսուհետեւ, իրականութեան մէջ, 2000 այրերէն իւրաքանչիւրը սպանուեցաւ եւ մարմինները նետուեցան քարայրի մը մէջ: Քանի մը հոգի խոյս տուին եւ անոնց միջոցով սպանդին լուրը հասաւ աշխարհին: Քանի մը օր ետք 2000 այլ զինուորներ Տիրապետիր ուղարկուեցան: Այս մարդիկը երկին

տափաստանները ուղարկելու միակ նպատակը զանոնք սպանել էր: Եւ որպէսզի դիմադրելու ուժ չունենային կամ խոյս տալով չփախչէին, իսկդ արարածները կանոնաւոր կերպով սովի ենթարկուեցան: Կառավարութեան գործակատարները ճամբուն վրայ առջեւէն կը քալէին, քիւրտերուն լուր կու տային, որ կարաւանը կը մօտենար եւ անոնց կը հրահանգէին կատարել իրենց հաճելի պարտականութիւնը: Սովահար եւ տկարացած զօրամասին վրայ լեռներէն վար կը խուժին ոչ միայն քիւրտ այրերը, այլեւ՝ կիները, որոնք մսագործի դանակներով կը յարձակէին, որպէսզի քրիստոնեայ մը սպանելով՝ Աստուծոյ ուշադրութեան արժանանային: Այս ջարդերը առանձին պատահարներ չէին. կը նամ մանրամասնորէն նկարգրել բազմաթիւ այլ դէպքեր, որոնք նոյնքան ահաւոր են, որքան վերեւ պատմուածը: Թրքական կայսրութեան տարածքին կանոնաւոր փորձ մը կատարուեցաւ սպանելու բոլոր առողջ այրերը. նպատակը ոչ միայն վերացնել էր բոլոր այրերը, որոնք կը նային հայերու նոր սերունդ մը բազմացնել, այլեւ՝ դիւրին զոհի վերածել բնակչութեան աւելի տկարմասը...»:



Երիտրուրքերու ղեկավար մարմինը 1908-ին

գիրը։ Այսօր արդէն Թանէք Աքչամի օրինակով թուրք այլախոհ մտաւորականները իրենք կը շեշտեն, որ Օսմանեան Կայսրութեան ստոյգ կործանման եւ անդամահատման վասնգին դէմ յանդիման՝ թուրք ազգայնամոլ պետական մտածողութիւնը ընտրեց «Ներքին բիւրեղացում» առաջացնելու ուղին՝ թրքացել իր հասարակական շաղախը խանգարող հայերէն եւ ընդհանրապէս քրիստոնեաներէն Փիզիքապէս «Ճերբազատուելու» նպատակով... Հայաստանն ու հայութիւնը այդպէս հռչակուեցան թրքական մարմնին մէջ կազմաւորուած «օտար եւ կործանարար քաղցկեղ» մը, որ «արմատական վիրահատման» պէտք է ենթարկուէր։

Օրին, երբ իթթիհատական զեկավարութիւնը կ'որոճար հայ ժողովուրդը ցեղասպանութեան ենթարկելու ահաւոր այդ ծրագիրը, նման քայլի դիմելու «նպաստաւոր» պայմաններ չկային: Ընդհակառակն՝ եւրոպական դիւնագիտութիւնը մօտէն կը հետեւէր թրքական իշխանութեանց քայլերուն եւ, հայ ժողովուրդի ազգային-մարդկային իրաւունքներու պաշտպանութեան առաջարրանքով, արդէն ձեռնամուխ եղած էր հայկական նահանգներուն ինքնավարութիւն տալու եւրոպական ծրագրին գործադրութեան:

8 Փետրուար 1915-ի իթթիհատական դեկապարութեան գաղտնի ժողովին, թրքական պետութեան վրայ իրենց մենիշխանութիւնը հաստատած թալեաթներուն համար «Հաստնյած» կը թուէր «յարմար պահ» ը, որպէսզի գործադրութեան յանձնէին Հայկական Ցեղասպանութեան ծրագիրը:

Եւ իթթիհատական զեկավարութիւնը այսպիսի օր մը, 95 տարի առաջ, տուաւ հրէշային որոշումը։ Առաջա-

յուց յատուկ մարմին մը իր կազմէն, Պէհաէտափին Շեքբրի գլխաւորութեամբ, որ հայ ժողովուրդի ցեղասպանութեան գործադրութիւնը պիտի ծրագրէր եւ կազմակերպէր: Յատուկ այդ մարմինը լիազօրութիւն ստացաւ պետական վարչամեքենան իր յարմար դատած եղանակով օգտագործելու, նաեւ՝ զինեալ «յատուկ միաւոր» ստեղծելու, որպէս զի հայ ժողովուրդի բնաշնչումը կատարուէր առաւելագոյն արագութեամբ եւ ամբողջական բրտութեամբ:

կոյս արգագլուխամբ և ամբողջական բրտութամբ։  
Եւրոպան օրին պիտի չկարենար միջամտել, որով-  
հետեւ արդէն պատերազմի մէջ էր թուրքերուն դէմ։ Իսկ  
պատերազմի աւարտին, եթէ մինչ այդ թրքական պետու-  
թիւնը յաջողէր հայ ժողովուրդը բնաջնջելու իր ծրագրին  
գործադրութեան մէջ, արդէն անդամահատման անխուսա-  
փելիութեան հետ հաշտուած թուրք պետական մտածողու-  
թիւնը «մարսած» պիտի ըլլար զտարիւն թրքութիւն առա-  
ջացնելու իր «պատերազմական աւար»ր։

շայտան ըր Հպատականական աւարդութեամբ:

Եւ Պէհաէտին Շեքիրի գլխաւորութեամբ՝ իթթի-հատական «յատուկ մարմին»ը 95 ատրի առաջ, 8 Փետր-ուարին, անցաւ... գործի՝ առաջին հերթին բանտերէն ազատ արձակելով եւ զինեալ «յատուկ միաւոր»ի մը մէջ մէկտեղելով բազմահազար ոճրագործ թուրքեր, ապա՝ օսմանեան բանակին մէջ ծառայող հայ զինուորները զինաթափ ընելով եւ տաժանակիր աշխատանքի ու Փիղիքական հաշուեյրդարի ենթարկելով:

ՆԱԶԱՐԵԹ ՊԵՐՊԵՐԵԱՆ

## Սասոյ Զարդը

1915-ի Մայիսին սկսած էր կատաղի պայքարը, այժմ 1915 Յուլիս 15 էր: Երկու ամիս տեսող այս անհաւասար կոիւր շատ սուղի նստած էր ինչպէս Սասունցիներուն, նոյնպէս եւ թշնամիներուն:

Անդոկէն, որ բուռն ոմբակոծման ենթարկուած էր, այս հրէշային կրակին գէմ կոռուիլը անօգուտ էր, պէտք էր գրոհ տալ թշնամիին վրայ: Եւ ահա կը սկսի գիրկընդիմուն կոիւր, մինչդեռ թնդանօթները կը գոռային եւ խուճապի մատնուած կիներ, երեխաներ իրենց թաքստոցներէն դուրս ելած ատեն սրախողխող կ'ըլլային:

1915 Յուլիս 15-էն 22-ի ընթացքին սարսափելի կոիւներ տեղի ունեցան: Կիներ, երեխաներ, ծերեր օրհասական առիւծներու պէս Անդոկի գագաթներէն քարեր կը գլորէին դէպի Անդոկ բարձրանալ սկսող թշնամիներուն վրայ: Թնդանօթի որոտումին հետ մարդոց ճիչը, բազմաթիւ անսուններու բառաչը, ականջ կը խուլցնէին: Պերպերի եւ Գավլէրի հովիտները մարդկային դիակներով լեցուած էին եւ կ'արգիւէին գետի ընթացքը. ամբողջ եօթը օր Յուլիս 15-22-ին՝ Կ. գիրդի գետը իր բոլոր վտակներով արիւն կը հոսէր: Ոչ մէկ տեղ կարելի էր խմելու ջուր գտնել: Արիւնահոս գետի հոսանքին հետ կը քշուէին դիակներ, մարդկային անդամներ:

Վերջին օրհասական ժամերուն երբ գնդակ եւ փամփուշտ սպառելու վրայ էին, մէկ գնդակը չորս կտորի կը վերածուէր: Այդ խնայողութիւնն ալ անկարելի եղաւ: Մէկի մէկի ինկան անվեհեր հերոսները:

Կորիւնն ու Տ. Թորոսը երբ գիրքէ գիրք վազելով կը խրախուսէին զինուորները, գնդակահար եղան եւ ինկան հերոսաբար: Խուճապը սկսած էր եւ եօթն օրուայ կատաղի կոիւէ մը յետոյ Անդոկն ալ գրաւուեցաւ:

Միայն քանի մը տասնեակ կտրիճներ գաղտնի ճամբարով Խութէնի եւ Վահանի առաջնորդութեամբ Քան կոչուած լեռը գացին, ուրիէ յաջողեցան Կովկաս անցնիլ:

Անհամար կիներ եւ աղջիկներ ժայռերէն վար ձգեցին իրենք զիրենք: Թուրքերը Հայոց փոքրիկ մանուկները ոտքերէն բռնելով քարի վրայ խփեցին եւ փշրեցին անոնց գլուխները: Մեծ թիւով մանուկներ քարերու տակ պահուեցան իրենց մայրերուն կողմէ, ուր քանի մը օր յետոյ սովամահ մեռան:

Կառավարութիւնը ամէն կեանք փճացնելէ յետոյ, կրակի տուաւ հասուն եւ տհաս արտերը, որպէսզի հունձքն ալ փճանայ: Տուներու մէջ ցորենի հորերը հանուեցան եւ այրուեցան, որպէսզի եթէ մէկը իր թաքստոցէն դուրս գար սովամահ մեռնէր:

Շաբաթներով խուզարկութիւններէ ու գտնուածները սպանելէ յետոյ, վերահաս ձմբան սառնամանիքէն ազատելու համար՝ եւ այլեւս իր գործը վերջացուցած թրքական զօրքերն ու աշխէթները կը հեռանան Սասունէն, որ ծանրաբեռնուած էր դիակներով:

Սասունը ունի իր գարմանալի գաղտնիքները ու հրաշքները: Երկու ամիս տեսող ջարդերէն եւ անոր յաջորդող երկու ամսուան խուզարկութիւններէն յետոյ, դարձեալ Սասունը Սասունցիին կը մնար: Անդոկի ճգնաժամային բոպէներուն խուճապի մատնուած ամբոխը Կոչիկի եւ

Զըկնկոլի պէս տեղեր ապաստանելով 6-7000 հոգիի չափ ապատողներ եղած էին. ասոնք այժմ դարձեալ տէրն էին իրենց արիւնաներկ լեռներուն, որոնցմէ բնաւ ազատի չուզեցին:

Այսպէս 1914-ի աշնան սկսած ինքնապաշտպանութիւնը 1915-ի ամրան Յուլիսին իր սասակութեան գագաթնակէտին հասաւ: Այդ տարի լեռնականները երկար մաքառեցան, երկար յուսացին թէ ուռսերը իրենց օգնութեան պիտի հասնէին, բայց ամէն յոյս ի գուր էր եւ տեղի ունեցած էր անխուսափելին: Անդոկի անկումը, եօթնօրեայ սպանդը եւ արեան գետի յորդումը: Ոչ ոք անձնատուր ըլլալու մասին մտածեց, բայց այդ սխալն ալ եկաւ իր սոսկալի հարուածը տալու:

Յուլիս 15-22 աշաւոր սպանդէն եւ քանի մը շաբթուայ խուզարկութիւններէն եւ թրատումներէն պարտուած Լենկթիմուրի զաւակները հրճուանքով ետ կը դառնային: Ամէն բան լուած էր եւ մահը թեւատարած կը տիրէ ամբողջ Սասունի վրայ: Կամաց կամաց ստորերկրեայ քարանձաւներէն մեռելատիպ մարդիկ ուրուականներու նման դուրս կը սողային եւ իրենց սիրելիներու անհամար դիակներու մինակութիւնը տեսնելով լայն շունչ կը քաշէին:

Եւ քիչ չէր անոնց թիւը: Ասոնք ոչ մէկ բան գտնելով ուտեկու՝ սկսան սպանուած ոչխարիներու դիակները հաւաքիւէլ, ուտեկ մինչեւ որ ձիւնը եկաւ խլել այդ սնունդն ալ իրենց բերնէն: 5-6000 հոգիէ աւելի էր թիւը ջարդէն ապատուղներուն: Բայց վերահաս սովոր սկսաւ հնձել անոնց կեանքերը: Թուրքին պակաս ձգածը բնութիւնը եկաւ լրացնելու: Անտանելի գէպքերը անպակաս էին: Աղքիկ գիւղէն երեք հայեր իրենց 3-9 տարեկան զաւակները իրենց ձեռքով մորթեցին եւ կերան: Կելիկուզանցի եւ Տալւորիկցի քանի մը այրեր տեսնելով իրենց կիներուն եւ զաւակներուն անսւաղութենէ նուայումը, վերջ տուին անոնց կեանքերուն՝ իրենց խլ ձեռքերով խեղդելով զանոնք:

Լուսիկ անունով կին մը տեսայ որ նման պարագայի մը մէջ իր եղբօրը Տիգրանի ձեռքէն կը խուսափի եւ ամէն անգամ զայն տեսնելուն լեռները կը փախչէր:

Մկրօ Օսէեանը- այժմ էջմիածին է կը պատմէ- թէ ինչպէս ձիւն ձմեռուան մէջ երբ անկարելի էր կատու, շուն կամ որեւէ բան գտնել, արկեները հաներ է ոտքերէն եւ կրակի վրայ խսնձելով տասը օր անով անցուցեր է: Ուրիշ մը կը պատմէր, թէ ինչպէս իր վրայի այծի մորթին օրական ափի մը չափ կտոր մը կտրելով կը խսնձէր կ'ուտէր եւ օր մըն ալ մարմինը բաց կը մնար բուքին եւ ցուրտին ենթակայ: Նման անթիւ գէպքեր եւ զազրելի երեւոյթներ լեցուն էին:

Հատեր մահը աչք առած կը դիմէին քիւրտերու գիւղէր, կտոր մը հաց ուտեկու ու այնպէս մեռնելու: Երբ Դարբագի զազրելի գայմագամմը թալիպ էֆ. կը լսէ այդ բանը, իր մարդկեր կը զրկէ, այդ խեղճերը կը կանչէ եւ լաւ մը հագցնելէ ու կերակրել վերջ, կը բերէ Ղուրանը, ձեռքը անոր վրայ կը դնէ եւ կ'ըսէ:

- Կ'երդնում Մարգարէին եւ փատիշահին անուամբ, որ «ափ» եկած է բոլոր ազատածներուն, գացէք եւ որքան մարդ որ կայ Սասունը մէջ, հոս բերէք, թող փատիշահին աղօթք ընեն եւ հանգիստ ապրին:



Ու ամէն նոր եկող կուշտ ու հագուած ետ կը դառնայ, «ազատութիւն աւետելու»: Թալիպ էֆ լալով կը դիմաւորէր նորեկները. անձամբ կը սնուցանէր, հայրական խնամք կը տանէր, ու դժբախտ խեակները օրէ օր կը ստուարանային Դաբրդ գայմագամանիստ գիւղին մէջ ու մասնաւոր շէնքերու մէջ կը խնամուէին:

Մինչ ամէն մարդ կը պատրաստուէր թալէպ էֆ.-ին երթալ եւ վերջ տալ իր տառապանքին ու հանգիստ ապրիլ, քանի մը քաջեր, Մօրուք -Կարապետ Աւոյեան-, Չոլո Արբահամեան, Գամէի Համզէն եւ ուրիշներ թուրք նենգութեան տեղեակ, սկսան խնդրել, լալ եւ պաղատիլ որ չերթան իրենց ազատ կեանքը վտանգի տակ դնելու: Բայց շատերն ալ այս միտքը չափազանց յուետեն գտան: Անոնց կարծիքով ամօթ էր այլեւս կասկածիլ, երբ Ղուրանի վրայ երդում ըրած էր միւսիւլման Թալիպը:

1300 հոգիէ աւելի Սասունցիներ, այլ ու կին եւ երեխաներ Դաբրդ հաւաքուած էին, Թալիպ երբ տեսաւ որ նորեկներ չկան, կանչեց բոլորը եւ ըստ:

«Մուշէն հոս սննդեղէն բերելը դժուար ըլլալով, կառավարութիւնը Կ'ուզէ իր հնազանդ հպատակները հոն, քաղաքին մէջ խնամել»:

Թէեւ կասկած մը սկսաւ ծագիլ միամիտ լեռնական-ներուն մէջ, բայց Թալիպ էֆ.-ի քծնող եւ շողոքորթ լեզուն կը համոզէ գանոնք եւ այդ 1300-ոց ամբոխը ճամբայ կ'ինայ դէպի Մուշ:

Հազիւ հոն հասած էին, կառավարական շէնքին առջեւ այրերը եւ կիները զատ զատ -առաջինները մօս 300 հոգի-բանտ կը դնեն, իսկոյն կը շղթայեն, առանց կիներուն

զգացնելու, ըսելով որ Բաղէշ դրկեցինք: Իսկ կիները եւ մասնուկները -1000 հոգիի չափ- դէպի դաշտ կը տանին, իբրեւ թէ գիւղի մը մէջ բնակեցնելու: Բայց քանի մը ժամ յետոյ բոլորն ալ Մուրատ գետի եղերքը թափած կը դիտէին զիւրենք առաջնորդող զինուորներն ու սատիկանները, որոնք ետեւ կողմը անցնելով, կը սկսին հրայանաձգութեան ենթարկել խեղճ կիներն ու մասնուկները: Ոմանք ողջ ողջ գետի ալիքներուն կը յանձնուին, ոմանք գնդակահար կ'ինան: Ոչ մէկ անձ կ'ազատի, - բացի քանի մը գեղուհիներէ, որոնք թէեւ Մուշ կը տարուին, բայց քանի մը օրէն խոյս կու տան եւ բուք ու բորանին դէպի Սասուն կ'երթան հասնելու այն կտրիններուն, որ Թալիպի քծնանքներէն չէին խաբուած:

Այս անվհաստ քաջերու թիւը 2000-ը կ'անցնէր, որոնք գլխաւորաբար երեք տեղ կեղծունացած էին Կոչիկ, Արծուի Բոյն, Զկնկոյ եւ Գավրեսի ըսուած անմատչելի լեռներու եւ հսկայ քարանձաւներու մէջ: Քիւրտերու հետ ունեցած պատահական կուներէն իւրաքանչիւր կեդրոն բաւական զէնք ու սննդեղէն գրաւած էր եւ որովհետեւ ձմրան այդ եղանակին -1915 նոյեմբերէն 1916 Փետրուար-անկարելի էր այդ լեռներու վրայ յարձակիլ, սկսած էին գէթ չմեռնելու չափ ապրիլ: Իսկ երբ սնունդը կը վերջանար, խումբերով գիշերանց քիւրտ գիւղի մը վրայ կը յարձակէին եւ նոր սնունդ ու ոչխար կը բերէին: Այսպէս կ'անցնէին օրերը:

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՈՅԵԱՆ  
«ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱԼՊՈՄ» - (Դ)  
1961

## ԵՐԶԱԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ՝ ԶԱՐԴԵՐՈՒ ՄԱՍԻՆ (1915)

**ՀՅԴ Արխիւներու հիմնարկը վերջերս հրապարակեց փաստաբուղթ մը, որ կը վերաբերի Հայոց Ցեղասպանութեան: Հիմնարկը փաստաբուղթի իր ծանօթագրութեան մէջ կ'լսէ.**

**Երգնկայի առաջնորդը ընդարձակ տեղեկագիր մը յղած է Պոլսոյ Զաւէն պատրիարքին: Տեղեկագիրը կը կրէ:** Մայիս 12, 1915 թուականը եւ կը գտնուի ՀՅ Դաշնակցութեան Պալքաններու Կեդրոնական կոմիտէի թուղթերուն մէջ:

**Երգնկայի շրջանին մէջ տեղի ունեցող բրժական հարստահարութիւններուն ու շարդերուն մասին սահմոկեցոցիչ վկայութիւններ կան այս տեղեկագրին մէջ: Հոն կը նկարագրուին դէպէեր, որոնցմէ ոմանք տեղի ունեցած են 1915-ի Մարտին, ինչ որ անգամ մը ես ցոյց կու տայ, թէ Ապրիլ 24-էն շատ առաջ արդէն բրժական կառավարութիւնը սկսած էր ցեղասպանական արշաւը հայերու դէմ: Արխիւներուն մէջ այս փաստաբուղթը կը կրէ 882-9 կարգարիւր:**

**ԵՐԶԱԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՆԱՄԱԿԸ ԶԱՒԷՆ  
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ  
12 ՄԱՅԻՍ 1915**

**Ա.- Թէքէլիֆի համար ինչ որ առին թուրքերէն, տասնապատիկը առին հայերէն: Զիեր, չորիներ կը բերէին հայ վաճառականներու գրան առջեւը, ու ինչ որ կը գտնէին իսանութին կամ մաղազային (մթերանոց) մէջ, նոյնութեամբ կը բեռոցնէին ու կը տանէին, չոգ չէ թէ բեռոցուածներու շատերը, բաւական էր որ հայերու քով կը գտնուէին եւ անոնց մաղազինէն կը պարպէին: Իսկ երբ գրաւումի կարգը թուրքերու կու գար, քոմիսիոնի (բռնագրաւող յանձնախումբի) անդամները նախապէս անոնց լուր կու տային մէկ օր առաջ, թէ պիտի գային. ասոր վրայ, անոնք իսանութի ապրանքները տուն կը փոխադրէին: Իսկ եթէ ունէ հայ աննշան բան մը փոխադրելու ըլլար, փողոցներուն գլուխը կեցող գէտերը իսկոյն կը բռնէին ապրանքները, փոխադրողները կ'առաջնորդէին բանս եւ հոն խիստ խոշտանգումներէ յետոյ, կը զրկին Կարին՝ պատերազմական ատեանին: Շատ մը հայեր այսպէս ի զուր պատերազմական ատեան զրկուեցան:**

**Աշնան սկիզբները Լեփեան Գրիգոր էֆենտին մեծաքանակ կտաւ բերել տուած էր, այն ատեն գրաւեցին անոր 800 հակը, իսկ վերջերս տունն ալ խուզարկելով, մնացած բոլոր ապրանքները առին, տարին: Կառավարիչը բացարձակ չնորհ մը ըրած ըլլալու համար, Գրիգոր Լեփեանը պատերազմական ատեանին չյանձննեց:**

**Բ.- Քառեակի (բռնագրաւող յանձնախումբ) խորհուրդով եւ արտօնութեամբը, զինուորական մուճանաթի գրագիրներէն Հագգը պէյ, շուկային մէջ Սարգիս Ստեփանեանի վաճառատունը կը մտնէ եւ հոն կանչելով աչքի զարնող հայերը, երկու օրուան մէջ 800 ոսկի դրամ կը գանձէ, եւ իբրեւ ձեւակերպութիւն շատ աննշան գումար մըն ալ թուրքերէն կը գանձէ: Բնաւ յայտնի չէ, թէ այս գումարները ո՞ւր ծախսուեցան կամ ո՞ւր զրկուեցան: Քառեակը ամէն ինչ է այստեղ, ոչ ոքին իրաւունք առուած է անոր որոշումներուն կամ գործադրութեան դիտողութիւնընել, կամ հարցում ուղղել: Արդէն կողոպտուղը հայն է ու թէեւ հայը բերան ունի, բայց այս պարագային իր լեզուն բերնին մէջ չի դառնար:**

**Գ.- Շուկաները պարպելէ յետոյ, կարգը կու գայ տուներու խուզարկութեան: Զարագործ ոստիկանները ոչ**

արցունքի կը խնային եւ ոչ ալ զգացումի: Խուզարկութեան միջոցին, կիներու սնառուկներու զգեստները կը քրքրեն, զէնք ու պոմպա փնտոելու համար եւ պատահի որ պղտիկ զէնք մը կամ որսի հրացան մը ու փամփուշտներ գտնուէին, իսկոյն կը բանտարկէին եւ ծեծելէ յետոյ, կը զրկին պատերազմական ատեանին: Երեկոյ մը ուշ ատեն, Արամ Սրապեանը եւ Խնձորեկացի Փիլիպոսը կը տանին բանտ եւ այն աստիճան կը ծեծեն, որ շաբաթներով անկողնի կը ծառայեն: Մի քանի օր յետոյ, Աշամ Աշոտը կը ձգեն, իսկ Փիլիպոսը Կարին կը զրկին: Ֆերեղակ Սմանեան Հմայեակի տունը կը խուզարկէին, որ ամիս մը առաջ վարձած է եղեր: Տանը թոնիրի տակէին շատ հինէն մնացած ջրհորի նման փոս մը երեւան կ'ելլէ: Այս գիւտին վրայ Հմայեակը այնքան կը ծեծեն, որ ոտքի կենալու անկարող վիճակի կը մատնուի եւ 15 օր տունը հիւանդ կը պառկի: Երբ խեղճը անկողնին կ'ելլէ, անմիջապէս կը բռնեն ու բանտ կը կոխեն: Բանտին մէջ մահու չափ ծեծելէն վերջը, աքցանով մատներու եղունգները եւ գլխի մազերը բոլորը կը քաշեն: Խելակորոյ կ'ըլլայ եւ երբ ջուր սրսկելով կ'ուշաբերի, անընդհատ կը ծեծեն, զարցնելով թէ ի՞նչ պահ-ւած է փոսին մէջ:

